

1751

84

5

**Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

**Թ Է Հ Ր Ա Ն Ի Հ Ա Յ Ո Յ Հ Ա Մ Ա Յ Ն Ա Կ Ա Ն  
Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն**

Միամեայ գործունեություն 1914 | 15 տարեշրջանի.

(Ութերորդ տարի)

---

12628

Տպարան „ՓԱՐՈՍ“ Թեհրան.

12628

**Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

**Թ Է Զ Ր Ա Ն Ի Հ Ա Յ Ո Յ Հ Ա Մ Ա Յ Ն Ա Կ Ա Ն  
Վ Ա Ր Ձ Ո Ւ Թ Ե Ա Ն**

Միամեայ գործունեություն 1914 | 15 տարեշրջանի.

(Ութերորդ տարի)



Տպարան „ՓԱՐՈՍ“ Փեհրան.

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Ք .

Թերևս ապագայում հնարաւոր լինի տալ Համայնական Վարչութեան անցեալ ութը տարւայ գործունէութեան, երևոյթների և շօշափած խնդիրներին նկարագիրը, ուր երևան կգայ նաև Թէհրանի հայոց քաղաքական-քաղաքակրթական գիտակցութեան չափը: Առայժմ յոյս է ընծայւում մեր տեղեկագիրը ներկայ ծաւալով միայն, նպատակ ունենալով դիւրութիւն տալ մօտիկ և հեռու գանուղ այն անձանց և Պարսկահայ բոլոր համայնքներին, որոնք առհասարակ հետաքրքրուում են Թէհրանի հայոց ազգային-հասարակական գործունէութեամբ և քաղաքակրթական աշխատանքով:

Այս հրատարակութիւնը մի անհրաժեշտութիւն էր նաև այն պատճառով, որ, Թէհրանում հայերս դուրիկ լինելով պարբերական մամուլ ունենալու յարմարութիւնից, մեր շատ խնդիրներն ու ցաւերը մնում են անյայտութեան մէջ: Այդ իսկ պատճառով ընթերցողը կնկատէ, որ այս տեղեկագրի սրտը մասերում խօսքը մի տարւայ գործունէութեան սահմաններից դուրս է եկել:

Հաճելի է յուսալ որ, յատկապէս Թէհրանի հայ հասարակութեան բանիմաց տարրը, հակառակ սովորականին, աւելի հետաքրքրութիւն ցոյց կտայ իւր ներկայացուցչական մարմնի գործունէութեան նկատմամբ, և յատուկ ուշադրութեան առնելով ներկայ տեղեկագիրը, յօժարակամութիւն կունենայ առաջիկայ աշնանը գումարելիք ընդհանուր ժողովներին իր դիտողութիւններն ու քննադատութիւններն անելու, որոնցից, յուսով ենք, աւելի պիտի օգտւին Թէհրանի հայոց Համայնական Վարչութեան ապագայ կազմերը:

Թէհրանի ՀԱՅՈՑ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ .

Թէհրան Յուլիս 1 1915:

Յ Ա Թ Ա Ջ Ա Բ Ա Ն .

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ—ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ .

1907 թիւն Պարսից ազատագրական շարժումների ժամանակ ծնունդ առաւ Թէհրանի հայ իրականութեան մէջ „Ազգային Խորհուրդ“—ը, որ, հետևողութեամբ պարսիկ բազմազան անջուժաններին, կոչւեց „անջուժան-արամենէ“ (հայոց ժողով կամ խորհուրդ): Տարբերութիւնն այն էր, որ մինչդեռ անջուժանները զուտ քաղաքական խմբակցութիւններ էին, այն ինչ Ազգային Խորհուրդը տեղական հայերի ներքին ինքնավարական մի ատեանն էր լինելու և միաժամանակ պարսիկ անջուժաններին շարքում իբրև Թէհրանահայ հայերի մի ներկայացուցչական մարմին էր հանդիսանալու:

Սակայն եթէ պարսիկ անջուժանների կեանքն ու գոյութիւնը կապւած էր անպայման պետական ներքին կամ արտաքին քաղաքական երեւոյթների հետ, ընդհակառակն „հայոց անջուժանը“ զերծ մնաց այդ ազդեցութիւններից:

Ազգային Խորհուրդը շարունակելով պահել իր գոյութիւնը, այնուամենայնիւ տակաւին անկազմակերպ մի մարմին էր. և մեր ազգային շրջանում գոյութիւն ունեցող մարմինների շարքում հուսաւոր աստիճանի վրայ կանգնած էր իբրև մի անջատ մարմին կամ յանձնախումբ: Չունէր տակաւին սրտը գիրք դէպի պետական ատեանները, և յարաբերութիւնը միւս հասարակական և ազգային մարմինների հետ նայնպէս անորոշ էր:

Հետզհետեւ տարիների ընթացքում Ազգային Խորհուրդը զարգացաւ ներքուստ և արտաքուստ այնպէս որ թէ վարկը բարձրացաւ և թէ յարաբերութիւններն աւելի որոշակի եղան:

Սակայն „Ազգային Խորհուրդը“ տեղական միւս ազգային մարմինների հետ հուսաւոր աստիճանի վրայ կանգնած լինելուց աւելի բարձր կոչումն ունէր: Տարիների գործունէութիւնն ու փորձաւորութիւնը Ազգային Խորհրդին պիտի դնէին իր իսկական կոչման և բարձրութեան վրայ:

Եւ իրաւ 1911-ին սոցազրեց մի Հիմնական Կանոնագիր, և մինչ արդ  
 ,,Ազգային Խորհուրդը“ դարձաւ այնուհետեւ ,,Համայնական Վարչութիւն“: Ըստ այդ  
 կանոնագրի Համայնական Վարչութիւնն յայտարարեց և ընդունեց իրրև Թէհրանի  
 հայոց բարձրագոյն ատեանը, որը, հիմնւած դնւանական անխարականութեան  
 վրայ, հսկողի դերի մէջ մտաւ համայնական բոլոր հաստատութիւնների վերաբերմամբ:  
 Եւ այնուհետեւ նրան ենթարկեցան տեղական միւս սոցազրի-հասարակական բոլոր  
 մարմիններն ու ընկերութիւնները:

Ի դէպ ենք համարում յիշատակել այստեղ, որ Համայնական Վարչութեան  
 կազմակերպութեան և Հիմնական Կանոնագրի մշակութեան գործում կարևոր դեր  
 է ունեցել նախագահ Պ. Նիկոլ Աղբալեանը: Նա 1909/1912 թւականներին սոցազրին  
 երկսեռ դպրոցների տեսչի պաշտօնն ունէր Թէհրանում:

Ներկայումս Համայնական Վարչութեան կազմի մէջ մտնում են՝ հոգաբար-  
 ձական մարմինը և երկու եկեղեցիների երեցփոխներն ևս: Նախորդ տարիներում  
 անդամների թիւը 15 էր իսկ վերջին տարին 18.

Համայնական Վարչութեան գործունէութիւնը ընտրոշող կողմերն են՝  
 քաղաքական, օրէնսդրական, վարչական, դատական, նօտարական, փիճակա-  
 գրական, վերահսկել սոցազրին մարմինների և հասարակական ձեռնարկների վրայ  
 և այլն:

Թէ ինչ յաջողութիւն է ունեցել Թ. Հ. Համայնական Վարչութիւնը իւր  
 գործունէութեան բոլոր շրջաններում, առանձնապէս վերջին տարւայ ընթացքում,  
 թողնում ենք սոյն տեղեկագրի ընթերցողներին անել իրենց եզրակացութիւնները:

Գ.

Կ Ա Ջ Մ Բ Ե Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն Ն Ե Ր .

Համայնական Վարչութեան վերջին կազմի մասին խօսելիս պէտք է երկու  
 շրջանի բաժանել: Առաջինը՝ 1914-ի Յունիսից մինչև նոյն տարւայ նոյեմբեր  
 ամիսը. երկրորդը՝ նոյեմբերից մինչև ներկայ տարւայ Յունիսի վերջը:

Անցեալ աշնան վերընտրութիւնների հետեանքն այն եղաւ, որ 18  
 հոգուց բաղկացած կազմից դուրս - մնացին հետեակ 7 հոգին - Տիկիններ՝ Արու-  
 սեակ Պետրոսեան, Եւս Կարապետեան և Պարոններ՝ Ասատուր Արքահամեան,  
 Արամ Սահակեան, Մհարտղ Մինասեան, Յովհաննէս Բագալ և Տիգրան Ստեփանեան,  
 սրոնցից շատերն արդէն մինչ այդ աւել էին իրանց հրաժարականը:

Դրանց փոխարէն վերընտրութիւնների ժամանակ կազմի մէջ մտան  
 հետեակ 7 հոգին - Պարոններ՝ Ալէքսան Գալստեան, Զաքարիա Յակոբեան,  
 Յովսէփ խան Ղարախանեան, Մելքոն Քարամեան, Յովհաննէս Թովմատեան, Սիմէոն  
 աղա Կերէկեան և Տիգրան Հաճեան:

Վերընտրութեանց շարժառիթները կրկնակի էին. նախ՝ առաջին  
 ընտրութիւնները ըսկանւեցին, որովհետեւ կատարել էին հակառակ Թէհրանի  
 հայոց Հիմնական կանոնագրի արամտրութեան և հակառակ մեր մէջ ընդունւած  
 ընտրական սովորութեանց: Երկրորդ շարժառիթն այն էր որ, ինչպէս տեսանք,  
 6 - 7 հոգի կազմից պակասել էին. հետեարար նոր ընտրութիւնների պահանջը  
 հրամայական էր: Եւ իրօք, պէտք է խստաովանել, որ վերընտրութիւններն  
 ուժեղացրին Համայնական վարչութեան կազմը: Վերընտրութիւններից յետոյ  
 1914/15 տարեշրջանի ՀԱՄՅՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ կազմի լրիւ անւանացուցակը  
 հետեակին էր. —

- |                           |                               |
|---------------------------|-------------------------------|
| 1 Պ. Պ. Ալէքսան Գալստեան  | 10 Պ. Պ. Մելքոն Քարամեան      |
| 2 ,, Արսէն խան Մարգարեան  | 11 ,, Յարութիւն Ստեփանեան դր. |
| 3 ,, Արաաչէս Սահակեան     | 12 ,, Յովհաննէս Թովմատեան     |
| 4 ,, Գեղամ Սարգսեան       | 13 ,, Յովսէփ Բարայեան         |
| 5 ,, Գէորգ Պետրոսեան      | 14 ,, Յովսէփ խան Ղարախանեան   |
| 6 ,, Զաքարիա Յակոբեան     | 15 ,, Պետրոս խան Արքահամեան   |
| 7 ,, Ասոն Քովանեան        | 16 ,, Սարգիս Բարսեղեան        |
| 8 ,, Հայրապետ Խաչատրեան   | 17 ,, Սիմէոն աղա Կերէկեան     |
| 9 ,, Մատթէոս խան Մելիքեան | 18 ,, Տիգրան Հաճեան           |

Հերթական (46) և արտակարգ (6) ժողովների թիւն է 52: Առաջին շրջանի բացակայութեանց մասին 1914-ի աշնանը դումարած Թէհրանի հայոց ընդհանուր ժողովին զեկուցում արւած է. ուստի մենք կթւենք երկրորդ շրջանին վերաբերեալ 33 ժողովների բացակայութիւնները միայն, որի համաձայն ունեցել են. —

Պ. Պ. Ալէքսան Գալստեան	20	բացակայ,	7	ուշացում
„ Տիգրան Հաճեան	19	„ (2 հիւանդ)	1	„
„ Արսէն խան Մարգարեան	15	„	1	„
„ Արտաշէս Սահակեան	13	„ (2 հիւանդ)		
„ Մաթթէոս խան Մելիքեան	11	„	1	„
„ Մելքոն Քարամեան	11	„	1	„
„ Լեոն Քովանեան	11	„ (2 հիւանդ)	1	„
„ Հայրապետ Խաչատրեան	10	„ (! հիւանդ)		
„ Պետրոս խան Արրահամեան	9	„	5	„
„ Սիմէոն աղա Կերէկեան	8	„	3	„

(Ձեռն հաշւած վերջին 5 ժողովները երբ արդէն նա հրաժարական էր տուել):

„ Յովհաննէս Թովմասեան	8	բացակայ (1 հիւանդ)	1	ուշացում
„ Յովսէփ Բարայեան	5	„		
„ Յովսէփ խան Ղարախանեան	4	„		
„ Յարութիւն Ստեփանեան զր.	3	„	1	„
„ Ջաքարիա Յակոբեան	2	„	1	„
„ Գեղամ Սարգսեան	2	„ (հիւանդ)	1	„
„ Գէորգ Պետրոսեան				} չեն բացակայել.
„ Սարգիս Բարսեղեան				

Բացի համայնական վարչութեան անդամ լինելուց ՀՈԳԱՐԱՐՁԱԿԱՆ կազմի մէջ էին. —

Պ. Պ. Ալէքսան Գալստեան	Պ. Պ. Մելքոն Քարամեան
„ Գեղամ Սարգսեան	„ Յարութիւն Ստեփանեան զր.
„ Ջաքարիա Յակոբեան	„ Յովսէփ խան Ղարախանեան
„ Լեոն Քովանեան	

ԵՐԵՅՓՈՒՆԵՐՆ Էին.—

Պ. Արտաշէս Սահակեան՝ Ս. Գէորգ եկեղեցու, և Քեղխուզա Հայրապետ Խաչատրեան՝ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս եկեղեցու. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱՄԲԻ անդամներն էին.—

- Պ. Պ. Ասատուր Արրահամեան
- „ Հայկ Ասուածատրեան
- „ Նիկոլ Գալանդէրեան,

որոնք սակայն մի առժամանակ զործելուց յետոյ մեզ անյայտ պատճառներով դադարեցրին իրենց պաշտօնավարութիւնը:

Վերընտրութիւններից յետոյ համայնական Վարչութեան ներքին բաժանումների մէջ էին հետեւեալները.—

1. ԴԻԻԱՆԿԱՆ ՄԱՐՄԻՆ.—

- Պ. Պ. Միրզա Սարգիս Բարսեղեան՝ նախագահ
- „ Գեղամ Սարգսեան՝ փոխ-նախագահ և ժողովների կառավարիչ
- „ Գէորգ Պետրոսեան և
- „ Յովհաննէս Թովմասեան } քարտուղարներ
- „ Յովսէփ Բարայեան - գանձապահ.

2. ԳԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ.—

- Պ. Պ. Արսէն խան Մարգարեան
- „ Պետրոս խան Արրահամեան
- „ Սիմէոն աղա Կերէկեան

3. ՀԱՂԻԵՏԵՍ ՄԱՐՄԻՆ.—

- Պ. Պ. Ջաքարիա Յակոբեան
- „ Յովսէփ Բարայեան:

Գ.

Օ Ր Է Ն Ս Դ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Փ Ի Ն .

1. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ.

Համայնական Վարչութեան Հիմնական կանոնադիրը § 15-ի համաձայն չորս տարին մի անգամ փոփոխութեան կարելի է ենթարկել: Նկատելով որ այս տարեշրջանում լրանում է չորրորդ տարին, ուստի Համայնական Վարչութիւնը ցանկանում էր այս տարեվերջին այդ կանոնադիրը ներկայացնել Քէհրանի հայոց ընդհանուր ժողովին վերաքննած ձևով, գործունէութեան չորս տարւայ փորձառութեանց հիման վրայ կատարած փոփոխութիւններով հանդերձ: Սակայն ցուելով սկեք է խոստովանել, որ վարչութիւնը հնարաւորութիւն չէ ունեցել լրիւ շափով իւր նպատակին հասնել այդ ուղղութեամբ: Այս տարւայ զարնան ամիսներում մանաւանդ այնքան ժամանակակից առօրեայ կարևոր խնդիրներ ու հարցեր են առաջ եկել, որ շատ ժողովներ ներքել կանոնադրի վերաքննութեանը կարելի չէ եղել: Հետևաբար այդ վերաքննութեան աշխատանքը կիսակատար է առայժմ և մի լրիւ ամբողջութիւն չներկայացնելու պատճառով հրապարակ չենք հանում:

Այստեղ պարտք ենք համարում ակնարկել հետևեալ հարցի մասին: Նկատելով որ, մարմինների գատ-գատ ընտրութիւնը թէ՛ ժամանակ է խլում, թէ՛ ոյժերի անօգուտ սպառումն է առաջ բերում և թէ՛ ձանձրացնում է ժողովրդին, ուստի առաջարկում ենք Քէհրանի հայոց ընդհանուր ժողովին կատարել համայնական Վարչութեան ընտր անդամների ընտրութիւնը միաժամանակ. թողնելով որ սպա ամբողջ կազմն իր միջկց ընտրէ հոգարարձուներ, երեցփոխներ և այլ յանձնախմբեր:



2. Ն Ե Ր Ք Ի Ն Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն .

Համայնական Վարչութիւնը մշակել է այս տարի մի «, ներքին կանոնադրութիւն», 55 յօդաձից բաղկացած, որ վերաբերում է զիւանի անդամների պարտականութիւններին և վարչական ժողովների ներքին կարգ ու կանոնին: Այդ կանոնադրութիւնը փոփոխելի է ըստ հաճութեան Համ. վարչութեան կազմի: Ուստի թողնելով ամբողջ կանոնադրութեան յիշատակութիւնը, մէջ կրերենք այստեղ միայն բացակայութեանց վերաբերեալ մասը, առաջարկելով Ք. Հ. Ընդհանուր ժողովին ի քննութիւն և ի հաստատութիւն:

§. 53 ժողովի կողմից առանց արգարացուցիչ համարած գրաւոր կամ բերանացի պատճառի՝ երկու անգամ յաջորդաբար ժողովից բացակայող անդամին զիւանի կողմից արւում է գրաւոր ազգարարութիւն: Եթէ երրորդ անգամ զարձեալ բացակայէ, այդպիսին նկատւում է հրաժարած:

ԾԱՆՈԹ. 1. Քաղաքից երկար ժամանակ բացակայելու և ծանր հիւանդութեան գէպրում — երբ բացակայողը կամ հիւանդը հնարաւորութիւն չունին գրաւոր ներկայացնելու իրենց պատճառարանութիւնը — բացակայութիւնն ընդունել արգարացուցիչ:

2. Մօտակոյ ամառանոց գնալը չէ համարւում քաղաքից բացակայութիւն:

3. Որեւէ ժողովից բացակայութեան մասին բացատրութիւն կարելի է տալ մինչև յաջորդ ժողովի գումարումը:

§. 54. Պարբերաբար բացակայողները, եթէ ամէն մի եռամսեակում տեղի ունեցած ժողովներից առանց արգարացի պատճառի կէսից աւելին բացակայած լինեն, կհամարեն հրաժարւած:



### 3. ԱՂԲԱՏԱՆԵԱՄ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Աղբատախնամ վարչութեան գործունէութեան մասին մենք առանձին կիսօտենք. այստեղ մէջ ենք բերում միայն կանոնադրութիւնը 15 §§-ից բաղկացած, որ հեռեկան է.—

1. Աղբատախնամ վարչութեան նպատակն է վարել Թէհրանի հայ աղբատաներին օգնելու և նպատակներ տալու գործը:

2. Վարչութեան կազմի մէջ մտնում են՝ համ. վարչութեան ներկայացուցիչը, երկու երեցփոխները և մի-մի հօգի էլ անգլիս Կանանց Բարեգործական և Օրփորդաց Խնամատար՝ ընկերութեանց ներկայացուցիչները:

ԾԱՆՕԹ. Վարչութեան մէջ ձայնի իրաւունք վերապահւած է առհասարակ աղբատաների հարցով զբաղուող բոլոր ընկերութիւններին:

3. Յօգուտ աղբատաների ժողոված և կտակած գումարները—լինեն եկեղեցական, զանազան մարմինների և կամ անհատական ձեռնարկութեանց արգիւնքը—բոլորը հաւաքուած են վարչութեան մօտ և այդ գրամները մտնում են աղբատանց գումարի մէջ:

4. Աղբատան ֆօնդը պահւում է բանքային հիմնարկութեան մէջ ընթացիկ հաշուով:

5. Դրամներն ստացուած են այդ հիմնարկութիւնից՝ նախապահի և զանձապահի ստորագրութեամբ՝ և ծախուած համաձայն վարչութեան որոշման:

6. Թէհրանի շրջանում յօգուտ աղբատաների լինելիք բոլոր ձեռնարկութիւնները լինում են վարչութեան զիտութեամբ և վաւերացմամբ:

7. Վարչութեան զիւանի անդամներն են՝ նախապահ, քարտուղար և զանձապահ:

8. Երեցփոխներից իւրաքանչիւրի և զանձապահի մօտ առձեռն գրամ պէտք է մնայ ոչ աւելի քան 5 թուման:

9. Այդ առձեռն գրամը պէտք է ծախուել միմիայն կարեօր և անյետաձգելի զէպքերում և վարչական յաջորդ նիստում զեկուցուած և հաշիւ առ:

10. Մինչև համայնական ընդհանուր սուրբերի որոշելը և կեանքի մէջ իրագործելը, երեցփոխներն իրաւունք ունին վարչութեան զիտութեամբ և ծրագրած ձեռք նոր-ճարտան և Զատիկին յօգուտ աղբատաների եղած հանգանակութիւնը շարունակել:

11. Աղբատախնամ վարչութիւնը տարին երկու անգամ, վեց ամսից-վեց ամիս, պէտք է հաշիւ ներկայացնէ համայնական վարչութեանը. իսկ տարեվերջերին նաև իր տեղեկագիրը:

12. Աղբատախնամ վարչութիւնը պարտաւոր է գործադրել համայնական վարչութեան որոշումներն ու ցուցմունքներն իրեն յանձնուած գործի նկատմամբ:

13. Վարչութեան անդամներն ընտրուած են մի տարով. փոփոխուած են իրենց ընտրող մարմինների ցանկութեան և որոշման համեմատ:

14. Աղբատախնամ վարչութիւնն ունի իր առանձին կնիքը:

15. Վարչութիւնը հերթական ժողովներ ունենում է առնագն երկու շաբաթը մի անգամ:

Ե.

ՇՆՁԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՉԿԱՅԻՆ ՏՈՒՐՔ.

1. ՇՆՁԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԷՋՐԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎԱԳԻՒՆ.

Ուրախութեամբ պէտք է յիշատակենք, որ այս տարի մի շատ կարևոր խնդիր իրականացած է Համայնական Վարչութեան համար: Դա ԹէՋրանի ընդհանուր հայ ժողովրդի շնչագրութեան գործն է: Այս շնչագրութիւնը կատարելիս զեկազարեկ ենք այն ձևով, որով ամէն մի ամուսնացած զոյգ կամ ծնող իրենց զուակները հետ միասին նկատուում են իրրե մի ընտանիք-իսկ այն աները կամ օղբավաճառանոց-ները, ուր բնակուում են մէկ կամ իրար հետ ազգակցական կապ չունեցող երկու կամ աւելի մարդիկ, այդպիսի աները չեն նկատուած իրրե ընտանիքներ. այլ այդ կարգի անհատների անունները պիտի կազմել մի առանձին ցուցակ: Այդ ցուցակի մէջ պիտի մտնեն նաև այս կամ այն ընտանիքում առժամանակեայ ապրող անհատներն ինչպէս նաև ծառաներն ու ազախիները:

Այդ առեակէտերը նկատի ունենալով մենք մի քանի տեղեկութիւններ թւումք ԹէՋրանի հայ ընտանիքների ընդհանուր թիւը՝ 1915-ի առաջին երեք ամիսներում՝ էր 575—2905 շնչով, տունը 5 հոգի:

Արական սեռին պատկանում են 1505, իգական՝ 1400:  
Դպրոցական երկսեռ աշակերտութեան թիւն է 645,  
որից աղջիկներ 324, իսկ տղաներ 321:  
Սեպհական տուն ունեցողների թիւն է 146, այսինքն 25%:

1. Ըստ դաւանութեան ԹէՋրանի հայ ընտանիքները բաժանուում են. —

լուսաւորչական	543	ընտանիք
աւետարանական	16	„
կաթոլիկ	15	„
օրթոդոքս-ուսուաղաւան	1	„

2. Ըստ հպատակութեան բաժանուում են. —

պարսկահպատակ	496	ընտանիք
ուսահպատակ	44	„
տաճկահպատակ	28	„
անգլիահպատակ	3	„
խալաֆահպատակ	3	„
դիքերահպատակ	1	„

3. Ըստ թաղերի բաժանուում են. —

Դարվազա-Չահ-Արդիւլ-Աղիւմ	27	ընտանիք
Դարվազա-Ղազիւն	96	„
Չաղալարաղ	114	„
Հասամարաղ	256	„
զանազան թաղամասերում	82	„

4. Ըստ պարագմունքների բաժանուում են. —

գործակատար	118	ընտանիք	հիւան	5	ընտանիք
օղբավաճառ	102	„	ուսուցիչ-ուհի(2)	5	„
անգործ*)	84	„	կառավար	4	„
վաճառական	57	„	մեքենագործ	4	„
գերձակ-ուհի(9)	52	„	սովորիչ	4	„
հեռագրիչ	26	„	բաղնիստան	3	„
ծառայ-խոհարար	18	„	կառք շինող	3	„
ազախին					
մշակ-բանուոր	13	„	հիւրանոցատէր	3	„
երկրագործ					
զեղագործ	9	„	ակնավաճառ	2	„
զիւղական կապալաւու	8	„	ստամարայժ	2	„
կամ գիւղատնտես					
զինուորական	8	„	գրաշար	2	„
կօշկակար	6	„	ժամկոչ	2	„
րժիշկ-ուհի (1)	5	„	լացարարուհի	2	„
կահագործ	5	„	ծխախոտավաճառ	2	„

\*) Ծանօթ. Անգործ ընտանիքները երեք կարգի կարելի է բաժանել. —  
 1. Իսկական անգործներ.  
 2. Հաստատուն եկամուտ ունեցող անգործներ.  
 3. Տան ներկայացուցիչ անդամը թէև անգործ է, բայց երկրորդական անդամներից աշխատուորներ կան:

միջնորդ	2	ընտանիք	թէյալաճառ	1	ընտանիք
ներկարար	2	„	լուսանկարիչ	1	„
սափրիչ	2	„	կառք տահաղ	1	„
տպարանատէր	2	„	հնալաճառ	1	„
քարածխալաճառ	2	„	նկարիչ	1	„
ղաշնամուր նորոգող	1	„	նպարալաճառ	1	„
երածիշտ-խմբապետ	1	„	փաստարան	1	„
թառ շինող	1	„	քահանայ	1	„

Համայնական վարչութեան ձեռնարկած այս շնչագրութեան գործը շատ շնչին բացառութեամբ համարեա բոլոր ընտանիքներում էլ ընդունեց յարգանքով և հաճութեամբ տեսցին իրենց ցուցմունքները. միայն 2-3 հայ-կաթոլիկ ընտանիքներ չուղեցան ցուցակազրուել մեզ անյայտ պատճառներով:

2. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐԲԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ.

Հիմնական կանոնագրի § 3-ի համաձայն. —

„ Իւրաքանչիւր 21 տարեկանից վեր հայ անհատ առանց սեռի խտրութեան պարտաւոր է իր կարողութեան համեմատ որոշ՝ ազգային, եկեղեցական և գաղութական տուրք վճարել:

Ծանօթ. 1. Տուրք չվճարող անհատները զրկոււմ են քէ տալու և ստանալու իրաւունքից:

Ծանօթ. 2. Իւրաքանչիւր հայ պարտաւոր է ազգային տուրք վճարել իւրաքանչիւր լուսաւորչական՝ եկեղեցական տուրք, և հայկական գաղութներում երեխայ ունեցող իւրաքանչիւր անհատ՝ գաղութական տուրք:“

Այդ յօդուածի գործադրութեամբ կարելի պիտի լինէր հոգալ սովորական ընթացիկ ծախսերը, այլ և թէ մեր գաղութներն տեղի պիտի ապահովէին դրամապէս, թէ քահանաները սոսիկ սեննային, և թէ ազքատիկ ընտանիքները ձրի բժշկութիւն ստանային:

Այդ նպատակին հասնելու համար մշակեց նաև մի ծրագիր, որի համաձայն ըստ կարողութեան Թէհրանի հայութիւնը բաժանուում էր 10 աստիճանաւորութեան: Սակայն գծրագրարար մեր տեղական հարուստները համայնական վարչութեան այդ որոշմանն ընդդառ չհեղան: (Առաջին դասակարգին պատկանողները պիտի վճարէին 100 - տկան թուման տարեկան):

Եւ այսպէս տուրքերի գանձման համար եղած առաջին քայլն անյաջողութեան հանդիպեց:

Այնուհետև Հ. վարչութիւնն իր իսկ գրասենեկային սահմանափակ ծախսերի համար սախպուած էր գտնէ ձեռնարկել միայն առաջին տեսակի՝ այն է „ազգային“ տուրքերի գանձմանը, որովհետև վարչութիւնն այլ որևէ եկամուտի դրական աղբիւր չունէր:

Պէտք է խստառականել, որ թէև այս մէկ տուրքը հասարակութեան մի մասը գտնէ պատրաստակամ է եղել վճարելու, սակայն վարչութեան կազմերը

Թոյլ են գտնել գանձման խնդրում: Այդ Թուրքիանը թացատրում է նրանով որ գանձատրահները „յարմարութիւն“ չեն սնեցել:

Այդ է գլխաւոր պատճառը, որ տուրքեր ստացել են շատ անկանոն կերպով: (Առաջին տարիների ծախսերը հողացել են համարեա „Ազգային Խորհրդի“ անդամների սեպտական միջոցներով): Այնուհետեւ,

1910 - ին	տուրք տել են	76	հողի	դուան	824
1911 - ին	„ „	19	„	„	362
1912 - ին	„ „	249	„	„	2032
1913/14 - ին	„ „	278	„	„	2616

Այս հինգ տարիների համար ուրեմն միջին հաշուով ստացել է տարեկան 1164 դուան միայն:

Վերջին երկու տարւանը գանձել է այս տարի շնչազրութիւն անելիս: Այսպէս թէ այնպէս ուրեմն 575 բնտանիքներից վերցրել են միայն 278 անդորրագիր: Այդ նշանակում է, որ շատերը ոչինչ չեն վճարել: Տուրք չվճարող շատ բնտանիքներ պատրուակ էին բռնում իրանց ներկայի չքաւորութիւնը կամ անյաջողութիւնը, և կամ աւարկում էին, որ տան աշխատաւորը նոյն ժամին քացակոյն է անից կամ քաղաքից: Մենք նախանցեալ տարիների նման ստիպւած ենք այժմ ես շեշտել և հասարակութեան յուրջ ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ Համայնական Վարչութեան կատարելիք գործերը յաճախ դրամական ծախսեր են պահանջում: Ահա այդ ծախսերը ծածկելու համար հասարակութիւնից ամէն մի տուն, աւելի հոսա ամէն մի աշխատաւոր անհատ, պէտք է ամենայն հաճութեամբ տայ իր բաժին „ազգային տուրք“: Այն քանակը, որ պէտք է ամէն մի հայ աշխատաւոր անհատ թէ՛հրանում վճարէ, մի մեծ գումար չէ. օրինակ՝ վերջին անգամ տուրքերը 6 աստիճանի էին. ամենաշատը 24 դուան, ամենաքիչը 1 դուան: Սակայն այդ փոքրիկ գումարների բնդհանուր քանակը կարեւոր նշանակութիւն սնի Համայնական Վարչութեան անհրաժեշտ ծախսերը ծածկելու համար: Հասարակութեան այն սոււր մասը, որ միշտ հեռու է կանգնած հասարակական գործունեութեան սահմաններից, պէտք է իր բարոյական պարտքը համարէ, գոնէ փոքրիկ գումարներով դիւրութիւն տալ հասարակական աշխատանքով դրադուղ մարմիններին:

82221  
55251

Համայնական Վարչութիւնը յոյս ունի, որ այս տուրքերի վճարման խնդրում թէ՛հրանի ժողովուրդը կվերարերւէ աւելի լրջօրէն: Թող հասարակութիւնը լինի վճարող և ապա պահանջուած՝ բնդհանուր ժողովներում, հաշուաւորութեան ժամանակ, թացատրութիւն ուզելով իր վճարած տուրքերի և կատարած ծախսերի համար:

Մեզ թւում է, որ պէտք է այնքան դրամական միջոցներ տալ Համայնական Վարչութեանը, որքան կպահանջէր, եթէ, ենթադրենք, մի առաջնորդարան ունենայինք թէ՛հրանում:

Այս մտքի հետ պէտք է անպայման հաշուել: Որովհետեւ իրօք կատարւում է այնքան բան, որ գոնէ մի վարդապետի ծախքի չափ բիւզէ պէտք է ունենար Համայնական Վարչութիւնը:

Հետզհետեւ գրաւոր գործերն այնքան են շատանում, որ մի գրասենեակ ունենալու պահանջը շատ դժար է. մի գրասենեակ, որ ամէն օր տայ լինէր առաւօտից մինչև երեկոյ: Արիւր մեծանում է. կանոնաւոր պահով պահելու համար հարկաւոր է ազատ ժամեր նւիրել այդ գործին:

Չնչազրութեան կամ վիճակազրութեան գործը յարատե մի աշխատանք է պահանջում: Անհրաժեշտ է նաև ուշադրութեան առնել երկու եկեղեցիների չափաբերական մատեանների կանոնաւորութեան գործը, որ մինչև այժմ կատարում են պատահական ծխական քահանաները:



Չ. Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Բ Ա Փ Ի Ն .

1. ԹԷՆՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ.

Առթից օգտելով մենք կտանք այստեղ մի բանի տեղեկութիւններ ԹէՆՐԱՆԻ այժմեան երկու լուսաւորչական եկեղեցիների տեղերի և սկզբնաւորութեանց մասին, որից կպարզւի նաև ԹէՆՐԱՆԻ ընտանիքին հաստատած առաջին հայերի պատմութիւնը.

Գրանցից ամենահինը՝ Ս. Գէորգ եկեղեցին, որ գտնուում է քաղաքի արևմտահարաւային մասում, Գարվազա-Ղազարին կոչւած թաղում, 1790-1795 թւականներին շինել են այն 7 տուն հայերը, որոնց իբրև գերի կամ պատանգ Ղարաբաղից բերել է ԹէՆՐԱՆ Աղա Մօհամմէա խան ներքինի Չահը, այժմեան թագաւորոյ Ղաջար հարստութեան հիմնադիրը: Իսկ համարեա մի ասանակ տարի գրանցից առաջ, այն է 1785 թւականին, ԹէՆՐԱՆը մայրաքաղաք էր յայտարարել: Այնուհետև Ս. Գէորգ եկեղեցին 1882-ին վերաշինել է և մեծացր:

Երկրորդը՝ Ս. Թագէոս և Բարդուղիմէոս եկեղեցին, որ գտնուում է այսօր քաղաքի արևելահարաւային մասում, Գարվազա-Չահ-Արդուլ-Աղիմ թաղում, շինել են 1808-ին այն 10 տուն ազակեզարծ (Չամբու) հայերը, որոնք Փաթալի Չահի օրով Նոր-Ջուղայից եկել էին ԹէՆՐԱՆ արքունի պալատների շինութեանց առթիւ:

Թէև սկզբնական շրջանում այդ հայ աներն իրանց հիմնած եկեղեցիները շրջապատում են ընտանիքին հաստատել, և, որովհետև Պարսից կառավարութիւնն առանձին թագաւասեր չէ սահմանած եղել հայ ժողովրդի համար, ուստի յետագայում նորեկ ընտանիքներն ըստ անձնական շահերի և յարմարութեան ընտրել են յայնարձակ ԹէՆՐԱՆԻ մէջ իրանց ցանկացած տեղերը յաճախ վերստերով իրարից հեռու:

Այս վերջին երեսիթն, ի դէպ, պէտք է ասել որ, այսօր շատ աննպաստ կողմեր ունի մեր տեղական հասարակական հաստատութիւնների և գործերի կանոնաւորութեան համար:

Թէ համեմատաբար խաղաղ տարիներում, Ջատիկան և Ջրօրհնեաց տօնա-

խմբութիւնների առթիւ, թէ քաղաքական խառնաշփոթ շրջաններում, միշտ էլ հրապարակ է եկել, ինչպէս համախմբւած լինելու, նոյնպէս և եկեղեցիներին մօտիկ լինելու պահանջը. բայց դժբախտաբար այդ դրութիւնը սակաւին մնացել է անփոփոխ:

Թէ որքան ցրւած են ընտանիքում հայերը ԹէՆՐԱՆԻ, այդ քիչ յետոյ կտեսնենք. իսկ առայժմ ասենք, որ Ս. Գէորգ եկեղեցու շրջապատում համարեա հայ աներ չկան: Այսօր Գարվազա-Ղազարինում գտնուած 96 ընտանիքները շատ ցրիւ և հեռու են ընտանիքները իրանց եկեղեցուց:

Ս. Թագէոս և Բարդուղիմէոս եկեղեցու շրջակայ թաղերում էլ ցրւած են հազիւ միայն 27 տուն օղեվաճառ հայ ընտանիքներ:

2. Ծ Խ Ա Բ Ա Փ Ա Ն Ո Ի Թ Ի Ն .

Վիճակագրութիւնից տեսանք, որ այժմ ԹէՆՐԱՆԻ հայերի ճնշող մեծամասնութիւնը ընտանիքում է Չաղարազ և Հասանարազ՝ երկու կից թաղերում — 370 ընտանիք. իսկ քահանաները տեղաւորւած են յիշեալ եկեղեցիների բակում գրւում քահանաներում: Այս հեռաւորութիւնների և ցրւածութեան պատճառով ծխական քահանաների մէջ յաճախակի ծագում են վէճեր ծուխերի բաժանման առթիւ: Այդ վէճերի մի մասն էլ ծուխերի որակին է վերաբերում:

Ճնշագրութեան մի այլ նպատակն էր ծուխերի բաժանման հարցը պարզել: Ըստ նոր բաժանման Ս. Գէորգ եկեղեցու ծուխերը գտնուում են Գարվազա-Գումբուրի խիւանից (լայն փողոց) Փարման-Փարմայի խիւանով մինչև Խուսփարազի խիւանի Չհարուհ-Աղիլիան մասը:

Այդ գծի երկու կողմի սահմանների մէջ գտնուում են. — Չահր-Նով, Ջէննաթ-Գօլջան, Ամիրիա, Բող-Չահի խիւան, Սանգէլաջ, Գօղար-Թաղի-խան, Ջալիլ-աբազ, Մարիլխանայի յետի փողոցները, Պօլիօլիկի Չհարուհը մինչև Ամիրիկական եկեղեցին և Չհարուհ-ա-(ղա)-Չէյխ-հաղի:

Ս. Գէորգ եկեղեցու ծուխերի ընդհանուր թիւն է 272:

Ս. Թագէոս և Բարդուղիմէոս եկեղեցունը՝ 271, որոնք ցրւած են քաղա-

քի արևելեան և հիւսիսային մասերում, Չահ-Արդիւ-Ազիմ թաղից մինչև Խուսիֆ-արազի դարվազան (քաղաքադուռն): Գլխաւոր մասերն են՝ Դարվազա-Գուլար, Փայը-Ղափուզ, Փայը-Մաշին, Սար-Չէշմէ, Երարնեքի թաղը, Չրազ-Բարդի փոսոց, Բառաւրնեքի թաղը, Մէջլիսի շրջակայքը, Դարվազէ-Չիմրան, Խիւսան-Չէնի, Չահարազ, Չազարարազ, Խիւսան-Լօխա, Լալազար, Ալազովլէ, Անդլիական դեռ-պանատան շրջակայքը, Չհարուահ-Քօնիթ, Չհարուահ-Մօխրէր Գովլէ, նախկին Աթարէզի Փառքի շրջակայքը, Հասանարազի Հալոց գաղթոցի շրջակայքը, մինչև Ամերիկական ժողովարանը և Խուսիֆարազի-Դարվազայից մինչև Չհարուահ Ազիղխան:

3. ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՌՈՃԿԻ ՀԱՐՅՐ.

Մեր ծխական քահանաները տակաւին անուճիկ են պաշտօնավարում և այդ իսկ պատճառով նրանք այս անցեալ տարւոյ ընթացքում իրանց նիւթական վիճակի բարւոքման և բնակարանները յարմարեցման մասին հարց էին յարուցել: Այսպէս թէ այնպէս եկեղեցական-քահանայական խնդիրների կանոնաւորութեան պատճառով վիճակագրութիւնից անմիջապէս յետոյ կազմուց նաև եկեղեցական-ծխական տուրքերի վերաբերեալ մի ծրագիր Թէհրանի հայոց առաջիկայ ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: Ըստ այդ ծրագրի եկեղեցական տարեկան տուրքերը ծուխերի վրայ բաժանուում են այսպէս.—

200-ական դռան տալիս են	9	ընտանիք	1800	դռան.
150 „ „ „	8	„	1200	„
100 „ „ „	30	„	3000	„
50 „ „ „	84	„	4200	„
30 „ „ „	82	„	2460	„
20 „ „ „	115	„	2300	„
10 „ „ „	156	„	1560	„
ոչինչ չեն տալիս	59	„	—	—
ընդամենն ուրեմն տալիս են	543	ընտանիք	16,520	դռան.

4. ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ.

Քաղաքիս քահանաները նախորդ տարիների սովորութեամբ անում էին խնքնագլուխ կարգադրութիւններ այնպիսի խնդիրներում ու հարցերում, որոնք վերաբերում են Համայնական Վարչութեան իրաւասութեանը. որ. բերանացի և կամ գրաւոր վկայութիւն տալ այս-այն դէպքի առթիւ զանազան ապեաններում, միջնորդել այս-այն վէճի մէջ մէկի կամ միւսի օգտին, միջամտել ժառանգական գործերին, վաւերացնել կտակ և այլն:

Նկատելով որ այդպիսի ընթացքն առհասարակ մնասկար է և հակառակ Հիմնական Կանոնագրի ոգուն, ուստի Համ. Վարչութիւնը հարկ համարեց Գործակալ քահանայի միջոցով հրահանգել անգլիս ծխական քահանաներին, որ յիշեալ դէպքերում, երբ զիմում են անում մէկ կամ միւս քահանային, սրանք պէտք է հրաժարեն մասնակի միջամտելուց և միշտ պիտի մասնացոյց անեն Համայնական Վարչութեան վրայ:

5. ԶԵՅՈՒՅՈՒՄ ԵՐԵՅՓՈՒՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Տեղեկագիրը թէև երկու թաղի եկեղեցիների անունից է ստացւած սակայն աւելի մեծ տեղ է արւած Ս. Գէորգ եկեղեցու զործողութեանցը. իսկ Ս. Թաղէ-սո և Բարդուղիմէոս եկեղեցու մասին ընդհանրապէս քիչ բան է ստւած:

Երկու եկեղեցիների ստատիստիկից երևում է, որ Թէհրանի հայերը (2905 հոգի) միջին թւով տարեկան ունենում են.—

պտակ-ամուսնութիւն	22=1,5%
ծնունդ	100=3,4 <sup>1</sup> / <sub>2</sub> %
մահ	46=1,6%

ուրեմն ծնունդը համարեա 2<sup>0</sup>/<sub>0</sub>-ով աւելի է:

Ընդհանրապէս երեցփոխների հաշիւներից երևում է, որ, թէև երկու եկեղեցիներն էլ հաւասար ծուխեր ունեն և եկամտաւոր աղբիւրներն էլ նոյնն են, սակայն, խոշոր տարբերութիւն կայ մուտքերի և ծախքերի մէջ. այսպէս. —

Ս. Գէորգ եկեղեցին ունեցել է՝		Ս. Թաղէոս և Բարդ. եկ.	
մուտք դռան	6,043.15	մուտք դռան	2,435.50
եւր	5,814.10	եւր	2,145.50
Ս. Գէորգ եկեղեցին ,,Աղքատախնամ“-ին յանձնել է		,,	1,129. —
Ս. Թ. և Բ. եկ.	,,	,,	765. —
Ս. Գէորգ եկեղեցին Հոգաբարձութեանը	,,	,,	300. —
Ս. Թ և Բ. եկ. Հոգաբարձութեանը ոչինչ չէ կարողացել տալ:			

Ըստ ինքեան այս համառօտ պատկերից երևում է, որ շատ մուտք ունենալը զախումն ունի երեցփոխի գործունէութիւնից. իսկ այս բանում երեցփոխութեան պաշտօնն ստանձնելու օրից աչքի է ընկել առանձնապէս պ. Արտաշէս Սահակեանը: Երկու եկեղեցիների հաշիւների մանրամասնութիւնը սոյն հրատարակութեան վերջին բաժնում կարելի է գտնել:

6. ՀՍՍՆԱԲԱՆԻ ԹԱՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ՉԻՆԵԼՈՒ ՀԱՐՅԸ.

Ինչպէս նկատեց ընթերցողը, այսօր Թէհրանի հայոց երկու լուսաւորչական եկեղեցիները բաղդի բերմամբ գանւում են լքած-առանձնացած իրանց հաւատացեալ համայնքներից. այն ինչ Թէհրանի հայ հասարակութեան 2/3 մասն այժմ խմբւած է Հասանաբազ և Չաղալարազ իրար կից թաղերում և եկեղեցի յաճախելու համար մի քանի անյարմարութիւններ ունի:

Ս. Թաղէոս և Բարդուղիմէոս եկեղեցին հեռաւորութեան պատճառով հազիւ միայն նոյն սրբերի տօնի օրը քաղաքիս հայերից մի քանի մարդիկ յիշում են այդ եկեղեցու գոյութիւնը:

Ս. Գէորգ եկեղեցին, որ այսօր համեմատաբար աւելի յաճախւած է, ընկած է բացարձակապէս մահմետական տներով շրջապատւած մի վայրում, զիսաւոր լայն փողոցից հեռու մի յետ ընկած նեղ փողոցում, ուր, առհասարակ միշտ և մանաւանդ տօնական օրերին, անցուգարձի համար խիստ նեղածութիւն է առաջ գալիս: Կառուցւած լինելով մի շրջանում, երբ Թէհրանի հայերը շատ սակաւաթիւ էին իսկ այսօր բազմապատկել են, եկեղեցի յաճախող հասարակութեան մեծ մասը հանդիսաւոր օրերին ժամերգութեան ընթացքում ստիպւած է դուրսը բախում անցկացնել ամբողջ ժամանակը:

Վերջին մի քանի տարիները քաղաքիս հիւսիսային թաղամասերում նոր եկեղեցի շինելու պահանջը խիստ զգալի է դարձել: Այս միտքը թէև յաճախ արծարծւել է, բայց գործնական մի բան չէ կատարել տակաւին:

Ի դէպ կարելի է յիշատակել այստեղ, որ 1914 թիւ Յունւար ամսին մի խումբ մարդիկ դիմելով Համ. Վարչութեանը, Հասանաբազ թաղում եկեղեցի շինելու համար հանգանակութեան իրաւունք էին խնդրել: Այս տարի ի պատասխան Վարչութեան պահանջին թէ ի՞նչ է արել խումբը նպատակին հասած լինելու համար, ստացեց հանգանակութեան մատեանը մի նամակի հետ, որոնցից երևում է, որ հանգանակութիւնը յաջողութիւն չէ ունեցել: Ստորագրողները խոստացել են շինութիւնն սկսելիս միայն դրամ վճարել. և, որովհետև ոչ ոք համարձակութիւն չէ ունեցել շէնքի կառուցմանը ձեռնարկել, ուստի հանգանակութեան մասին միայն մի պատմական յիշատակ է մնացել տետրակի մէջ:

Յաւ յայտնելով այն մասին, որ այդ խումբը յաջողութիւն չէ ունեցել իր ձեռնարկութեան մէջ, շատ ցանկալի է այնուամենայնիւ իրագործւած տեսնել Հասանաբազ թաղում եկեղեցի ունենալու գաղափարը: Մի հանգամանք, որ շատ առաւելութիւններ և օգուաններ ունի Թէհրանի հայ հասարակութեան կեդրոնացման համար, կենսական շահերի և ինքնապաշտպանութեան տեսակէտով:

7. Գ Ե Ր Ե Չ Մ Ա Ն Ա Տ Ա Ն Խ Ն Դ Ի Ր.

Թէհրանի քաղաքային վարչութեան - Բալաղիէի կողմից անցեալներում էլ արգելք է դրել քաղաքի մէջ մեռեալներ թաղելու մասին. սակայն յաջողւել է յետ վերցնել տալ այդ կարգադրութիւնը: Այժմ նորից այդ խնդիրը հրապարակ է եկել և Բալաղիէն հետևում է իր հրամանի գործադրութեանը:

Հայոց գերեզմանատները քաղաքից դուրս գտնուում են Գուլար և Վանակ գիւղերում 5-7 վերստ հեռաւորութեան վրայ: Այժմ տուճարելում է Թէհրանի հայ հասարակութեանը նկատի ունենալ, որ եթէ այդ երկու գերեզմանատներն անյարմար են իրանց հեռաւորութեան համար, այն ժամանակ թող հասարակութիւնը հոգայ քաղաքից անմիջապէս դուրսը մի մօտիկ գերեզմանատուն հիմնելու մասին:

Է. ՊԱՐԺՈՒԿԱ-ՀՆՂԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՀԱՐՑՐ.

Վերջին հինգ տարիները Պարսկա-Հնդկաստանի ընդարձակ թեմը մնացել է առանց թեմակալ առաջնորդի: Այս երեսոթի պատճառները բացատրելու համար մենք կյիշատակենք այստեղ այն անցուցարձի մասին, որ տեղի է ունեցել Համ. Վարչութեան, Նոր-Ջուղայի Խորհրդարանի և Ս. Էջմիածնի Կաթողիկոսարան-Գիւանատան միջև:

Յայտնի է, որ անցեալներում մեր թեմակալ առաջնորդները նշանակուած էին Ս. Էջմիածնի կողմից առանց թեմի ժողովրդի հաւանութիւնն առնելու:

Բաւ համարելով այս ընթացքը և ցանկանալով ականել առաջնորդին եկած իր ընտրութեամբ և հրաւերով, սակաւին 1912-ի օգոստոս 7-ին Հ. Վարչութիւնը մի կոչով հրաւիրում էր Պարսկա-Հնդկական թեմի հայ համայնքներին իրենց այդ սեպհական իրաւունքներին աւեր գտնելու համար նոյնպէս դիմումներ անել Էջմիածին և պահանջել, որ առաջնորդներն ապագայում ընտրուած լինին թեմիս հայ ժողովրդի կողմից:

Այդ առթիւ Ամենայն Հայոց Հայրապետին ուղղած մեր նոյն թւականի Օգոստոս 12-ի գրութեան մէջ աւուած էր. —

„Մինչև այժմ Պարսկա-Հնդկաստանի թեմի համար թեմակալ առաջնորդները նշանակուած են եղել Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանի և Գիւանատան բացարձակ կարգադրութեամբ, առանց թեմիս հայ համայնքների հաւանութիւնը հարցնելու: Այս երեսոթը, սուած էր նոյն գրութեան մէջ, նախ այդ համայնքների անհասունութիւնն ու անպատրաստութիւնն էր ապացուցանուած, և երկրորդ՝ յաճախ Ս. Էջմիածինը նշանակուած էր այնպիսի թեմակալներ, որոնց գործելակերպը, հարեցողութիւնը և քնաւորութիւնը յարմար չգալով երկրիս ազգային, քաղաքական և միջազգային պայմաններին, առիթ էր տալիս ախուր և անախորժ հետեանքների, որոնք, անկասկած հաճելի չեն կարող լինել թէ մէկ և թէ միւս կողմերի համար: Ի վերջոյ խնդրում էր Վեհափառ Հայրապետից շնորհել այդ տարրական իրաւունքը, այսինքն թեմիս ժողովրդի հաւանութեամբ միայն թեմակալ առաջնորդ նշանակել:“

Ի պատասխան մեր և թեմիս զանազան կողմերից ուղղած գրութեանց, նոյն թւականի նոյեմբերի 8-ին Հայրապետական կոնդակով Նոր-Ջուղայի

Խորհրդարանի միջոցով տրուած էր իրաւունք՝ „ընտրել արժանաւոր առաջնորդ“ այս թեմի համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններից: Միաժամանակ Կաթողիկոսական Գիւանն ուղարկել էր առաջնորդական ընտրութեան վերաբերեալ 20 յօդուածներից բաղկացած մի հրահանգ ևս, որը ապագրեց Նոր-Ջուղայում և ընտրող համայնքներին մի-մի հատ ուղարկեց:

Ըստ այդ հրահանգի Պարսկա-Հնդկաստանի թեմը բաժանուած էր երկու ընտրական շրջանների, որոնց կեդրոններն են՝ Նոր-Ջուղա և Թէհրան:

Նոր-Ջուղայի շրջանին պատկանում են՝ Նոր-Ջուղա, Փէրիա, Չարմահալ, Չիրազ, Բուշիր և Հնդկաստանի քաղաքները...

Թէհրանի շրջանին են պատկանում՝ Թէհրան, Սուլթանաբադ, Քեամարա, Բուրվառի, Դեհրլա, Ռաշա, Էնգէլի, Մաղանդարան և Խորասան:

Այս երկաստիճան ընտրութիւնները կատարելու համար ժամանակ էր տրուած մինչև 1913-ի Ապրիլի 28-ը, որից յետոյ արդիւնքի մասին պէտք էր զեկուցուած առ Ս. Էջմիածին:

Աւելորդ համարելով հրահանգների բոլոր յօդուածների յիշատակութիւնն այստեղ, սակնք միայն, որ իւրաքանչիւր շրջան պիտի ընտրէր 20 պատգամաւոր՝ այսպէս. —

Ա. Նոր-Ջուղա	Ց	պատգամաւոր	Բ. Թէհրան	Ց	պատգամաւոր
Փէրիա	4	„	Ղարաղան, Համաղան	2	„
Չարմահալ	2	„	Ղազլին, Քեաղազ	2	„
Չիրազ	1	„	Սուլթանաբադ	1	„
Բուշիր	1	„	Քեամարա, Բուրվառի	2	„
Կալկաթա	1	„	Գեարլա	1	„
Ռանգուն	1	„	Ռաշա, Էնգէլի	2	„
Սինգափուր	1	„	Մաղանդարան	1	„
Ջաւա	1	„	Խորասան	1	„

Մինչդեռ Հ. Վարչութիւնը Թէհրանի շրջանում գործին ընթացք էր տւել և արդէն պատարակների ընտրութեանց մասին շրջաններից զեկուցումներ էին ստացուած, երբ յանկարծ 1913 Ապրիլ 21-ին Նոր-Ջուղայի Խորհրդարանից Հ. Վարչութիւնն ստանում է հետեւեալ ուշադրութեան արժանի հեռագիրը. —

„Երկու շրջաններին անհաւասար ձայն տալու դէմ բողոքներ կան. պատուիրակների մեծ մասը չէ ընտրել. զիմել ենք Վեհափառին. սպասում ենք նոր կարգադրութեան: Ապրիլ 28-ի ընտրութիւնը յետաձգում է ցնոր անօրինութիւն“:

Թէ ինչ բողոքներ էին, սրբան ստոյգ և իրաւացի և կամ ուրքեր էին բողոքողները, այդ միայն նոր-Ջուղայի Առաջնորդարանի գաղտնիքն էր:

Մինչ այս մինչ այն նոր կարգադրութիւնը սակայն ուշանում էր:

Նկատի ունենալով այս ձգձգումը Հ. Վարչութիւնն անհրաժեշտ համարեց 1913 Յոսոտոս 23-ին մի նոր գրութեամբ դիմել Ս. Էջմիածին կցելով նաև վերոյիշեալ հեռագիրը, և աւելացնելով, որ Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդի ընտրութեան խնդրի աւելի յետաձգումը կարող է վնասակար հետեանքներ ունենալ ընդհանուր թեմական գործերի վրայ: Հ. Վարչութիւնը խնդրում էր Վեհափառ Հայրապետից հրահանգել Ն.-Ջուղայի Առաջնորդական Խորհրդին.—

1. „Բոլոր շրջաններում անյապագ առաջնորդի ընտրութեանը ձեռնարկել ձայների բաժանման նախկին սիստեմով:

2. „Ձայների անհաւասար բաժանման դէմ եղած բողոքների քննութիւնը կատարել առաջնորդի թեմ հասնելուց յետոյ:

3. „Այդ բողոքների պատճեններն ուղարկել Հ. Վարչութեանն ի ծանօթութիւն, Պարսկա-Հնդկաստանի թեմի հայաբնակ կեդրոնների հայերի ձայների ճշգրիտ ցուցակների հետ միասին“:

Այդ գրութեան պատասխանը Հայրապետական Դիւանատանից դուրս չեկաւ: Այնպէս որ Հ. Վարչութիւնը հարկ համարեց մի նոր շրջաբերականով (1914 Փետր.6) գեկուցում տալ թեմիս շրջաններին իրականութեան և յատկապէս Ն.-Ջուղայի Խորհրդարանի յիշեալ խոչընդոտ հանդիսացող բողոք — հեռագրի մասին:

Ինչեր էին կատարում Ն.-Ջուղայի Խորհրդարանի և Վաթողիկոսական Դիւանատան միջև, այդ տակաւին մնում է իրրև մի ծածկած խորհուրդ, ընդհանրապէս մեր թեմի ժողովրդի և թէ մասնաւորապէս Հ. Վարչութեան համար: Եթէ այս ամէն ոլոր-մոլոր խաղերը չէին կատարում մի որոշ ծրագրով և մի յետին մտքով, ապա ուրեմն պատասխանատուութիւնը Ն.-Ջուղայի Խորհրդարանից աւելի

ընկնում էր Վաթողիկոսական Դիւանատան վրայ: Քանի որ դիւանապետ որդապետը, որ տարիներ „կառավարել“ էր Պարսկա-Հնդկական թեմը, այնքան թեթեւօրէն էր ուսումնասիրել այս թեմը, որ պատգամաւորների բաշխման կամ ձայների իրաւունքի հարցում խոշոր թիւրիմացութեան մէջ էր գցում թէ Վաթողիկոսին, թէ Խորհրդարանին և թէ տակնուվրայ էր անում առհասարակ մեր թեմի բարոյական և նիւթական շահերը:

Այնուհետև Վաթողիկոսական դիւանապետ Քազրաա Էպիսկոպոսի ստորագրութեամբ Հ. Վարչութիւնն ստացաւ մի „երկրորդ առաջարկութիւն“ 1914 Մարտ 12 թւակիր, որ հետեւեալն է. —

„Ազգիս Վեհափառ Հայրապետը 1912 Նոյ. 8-ի № 1442 Ս. Կնդակով աւելի իրաւունք Պարսկա-Հնդկաստանի թեմի հայ ժողովրդին՝ ընտրել արժանաւոր Առաջնորդ: Նոր-Ջուղայի և Հնդկաստանի հայերն իրենց պաշտօնական գրութիւններով, ժողովների արձանագրութիւններով բազմիցս շեշտելով նոր Առաջնորդի առաքման անհրաժեշտութիւնն ու անյետաձգելիութիւնը, խնդրում էին նորին Վեհափառութեան՝ շուտով նշանակել և ուղարկել Պարսկա-Հնդկաստանի թեմի համար Առաջնորդ: Քանի որ իրենք այժմեան պայմաններում անկարող են ընտրել Առաջնորդ. նախ՝ Ս. Էջմիածնի միարաններին չճանաչելու, երկրորդ՝ ձայների անհաւասար բաշխման, և երրորդ՝ թեմի չափազանց ընդարձակ լինելու պատճառով:

„ Իսկ թեմի հիւսիսային մասը՝ Թէհրանի շրջանը, համաձայն Ս. Էջմիածնից ուղարկած պաշտօնական հրահանգի, մի քանի գրութիւններով (Թէհրանից, Ղազինից, Ռաշտից) ցանկացել է ունենալ Առաջնորդ իւր ընտրութեամբ:

„Նոր-Ջուղայի—Հնդկաստանի և Թէհրանի շրջանների վերոյիշեալ տարաձայնութիւնն ու երկուութիւնը, դժբախտաբար, պատճառ է եղել, որ Պարսկա-Հնդկաստանի ընդարձակ թեմն այսչափ ժամանակ զրկւած է Առաջնորդից:

„Վեհափառ Հայրապետը նկատի ունենալով հետեւեալ հանգամանքները—նախ՝ Պարսկա-Հնդկաստանի թեմի չափազանց ընդարձակութիւնը, որի պատճառով հնարաւոր չէ լինում ազգային, եկեղեցական, թեմական-վարչական և կրթական հետգհետէ աճող գործերը կանոնաւորել և բարեպէս

կառավարել մի Առաջնորդի միջոցով, երկրորդ՝ Թէհրանի, որպէս մայրաքաղաքի, և Պարսկաստանի հիւսիսային մասի հայերի զգալի շատացումը, երրորդ՝ ինչպէս նոր-Ջուղայի ու Հնդկաստանի, նոյնպէս և Թէհրանի ու հիւսիսային մասի շրջաններում Առաջնորդի ներկայութեան անհրաժեշտութիւնը գործերի յաջողութեան ու կանոնաւորութեան տեսակէտից, ահաւասիկ այս հանգամանքները, նաև երկու շրջանի տեղական սոցիալական զգալի դանազանութիւնը, Թէհրանում միշտ Առաջնորդ-ներկայացուցիչ ունենալու կարեւորութիւնը և ընդհանրապէս թեմի բոլոր ազգային գործերի օգուտը նկատի ունենալով, Վեհափառ Հայրապետը կկամենար տեսնել Պարսկա-Հնդկաստանի շափաղանց ընդարձակ թեմը բաժանւած երկու թեմի, ըստ այն երկու շրջանի, որ նախագծւած է 1912 թ. № 1442 Հայրապետական Կոնգրակի հետ ուղարկւած հրահանգով:

„Ա. Մի ինքնուրոյն թեմ Նոր-Ջուղա՝ Փէրիա-Չարմահալ գաւառներով ու հարաւային Պարսկաստանում գտնւած հայաբնակ քաղաքներով, Հնդկաստանի և Ջաւայի հետ բոլոր մասերով:

„Բ. Երկրորդ ինքնուրոյն թեմ Թէհրան՝ Ղարաղան, Քեազազ, Քեամարա Բուրվարի և Գեափլա գաւառներով, համազան, Ղազլին, Ռաշա, Էնդէլի և Գիլանի Մաղանդարանի և Խորասանի միւս հայաբնակ քաղաքների հետ: Առաջնորդանիստ—Թէհրան մայրաքաղաք:

„Նորին Վեհափառութեան պատէրով Հայրապետական Գիւանս յայտնում է վերոյիշիլով կտրեւոր ու անյետաձգելի հարցի մասին Ազգային Խորհրդի և յանձնարարում է գլխաւոր հայաշատ կեդրոններում խորհրդակցութիւններ կազմել (Ն.-Ջուղա, Թէհրան, Ռաշա, Ղազլին և այլն) եւ այդ խորհրդակցութիւնների եզրակացութիւնները զեկուցանել Վեհափառ Հայրապետին: Գրական պատասխանի ղէպքում, անհրաժեշտ պաշտօնական կարգադրութիւններ կլինեն և կընտրւեն նոր-Ջուղա-Հնդկաստանի և Թէհրանի թեմերի համար Առաջնորդներ:

„Բարեհաճեցէք ընթացք տալ շուտով այս հարցին և արդիւնքը ղեկուցանել:

„Այս հարցի մասին զրեւել է Ն.-Ջուղա, Ղազլին և Ռաշա, Էնդէլի ևս“:

Ս. Էջմիածնի Վաթողիկոսական Գիւանսի այդ գրութեան առթիւ համ. Վարչութիւնը գումարեց Թէհրանում մի ընդհանուր ժողով, որից ընտրւած յանձնախմբի ղեկուցումն այն էր որ—

„Նախ՝ բաժանումն այնքան էլ ցանկալի չէ և աւելի լաւ է խնդիրը հետեւեալ ձևով դնել: Առաջնորդանիստը լինի Թէհրան. իսկ Ն.-Ջուղայում լինի մի փոխանորդ-վարդապետ, որը բաւարարութիւն կտայ տեղի, գաւառների և Հնդկաստանի հոգևոր պահանջներին, Ն.-Ջուղայի Առաջնորդական Խորհրդի օժանդակութեամբ: Զժանրանալով այն հանգամանքի վրայ թէ որքան կշիւ կարող է ունենալ Պարսկա-Հնդկաստանի ամբողջ թեմի տնունից արւած քայլերը Պարսից կառավարութեան մօտ, իրրև մի ամբողջութիւնից, աչքի առաջ առնեցաւ, որ նոյն իսկ Մէջլիսի հայ պատգամաւորի ընտրութեան խնդիրը կգժարանայ, որովհետև ներկայ ձևով ամբողջ թեմը մի պատգամաւոր ունի. մինչ բաժան ղէպքում, կառավարութիւնը մի աւելւոր պատգամաւոր հայերի կողմից չպիտի ընդունէ, իսկ երկու թեմից մէկ պատգամաւորի ընտրութիւնն էլ շատ տեխնիքական և այլ դժարութիւններ ունի:

„Երկրորդ՝ թեմի բաժանման ղէպքում մեծ դժարութիւն կառաջանայ Թէհրանի Առաջնորդարանի ծախքերն ապահովելու, նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի եկամուտների կամ ստացւածքների բաժանման և այլ խնդիրներում: Որով գլխաւոր դժարութիւնը նիւթաւրանի ապահովութեան վրայ է կեդրոնանում: Ուստի ցանկալի է այս հանգամանքները պարզել նաև շրջանների համայնքներին, նրանց կարծիքն ստանալու համար. այլ և յայտնել, որ եթէ բաժանման հարցն ընդունւի ամէն մի շրջան առաջնորդական ծախքը հոգալու համար որքան կարող է առլ“:

Յանձնախմբի այդ կարծիքների մասին համ. Վարչութիւնն յայտնեց շրջաններին կարծիքների փոխանակութեան համար: Նոր-Ջուղայի Խորհրդարանը պատասխանելով Վարչութեանս գրութեանը (6 Յունիս 1914) ի միջի այլոց ահա ինչ է ասում.—

„Անհրաժեշտ ենք համարում Ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ ո՛չ մի կերպ և ո՛չ մի ղէպքում ո՛չ Ատեանս և ո՛չ ևս այս շրջանի որևէ հայաբնակ քաղաք կամ գիւղ կհամաձայնի առաջնորդանիստ դարձնել Թէհրանը և նոր-Ջուղան փոխանորդանիստ: Այս կէտը հնա-

բաւորութեան սահմանից շատ հեռու է: Երեք դարից ի վեր գոյութիւն ունեցող Ս. Ամենափրկչեան Արք-եպիսոպոսարան վանքը պէտք է մնայ ընդմիշտ աթոռանիստ: Եթէ ամբողջ թեմն ըստ առաջնոյն միացած մնայ, Նոր-Ջուղայի հռչակաւոր վանքը պէտք է լինի աթոռանիստ. իսկ եթէ երկուսի էլ բաժանի, դարձեալ աթոռանիստ է լինելու:

„Գալով ծախքերի մասնակցութեան, եթէ թեմը երկուսի բաժանեց այս շրջանը ո՛չ մի կերպ չէ մասնակցելու Թէհրանի առաջնորդարանի ծախքերին, որովհետեւ Ս. Ամենափրկչեան վանքը մեծ գժարութեամբ է կարողանում իր ծախքերը հոգալ և արդէն իսկ մօտաւորապէս վեց հազար թումանի պարաքի ներքոյ է գտնուում և տսկոս է վճարում պարտատէրերին: Առաջնորդի ուսձի մեծ մասը գոյանում է ձեռնադրութեան աջահամբոյրներին:

„Բացի սրանից, ճիշտ է, Ս. Ամենափրկչեան վանքը պատկանում է ամբողջ թեմին, սակայն բոլոր նւիրատուները, ջուղայեցիքն են. այն էլ մեծ մասամբ Հնդկահայ ջուղայեցիներ, որոնք թէ կենդանութեան ժամանակ և թէ կապով ինչ որ թողել են Ս. Ամենափրկչեան վանքին, այդ արել են միմիայն իրենց հայրենիքը — Նոր-Ջուղայի վանքը չէն ու պայծառ պահելու համար: Նրանցից ո՛չ մէկի մտքովն անգամ չէ անցել թէ իր աւածը պատկանելու է ամբողջ Պարսկա-Հնդկաստանի թեմին թէ երբ ուղեկան կարող են բաժին հանել Թէհրանում հաստատուելիք Առաջնորդարանին: Արդ Ս. Ամենափրկչեան վանքը, որ հաստատուն է միայն ջուղայեցիների կապած և թողած գումարներով, պէտք է մնայ և ծառայէ դարձեալ միմիայն Նոր ջուղայեցիներին շրջանին:

„Ուրեմն, Թէհրանին մնում է կամ ցարդ ընդունւած ձեով կառավարել այն է թեմը միացած և առաջնորդանիստը Նոր-Ջուղա, և փոխանորդարան հաստատել Թէհրանում, և կամ, թեմը բաժանել երկու շրջանների և Թէհրանում հաստատուելիք առաջնորդարանը կառավարել տեղական ազրիւրներից և այդ շրջանի գաւառներից գոյացած մուաքերով...“:

Ուրեմն վերոյիշեալից կարելի էր եզրակացնել այն, որ Ջուղայի հայ հասարակութեան համար միայն Ջուղա գոյութիւն ունի. իսկ Հնդկաստանի հայութեան համար դարձեալ միայն Ջուղան:

Տ. Վարչութիւնը նպատակ դնելով օր առաջ վերջ տալու առաջնորդական խնդրի անորոշ գրութեանը, միաժամանակ նկատի ունենալով Պաթոզիկոսական Գիւանի 1914 Մարտ 12-ի գրութեան տրամադրութիւնը — թեմիս հայաշատ կեդրոններում խորհրդակցութիւններ կայացնել և մի որոշ եզրակացութեան յանգել — որոշեց այդ առթիւ մեր թեմի երկու գլխաւոր համայնքները մէջ մտքերի փոխանակութիւն ստեղծել: Այս նպատակով մի պատգամաւոր ուզարկեց Նոր-Ջուղա, այնտեղ հասարակական ժողովներում պարզելու Թէհրանի և սրա շրջանի տեսակէտը. և, եթէ հնարաւոր լինի, մի որոշ եզրակացութեան և համաձայնութեան բերել երկու կեդրոններին: Տ. Վարչութեան պատգամաւորին շը յաջողեց կատարել իւր դերը: Նա իր գեկուցման մէջ (1914 Յունիս 9 թւով) Նոր-Ջուղայից գրում է. —

„... Թեմիս երկուսի բաժանելու և Առաջնորդական ընտրութեան խնդիրների առթիւ տեղիս հասարակութեան հետ մտքերի փոխանակութիւն ունենալու նպատակով խնդրեցի հասարակական ժողով դումարել, որտեղ ես հնարաւորութիւն կունենայի Թէհրանի հայոց տեսակէտը պարզել և ապա մի եզրակացութեան գալ ընդհանուր ուժով շտապեցնելու առաջնորդի ընտրութիւնը: Յաւում եմ, որ իմ դիմումներն արդիւնք չունեցան: Ինձ հնարաւորութիւն չուրիս հասարակական ժողովի առաջ ելնելու: Ներվակ ուզարկում եմ այդ խնդրի առթիւ իմ նամակին ի պատասխան Եզնիկ վարդապետից ստացւած գրութիւնը, որի յետ-գրութեան վրայ հրաւիրում եմ Ձեր յատուկ ուշադրութիւնը: Բացառութիւններն աւելորդ եմ համարում. այդ մի քանի տողերը չափազանց պերճախօս են:

Իմ կարծիքն է (որը և պարզապէս յայտնեցի Եզնիկ վ-ին), որ Առաջնորդական Խորհուրդն է պատճառ վերոյիշեալ կարեւոր խնդիրների ձգձգման, և թէ նա է, որ ուշադրութիւն չէ դարձնում, հարկաւոր ակնածութեամբ չէ վերաբերւում Թէհրանի հայոց դիմումին, և գործին ընթացք սալուն արգելք է լինում:

„Այստեղ ամէն ազդային գործ կեդրոնացած է Առաջնորդական Խորհրդի ձեռքում. իսկ այդ Խորհրդի իշխողն է յիշեալ վարդապետը, որն այն աստիճան իրեն անպատասխանատու է համարում, որ առանց հետա-

քրքրելու և տեղեակ լինելու ն.-Ջուղայի ժողովրդի կարծիքին, Թէհրանի հայոց դիմումի առթիւ, թոյլ է տալիս իրեն այդ ժողովրդի անունից պատասխանել, այն էլ մի այնպիսի ձևով, որը վիրատրական է Թէհրանի հայութեան համար և պատել չէ բերում ն.-Ջուղայի հասարակութեանը:

„Վերոգրեալից պարզ պէտք է լինի որ օրինական ճանապարհով Ձեր յանձնարարութեան կարևոր մասն իրագործելու միջոցները խրաժ են ինձնից...“

Իսկ մեր պատգամաւորին եզնիկ վ-ը ուղղել էր հետեւեալ գրութիւնը.—

„Ն.-Ջուղայի թաղերից մեզ հասած արձանագրութիւններից (ժողովների) երևում է, որ ն.-Ջուղան միանգամայն հակառակ տեսակէտ ունի առաջնորդական ընտրութեան հարցում Թէհրանի հայերի տեսակէտից:

Յ. Գ. Առաջնորդական Խորհրդարանը գտնում է, որ առաջնորդական ընտրութեան և թեմի երկսի բաժանելու խնդրում ն.-Ջուղայի ժողովուրդը երբէք չէ հետաքրքրւում Թէհրանի հայոց համայնական Վարչութեան տեսակէտով“:

Եւ այսպէս բաւական պարզ է, թէ ինչո՞ւ մի մեծ թեմի համար այդ կարևոր խնդիրը յաջող լուծումն չգտաւ և պատճառն ո՞վ և ի՞նչ էր:

Մի առժամանակ սպասելուց յետոյ 1914 զեկտ 9-ի թիւով Հ. Վարչութիւնը գարձեալ հարկ համարեց մի նոր երկար գրութեամբ յիշեցնել Կաթողիկոսական Գիւանատանը մեր թեմական գործերի վիճակի մասին:

Այդ գրութիւնը, որը պատասխան էր նաև Կաթ. Գիւանատան 1914 մարտ 12-ի գրութեան, հետեւեալ եղբակացութիւնն էր ամփոփում. —

„1. Ընդունելով հանդերձ, որ թեմի շտաբային ընդարձակ լինելը բաւականաչափ միասում է եկեղեցական գործերի կեդրոնացմանը և այդ գործերին շուտափոյթ ընթացք տալու համար այլ և այլ անյարմարութիւններ են առաջ գալիս, Վարչութիւնս բաժանումը գտնում է ներկայումս անկարելի հետեւեալ պատճառներով.—

„Ա. Թեմը երկուսի բաժանելով թեմակալ-առաջնորդի և սրան կից վարչութեանց ծախքերը կկրկնապատուին. մինչդեռ այժմ հազիւ է յաջողում ամբողջ թեմի կողմից ծածկել այդ ծախքը. Թէհրանում թեմակալ-առաջնորդի և սրա համար անհրաժեշտ ծառայողների ամենաչափաւոր բայց

գիրքին պատշաճ ծախքերի համար հարկաւոր է տարեկան մօտ 4000 թուման: Այսքան գումարը Թէհրանի շրջանը տալ չէ կարող, այն պարզ պատճառով, որ եթէ նիւթական նման գոհարերութիւն անելու հնար լինէր, Թէհրանն իր կրթական հաստատութիւնների վրայ կծախսէր այդ, նրանց՝ այժմեան խղճուկ գրութիւնից ազատելու համար: Եթէ նոր տուրքերի խնդիրը մի կողմ թողնենք, գոյութիւն ունեցող եկեղեցական տուրքերն ամենայաջող գանձման դէպքում հազիւ ծածկեն յիշեալ գումարի 1/5 մասը:

„Բ. Թեմի երկուսի բաժանման դէպքում առաջ կգայ նաև ընդհանուր թեմի ազգային եկեղեցական գույքերի-կայրածների և եկամուտների բաժանման խնդիր: Խօսքը գլխաւորապէս Ս. Ամենափրկչեան վանքի շարժական և անշարժ ստացւածքի և եկամուտների մասին է, որ ամբողջ թեմի սեպհականութիւնն է: Իսկ ընդհանուր ստացւածքի բաժանումը կլինի պատճառ երկպառակութեան, որ գտնէ մեզ համար ցանկալի չէ:

„2. Թէհրանում հոգևոր հովիւ ունենալը պէտք է միմիայն ընդհանուր թեմի հայութեան և նորին Վեհափոռութեան կողմից Պարսից պետութեան մօտ ներկայացուցիչ լինելու համար: Եւ, որովհետև նոր-Ջուղայի առաջնորդը արտաքին յարաբերութեանց համար միշտ պէտք ունի Թէհրանում եղած հայութեան ներկայացուցչութեան օգնութեանը և ջանկեցութեանը, ինչպէս այդ ցոյց են տալիս վերջին տարիների մի շարք դէպքերը, սրեմն, բնական է, որ ներկայացուցիչ պահելու համար արւած ծախքերին նոր-Ջուղան ևս պիտի մասնակցէ: Բայց նոր-Ջուղայի շրջանը չէ կարող թէ իր շրջանի առաջնորդական ծախքերը հոգալ և թէ մասնակցել Թէհրանի շրջանի առաջնորդարանի ծախքերին:

„Այս ամենը նկատելու և ունենալով համ. Վարչութիւնս գտնում է, որ Պարսկահայկաստանի թեմի հայութիւնն ի վիճակի չէ երկու առանձին առաջնորդներ պահելու: Պարզ է որ թեմի երկուսի բաժանելու արգելքը դուռ նիւթական բնոյթ է կրում: Բաժանման օգտակարութեան մասին չենք խօսում, որովհետև այդ ակներև է: Եթէ Ս. Էջմիածնի Կաթողիկոսական Գիւանը անհրաժեշտ համարէ այդ բաժանումը, այն ժամանակ պէտք է նաև մտածէ առանձին առաջնորդներ ունենալու առթիւ եղած ծախքերի մեծագոյն մասը ծածկելու համար իր իսկ ձեռքի տակ եղած միջոցներից: Հակառակ պարագայում աւելի լաւ է խնդիրն

իր ներկայ դրութեան մեջ թողնել այսինքն թեմը չբաժանել:

„Յայտնելով մեր կարծիքը թեմը երկուսի բաժանելու խնդրի վերաբերմամբ, սրանով գալիս ենք Հայրապետական Դիւանիդ ուշադրութիւնը հրաւիրելու այն հանգամանքի վրայ, որ նման տեսական խնդիրներով գրադուելով պէտք է իրականն աչքաթող չանել: Թեմն առանց առաջնորդի թողնելը և այսպիսի մեծ թեմի շափազանց պատասխանատու գործերը մի՛ իրեն կոչմանը Համապատասխանող վարդապետի քմահաճոյքին թողնելն արդէն ապիս են իրենց պատուները:

„Եթէ Ս. Էջմիածնի համար կարեօր են պարսկահայերի խաղաղութիւնը, յառաջդիմութիւնը և համերաշխութիւնը, պէտք է օր առաջ վերջ տալ ներկայ դրութեանը:

„Թէհրանի հայութիւնը բազմիցս խնդրել է առաջնորդի ընտրութեան գործն շտապեցնել, այժմ էլ նոյնն ենք խնդրում: Եթէ նոր-Ջուղայի հայութիւնը չէ ցանկանում իր համար առաջնորդ ընտրել և ընդունում է, նրան սուրբին Վեհափառ Հայրապետը կուզարկէ, զա չէ նշանակում, որ Թէհրանի շրջանի հայութիւնն իր իրաւունքներից պէտք է զրկէ: Թէհրանի շրջանը կընարէ, և այդ ընտրածը թող նոր-Ջուղայի համար լինի նշանակովի, քանի որ նորին Վեհափառութիւնը պէտք է հաստատէ եղած ընտրութիւնը:

„Չայնրի անհաւասար բաշխման մասին Համայնական Վարչութիւնն արդէն պարզել է Դիւանիդ իր տեսակէտը: Այդ այն է, որ այժմ ոչ ոք ի վիճակի չէ թէ եղած բողոքները քննելու և թէ նոր բաժանումը ձեւակերպելու: Այդ կարող է, և պէտք է անել միայն թեմական առաջնորդը:

„Ի վերջոյ կրկին անգամ խնդրում ենք ըստ կարելոյն շուտով կարգադրել առաջնորդական ընտրութեան խնդիրը“:

Այդ նամակն ուղարկւել է Էջմիածին 1914 Դեկտ. 9-ի թուով և մինչև այժմ մօտ ութն ամիս մնացել է անպատասխան:

Այսպիսով ժամանակն անցնում է. իսկ Պարսկաստանի հայութեան համար կարեօր խնդիրներից մէկը մնում է անլուծելի, և այդ առթիւ Համ.Վարչութեան գիմուսները Պաթողիկոսական Դիւանի կողմից մնում են անպատասխան: Թէ ինչո՞ւ Դիւանն այդ խնդրին ընթացք և լուծումն չէ ապիս, չենք կարող տեսել: Սակայն նման վերաբերմունքը շատ մօտ է անտարբերութեան, եթէ աւելին չասենք: Հե-

տեանքն այն է, որ ներկայ պատմական և ճգնաժամային ընթացքին, երբ Պարսկահայութեան գոյութեան և ապագայի խնդիրն է մէջ դրած, Հայութեան այս հատածը զրկած է Առաջնորդից, որը շատ բան կարող էր անել և պէտք է անէր: Թուում է, որ Պարսկահայութիւնը բոլորովին մտաացած է մեր „Տոգուր հայրերի“ իշխանութեան կողմից: Այն ինչ թէ իրենց դիրքը Պարսկաստանում՝ Հայութեան և պետութեան առաջ բարձր պահելու, և թէ ազգային շահերի տեսակէտից, նրանք պէտք է աւելի հետաքրքրէին նման խնդիրներով մանաւանդ որ գրանց լուծումն էլ այնքան դժուար չէր, ժամանակ և աշխատանք չէր պահանջուում:

Ի վերջոյ իբրև օրինակ ներկայ խառն և աննորմալ դրութեան հետևանքի, պարտք ենք համարում յիշել Ռաշտի գաղութական — Տոգարաբաժական գէպքերը, որոնց մասին գրել է նաև պարբերական թերթերում:

Այստեղ չենք ուզում խօսել այն մասին թէ Ռաշտի հայութեան երկու խմբակցութիւններից որ մէկն է արդար իր տեսակէտներով և գործելակերպով: Միայն այսքանը պարզ է, որ եթէ ժամանակին ն.Ջուղայի Առաջնորդարանը և կամ „Խորհրդարանի նախանգամը“ կարուկ և նպատակայարմար միջոցների դիմած լինէր, խնդիրն այդ աստիճան սրութեան չէր հասնիլ, որից աւելում է ամբողջ մի համայնքի կրթական գործը և ներքին համերաշխութիւնը, մի բան, որ մեզ շատ ու շատ պէտք է՝ մասնաւորապէս ներկայումս: Համ. Վարչութիւնը հիմնելով Ռաշտի հայութեան մի մասի դիմումի և աջակցութեան առաջարկի վրայ, այդ առթիւ ժամանակին հարկուոր դիմումն արել է Պաթողիկոսական Դիւանին և բողոքել, մասնաւորապէս մեր ներքին գործերի մէջ Պարսից և կամ այլ կառավարութիւնների միջամտութիւն առաջ բերելու և արտաքին ճնշում գործ դնելու փորձերի դէմ, պահանջելով հարկուոր միջոցները ձեռք առնել նման քայլերի դէմ: Թուում էր, որ այս առթիւ մեր և Պաթ. Դիւանի մէջ երկու տարբեր կարծիք չէր կարող լինել և հարկուոր միջոցներն անմիջապէս ձեռք կառնւէին: Սակայն այդ ամէնը ցարդ որևէ հետևանք չեն ունեցել:

Ր. ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՑԵՂԵԿԱՅՐԵՐ.

1. ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐԺԻՆ.

Դատական մարմինը Համայնական Վարչութեան մի շտա կարեւոր մասն է կազմում: Դատական մարմնի վրայ է ընկնում յատուկ պարտաւորութիւն զարգացնելու և հասունացնելու ինքնավարութեան սգին ժողովրդի զանազան խաւերում: Աւելորդ է ասել, որ մեր Դատական մարմինը լինելով անաշու և անկաշու, պէտք է սպասել, որ Թէ՛հրանի հայ հասարակութիւնը միանգամայն վստահութեամբ վերաբերւէ զէպի այս հաստատութիւնը: Քանի որ Դատական մարմինը բաղկացած է հայ մարդկանցից, հետեւաբար այդ մարմինն աւելի լաւ հնարաւորութիւն ունի վերահաստիւն ասալու առաջարկած դատերին ու խնդիրներին: Խնդիրներ, որոնք վերաբերում են հայի ներքին կեանքին. լինին՝ ընտանեկան, ժառանգական, ամուսնական, գրամական և այլն: Դատեր, որոնք ծագած լինելով հայ շրջաններում, հետեւաբար հայ դատաւորներին աւելի մատչելի են իրանց սովորւած լաւագոյն-բարոյական բարբ կողմերով. և ուրեմն հայազգի դատաւորներն աւելի խելացի ու օրինական վճիռ կկայացնեն քան օտարազգի ատեաններն, որոնց դատավարական հիմունքները յաճախ միանգամայն հակասում են մեր սովորւած լաւագոյն-բարոյական հասկացողութեանց և սովորութեանց:

Մեր Դատական մարմինը միաժամանակ կոչումն ունի պաշտպանելու մեր սովորւած շահերն ու իրաւունքները օտարազգի և ամենից առաջ հէնց պարտիկ ատեաններում. ատեաններ՝ որտեղ դատերը, որքան կամենաք, ձգձգուած են, և ոչ-իրաւացի հետեանքներ ունենում: Պատճառները լաւ յայտնի են նրանց, որոնք երբեք չեն կրնային այդ ատեաններում:

Մենք այժմ կամենք մի քանի քաղաքներ համ. Վարչութեան այս անցեալ տարեշրջանի Դատական մարմնի գործունէութիւնից:

Երեք հագուց բաղկացած Դատական մարմինը գումարել է 6 ամուսյ ընթացքում (1914 Դեկտ. 4—1915 Մայիս 23) 36 հերթական և արտակարգ ժողովներ, և ունեցել է 20 դատ, որ կարելի է բաժանել այսպէս. —

Ընտանեկան երկպառակութեանց վերաբերեալ . . . . .	1	դատ.
Ժառանգական հարցեր . . . . .	1	„
Կառավարական հաստատութեանց դէմ . . . . .	1	„
Գաւառատէրերի և զիւղացիների միջադէպեր . . . . .	2	„
Առեւտրական բնոյթ կրող հարցեր . . . . .	2	„
Դրամական պարտք ու պահանջի խնդիրներ . . . . .	13	„
Այս դատերից սպառուած են 11-ը:		

Դատեր, որոնց հակառակ կողմը զանազան պատճառարանութեամբ մերժել է ներկայանալ Դատական մարմնի ատեանին — 2 դէպք:

Դատեր, որոնք յետ են ուղարկել համայնական Վարչութեան Դիւանին՝ մարմնի իրաւասութեան սահմանից դուրս լինելու պատճառով — 2 դէպք:

Դատ, որի քննութիւնը զանազան պատճառներով չէ սկսել — 1 դէպք:

Դատեր, որոնք դեռ ևս չարունակուած են — 4 դէպք:

Դատական մարմինը յայտնում է իւր գոհունակութիւնը այն պատրաստակամութեան համար, որ ցոյց է տւել ժողովրդի արհեստաւոր և գործաւոր դասակարգը, ուրախութեամբ ընդունել է Դատական մարմնի միջամտութիւնը և ենթարկւել է նրա տւած վճռին:

Դատական մարմինը պարտք է համարում արձանագրել զժբարգոյսար և այն փաստը, որ աւելի բարձր և կիրթ համարւած դասակարգից չէ պակ նոյնպիսի պատրաստակամութիւն և աջակցութիւն: Ըստ տեղեկագրի մեր „զարգացած“ դասակարգը մի քանի դէպքերում մերժել է համայնական Վարչութեան Դատական մարմնի միջամտութիւնը:

Դատական մարմինն ի վերջոյ Թ. Տ. Ընդհանուր ժողովի խորհրդակցութեանն է ներկայացնում հետեւեալ հարցը. —

„Ինչպէս պէտք է վարել այն մարդկանց հետ, որոնք նախ գրաւոր համաձայնութիւն են տալիս Դատական մարմնի վճռին և ենթարկուելու համար, ապա մերժում են իրաւորժեղ արւած վճիւրը, երբ դատն իրանց ցանկութեան հակառակ է վճառում:“

Համայնական Վարչութեան կարծիքով այդպիսի անհասանելի անունները պէտք է հրապարակ հանել:

2. ,,ԱՂՔԱՏԱԽՆԱՄ՝Ի ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

Աղքատ ընտանիքներին և պատահական կարօտեալներին գրամական նպաստ տալու խնդիրը նորութիւն չէ մեր իրականութեան համար: Սակայն առաջին անգամ այդ նպատակով հաւաքուում և բաշխուում էր գրամ նախաձեռնութեամբ զանազան մարմինների և մասնաւոր անձանց, որոնց մէջ սակայն չկար մի ընդհանուր կապ: Համայնական վարչութեան այս տարեշրջանի կարևոր գործերից մէկը պէտք է համարել ,,Աղքատախնամ վարչութիւն“ կազմելու փաստը: Այդ վարչութեան մէջ մտնում են մէկ-մէկ հօգի ներկայացուցիչներ անձաա գործող մարմիններից. այսպէս՝ Հ. վարչութեան ներկայացուցիչը, երկու երեցփոխները, Կանանց Բարեգործական և Օրիորդաց Խնամատար՝ ընկերութեանց ներկայացուցիչները:

Այսպիսով ուրեմն աղքատների օգտին հաւաքած գրամները կեդրոնանում են մի վարչութեան ձեռքում միայն և շահագործումների ղէմն առնում է:

Կարօտեալների համար տրամադրելի մի գումար պատրաստելու նպատակով նախ հանգանակեց մի գումար՝

գուման	1359. —
Ս. Գէորգ եկեղեցու աղքատաց գրամներից ստացւել է	„ 1129. —
Ս. Թագէտս և Բարդուղիմէոս եկեղեցուց՝ նոյնպէս	„ 765. —
Օրիորդաց Խնամատար ընկերութիւնից	„ 600. —

Ռերեմն վարչութիւնը կանխիկ գրամ ընդամենը հաւաքել է	„ 3853. —
որից բաշխած է գանադան ժամանակներում	„ 3317. 50
Աղքատախնամի անդուկում մնում էր	„ 535. 50

Թէև Բարեգործականն էլ անդամակցում է Աղքատախնամ վարչութեանը, սակայն, երևի թիւրիմացութեամբ, Կանանց ընկերութիւնը մոռացել է գցել իր լուծման աղքատների գանձարկը:

Փորձերը ցոյց են տալիս, որ ,,Աղքատախնամ վարչութիւնը“ մի անհրաժեշտութիւն է, և նա բարոյական կարևոր դեր ունի կատարելու մեր ոչ-մխիթարական շրջանի մէջ:

Աղքատ-կարօտեալների անուանից յայտնելով երախտագիտական շնորհակալութիւն բոլոր ազնուասիրտ ներատուներին Հ. վարչութիւնը լիայոյս է, որ Թէհրանի

հայ հասարակութիւնը միշտ էլ սրտորաց և աւատաձեռն կվերաբերէ նման ձեռնարկութիւնների համար:

3. ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Թէհրանի Կանանց Բարեգործական ընկերութիւնը մի տասնեակ տարւայ կեանք ունի: Հաստատուած է 1905-ին: Այս թւականից առաջ նա յայտնի էր ,,Խնամակալուհեաց ընկերութիւն“ անունով: Կ. Բ. ընկերութեան նպատակը եղել է՝ օգնել նիւթ ապէս և բարոյապէս Թէհրանի ազգային դպրոցներին, բանալ մանկապարտէզ, արհեստանոց, նպաստներ տալ շքատը ընտանիքներին և աշակերտներին:

Գրամական միջոցները եղել են՝ անդամավճարներ, ներկայացում, երեկոյթ, վիճակախօսք և ի հարկին նաև հանգանակութիւն:

Անդամավճարները եղել են կամ միանուագ վճարելով 25-ական թուման մշտական անդամակցութեան պայմանով և կամ 2-ական թուման տարեկան:

Ընկերութիւնն առաջին տարին ունեցել է 85 անդամուհի: Ընկերութեան կանոնադրութիւնը սպազարել է 1906-ին:

Այս երկրորդ տարին է, որ Կ. Բ. ընկերութիւնը տեղեկագիր և հաշիւ է ներկայացնում իր գործունէութեան մասին: Ըստ երեկոյթին սպասելի էր, որ ընկերութիւնն իր աստիճանակի առթիւ բեզուն և բովանդակալից մի տեղեկագիր պիտի ներկայացնէ: Սակայն դժբաղդարաբ տեղեկագրի մէջ չէնց սկզբից ցաւ է յայտնուած այն մասին, որ այս տարեշրջանում ընկերութեան գործունէութիւնը նախորդ տարիների համեմատութեամբ շատ մխիթարական չէ եղել:

Ընկերութիւնն այժմ ունի ,,25 անդամուհի“, որոնց մի մասը, ինչպէս սուսած է տեղեկագրի մէջ, չէ հետաքրքրուում ,,բարեգործական“ գործունէութեամբ: Այս տարեշրջանում վարչութիւնը ձեռք է առել ամէն միջոց ,,ընկերութիւնը նոր ուժերով մի նորոգութեան ենթարկելու համար“. սակայն միանգամայն աղարդիւն աշխատանք, որովհետև նոյնիսկ մի հատիկ ,,ընդհանուր ժողով“ գումարել անգամ չէ յաջողել վարչութեանը: Միակ պատճառն այն է, որ տիկիները չեն բարեհաճել ժողովի գալ: Առհասարակ սառն վերաբերմունք գլխին Կ. Բ. ընկերութեան ընդհանուր ժողովները սովորական է եղել: Անցեալում եղել է տարե-

չըջան երբ Քարեգործականն համարեալ միայն անունով է գոյութիւն ունեցել:

Վարչութիւնն այս տարեշրջանում ունեցել է, իր ասելով, 15 նիսա: Կազմակերպել է մի երեկոյթ, որի արդիւնքից 50 թուման նւիրած է հայ գաղթականներին: Նոյն երեկոյթի վիճակախաղի արդիւնքը՝ դրան 557.65՝ պիտի գործադրւէ առաջիկայ ուսումնական տարեշրջանի սկզբին գալուցի շքուոր աշակերտներին համադրեստի համար:

Ընկերութիւնն իր անձեռնմխելի գումար ունի միայն 1000 դրան. իսկ ձեռնմխելի գումար՝ դրան 61.45:

Անդամավճարների մասին ոչ մի յիշատակութիւն չկայ տեղեկագրի և հաշիւների մէջ, որից ենթադրում ենք ուրեմն, որ ոչ մի արկին անդամավճար չէ ասել: Պարզ չէ միայն արդեօք վարչութիւնն է մտացութեան ասել անդամավճարների հարցը, թէ փորձ է եղել գանձելու, բայց անդամուհիները չեն վճարել:

Պէտք է ասել, որ Կ. Ք. ընկերութիւնն ընդհանրապէս չէ ցոյց ասել բաւակաշատի եռանդ ու գործունէութիւն: Մինչև այժմ իր նպատակներից — բունալ մտնկապարտէզ և արհեստանոց — չէ իրականացրել:

Վարչութիւնը համեստութիւնից թէ ամօթ խածութիւնից ստիպւած լուսթեան է առլիս և չէ բացատրում այն բարոյական պատճառները, որոնց հիման վրայ չէ յաջողել ամբողջ տարւայ մէջ ընդամէնը 25 արկիւններից գէթ մի անգամ ընդհանուր ժողով գումարել, որ վաւերական պիտի լինէր, եթէ նոյնիսկ 13 հոգի ներկայ լինէին ժողովին:

Վարչական հերթական ժողովները նոյնիսկ սովորական չեն եղել: Առհասարակ հետեոզականութիւնը մեր արկիւնների մէջ զգալի չափով պակասում է: Թոյլ է նաև գիտակցութիւնը պարտականութեան և պատասխանատուութեան մասին:

Իրրն «քարեգործական» մի մարմին անցեալ տարեշրջանում ընկերութիւնը գրամապէս ոչնչով չէ մասնակցել Ազրատախնամի գործունէութեանը:

Վարչութիւնն այս տարի կազմւած է նոյն անձերից, ինչ որ էին անցեալ տարեշրջանում: Տեղեկագրի մէջ չէ խօսուում և այն մասին, որ եթէ այսպէս շարունակաբար ընդհանուր ժողով գումարել չյաջողւէ, մինչև ե՞րբ համերութիւն պէտք է ունենայ վարչութիւնը կազմիկազ ընթանալու լոկ կենդանի պահած լինելու համար «Կանանց Քարեգործական ընկերութիւն» ուսուցիկ անունը:

4. ՕՐԻՈՐԴԱՅ ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Այս ընկերութիւնը փակում է այժմ իր գործունէութեան 6-րդ տարեշրջանը: Կազմակերպել է 1910-ին. կանոնադրութիւնը դեռ ևս առաջարած չէ: Ընկերութեան նպատակն է եղել՝ օգնել խեղճ ընտանիքներին, բանալ կարուձևի արհեստանոց, որ պիտի գործէին այդ խեղճ ընտանիքների անդամուհիներին:

Խնամատարն առաջին տարին ունեցել է 30 անդամուհի, տարեկան 12-ական դրան անդամավճարով: Այս ընկերութիւնը նոյնպէս երկրորդ անգամն է որ տեղեկագիր և հաշիւ է ներկայացնում իւր գործունէութեան մասին: Ընկերութեան առաջին 4 տարիների հաշիւներն այս տարի միայն ստացուց: Ընչպէս երեսայ այդ հաշիւներից՝ այժմեան վարչութիւնը շատ է ճշմել վերականգնելու համար նախորդ՝ չորս տարիների և վարչութեան հաշիւների լրիւ պատկերը, սակայն ազարդին:

Այս տարեշրջանում ընկերութեան անդամուհիները սակաւութիւ էին ընդամենը 12 հոգի: Այս երեկոյթը բացատրում է նրանով, որ անդամուհիներն ամուսնանում են, իսկ նորերը չեն մանում ընկերութեան մէջ: Այս հանգամանքը նկատի ունենալով յետագայում ընկերութիւնը որոշել է, հսկասակ իր անւան, շարունակել ամուսնացող անդամուհիներին ևս իրեն խեղճական անդամուհի համարել:

Ն սխանցեալ տարւայ տեղեկագրի մէջ կայ մի խոստովանութիւն այն մասին, որ Օրիորդաց Խնամատար ընկերութեան վարչութիւնների մէջ ընդհանրապէս ցանկալի չափով չէ արկել կանոնադրութիւն և օրինադատութիւն: Այս խոստովանութիւնը պէտք է կցել նաև Կ. Ք. ընկերութեան տեղեկագրին:

Իր նպատակներից գլխաւորը — կարուձևի արհեստանոցը — մի առժամանակ գոյութիւն ունենալուց յետոյ փակել է, որովհետև գործին հետեոզ, անձնէր և աշխատաւր անդամուհիների պակասն առհասարակ միշտ էլ խիստ զգալի է եղել:

Միտիթ արական է սակայն այս անցեալ տարւայ գործունէութիւնը: Թէև անդամուհիներն այնքան քիչ են եղել, որ վարչական մարմնի փոխարէն ներկայացուցչական մի մարմին է գեկավարել գործերը:

Այս տարեշրջանում Օր. Խն. ընկերութեան կատարած գործերն են. —

- 1. Յօզուա հայ կամուարների և գաղթականների կատարել է մի հանգանակու-

Թիւն, որից կանխիկ ստացել է 2466 դրան. ապառիկ մնացել՝ 329 դրան:

Ջգեսանգլն հաւարել է 145 կտոր:

2. Կազմակերպել է յօգուտ Թէ՛հրանի հոյ չքաւոր ընտանիքները մի ներկայացում: Արդիւնք ստացել է 315 դրան, որից ապառիկ՝ 74 դրան:

3. Երկու անգամայ վիճակախաղից գոյացել է 390 դրան, որից 12-ը ապառիկ է:

4. 2 Երկու առթիւ քաղցրեղէնի վաճառումից կանխիկ 203 դրան:

5. Միայն 5 հոգի աւել են տարեկան անդամավճար 12 աւան դրան— 60:

Եթէ համեմատելու լինինք այս երկու ընկերութիւնները կանանք նախ, որ Օրիորդաց Խնամատար ընկերութիւնը թէ՛ն սակաւաթիւ անդամներ ունի, բայց աւելի եռանդ ու գործունէութիւն է ցոյց տալիս մեր իրականութեան մէջ: Սակայն եթէ մօտիկից նայենք կանանք, որ Խնամատար ընկերութիւնը նոյնպիսի մի հիւանդ կոզմ ունի ինչպէս Բարեգործականը: Երկու գէպքում էլ նկատելի է, որ անդամուհիները գնալով հեղհեղ սրահատում են փոխանակ աւելանալու: Այլապէս սոսա՞ծ երկու ընկերութիւնների ոչմերն էլ կեզրանախոյս են:

Մեր խորհուրդը յիշեալ երկու ընկերութիւնների քայրերին այն է, որ եթէ չեն ուզում վերջնականապէս կազմալուծել և արամադիր են անկեղծօրէն հասարակական գործունէութեամբ զբաղել, պէտք է անպայման թօթափեն թմրածութիւնը, աւելի զգաստ ու եռանդուն լինին և մանաւանդ պիտի աշխատեն նորանոր անդամուհիներ հրաւիրել իրանց շարքերում:

5. ԿԱՆԱՆՅ ՄԻ ԽՄԲԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

Ստացւած է մի խումբ կանանց անդեկադիրն ու հաշիւներն իրենց կազմակերպած մի շարք երեկոյթների վերաբերեալ: Այս խումբը ծնունդ է աւել և կազմակերպել այս տարեշրջանում. քաղաքական պայմանների ազդեցութեան տակ, և յատկապէս ուսու-ստանական պատերազմի առթիւ, որին հոյ ողբն էլ կամայ-ակամայ պիտի մտանակցէր, քանի որ հայութեան քաղաքական ճակատագիրն էլ էր շօշափում:

Երեկոյթների նպատակը եղել է բացառապէս «նիւթական օգնութիւն հասցնել Կովկասում կառուց հայ կամաւորներին»: զբամով և հագուստեղէնով:

Ճնորհիւ եռանդուն գործունէութեան 5 անդամուհիներից բաղկացած այս խում-

բը աւել է 6 երեկոյթ, 1914 թիւ նոյեմբեր 20-ից մինչև 1915 Մարտ 14:

Այդ խմբի անդամուհիներն են՝ Տ. Տ. Բերտարէ Քովանեան՝ նախագահուհի, Համաս Թունեան՝ գանձապահուհի, Արուսեակ Մելիք-Սարգսեան՝ քարտուղարուհի, Ասանկէթ Փրէնդեան և Եսթեր Նուրոյան՝ խորհրդակցաններ:

Կանանց խումբը հանգանակել է 1406 դրանի մի դումար. իսկ վիճակահանութեանց համար հաւարել է 52 հոգուց գանազան իրեր բաւական շատ:

Հաշիւների ամփոփումն ունի հետեւեալ պատկերը, որի համաձայն ընդհանուր մուտքը եղել է դրան 10,063.85, որ ստացւում է այսպէս .—

1. Ջուտ արդիւնքը 6 երեկոյթների զբամական նւերներով միասին եղել է 9611.35, որանից ապառիկ մնացել է դրան 58.20:

2. Ազգային Երկսես Դպրոցների օգաին արւած համերգի առթիւ կազմած վիճակախաղի 50% -ը. այսինքն դրան 452.50, որից ապառիկ՝ դրան 101.50:

Այդ գումարները գործադրել են Թիֆլիս փոխադրելու համար՝ 800 բուրլի կանխիկ զբամ, այլ և 150 քօլի հագուստեղէն, որանց բովանդակութիւնը եղել է. —

150 հատ մուշտակ	228 դրանի չոր մրդեղէն
(50-ը նւեր Պ. Յ. Բագայից)	22500 սիգարէթ
200 գոյգ բրդեայ գուլպայ	150 հատ թաշկինակ
81 ,, ,, ձեռնոց	150 կտոր օճառ

Յանձնախմբի մօտ մնում էր դրան 771.25, որից ապառիկ՝ 159.70: Հաւարած իրերից մնում է 11 կտոր, որանց մեծ մասն արծաթեղէն և ոսկեղէն: Խումբը շարունակում է պահել իր գոյութիւնը:

Կանանց այս փոքրիկ խմբի գործունէութիւնը մի փառաւոր տպացոյց է, որ մեր այս գանդաղիտա միջավայրում եւ կարելի է գործել, և երբ ապարէղ են գալիս գործը սիրող և անձնէր անհասաներ, ինչպիսի գեղեցիկ արդիւնք կարելի է ցոյց տալ:

Ուշագրութեան արժանի է որ այս 5 տիկիներին և ոչ մէկը ներկայումս չէ անդամակցում Կանանց Բարեգործական և կամ Օրիորդաց Խնամատար՝ ընկերութիւններին: Մեկնութիւններն ըստինքեան աւելորդ են այն մասին, որ Թէ՛հրանի միջավայրում մեր հայուհիների գործունէութիւնը սերտօրէն կապւած է քմահաճութեան հետ: Այս ողին տարիներից ի վեր իշխում է մեր առաջաբնական գոյնը

միակ պատճառն է, որ Բարեգործական ընկերութիւնը գատուարտած է կրիայի քայլերով առջ գնալու:

Եթէ համեմատութեան գնենք մեր շրջանի կանանց ա.ս կրեք խմբակցութեանց գործունէութիւնը, կտեսնենք, որ սոսնաարակ այդ խմբերի գործունէութիւնը մեծապէս կախումն ունի խմբերին մասնակցող անհատների պատրաստակամութիւնից և արամաղչութիւնից:

6. Թ Ա Տ Ր Ո Ն Ե Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

Պատրոնական գործնական է Թէհրանում 1879-ից, և այնուհետեւ, համարեա միշտ, կապւած է եղել գլխաւոր կանոնի հետ: Քանի որ ազգային գլխաւորները Թէհրանում երբէք գրամական ապահով մի վիճակ չեն ունեցել, ուստի գլխաւորական ծախքերի մի մասը մշտապէս հագուցել է ներկայացումներից զստացած եկամուտներով: Այնպէս որ գլխաւոր անազգակի կերպով պատճառ է եղել, որ մեզնում միշտ էլ կանգուն մնացած լինի թատրոնական բեմը:

Խաղացողները եղել են տեղական երկսեռ սիրողները, ուսուցչական խմբերի անդամները և հազարակա տարիներում Կապիտալից եկած դերատան-դերատանուհիները: Սակայն սրանցից յատկապէս առաջին երկու կարգի սիրող-սիրողուհիները բեմական-գեղարուեստական արեստին ծառայելով հանդերձ, նրանց գլխաւոր նպատակն է եղել դրամապէս օգնած լինել Թէհրանի ազգային երկսեռ գլխաւորներին:

Քաջաբութեան և երախտագիտութեան անաղայման արժանի են նրանք, որոնք ամէն տեսակ անյարմարութիւններ ու խոչընդոտներ արհամարհելով, շարունակում են ասկաւին այդ ասպարէզում բարձր պահել հասարակական յառաջգիմութեան գրօշակը: Այստեղ, ի գէտ, պէտք է յիշատակել Թէհրանի հայկական բեմի բազմամեայ մի գործչի Պ. Յարութիւն Մարախրոսեանի սնունդը, որի բեմական գործունէութեան 25-ամեակը ածուել է արդէն 1906-ին:

Նիւթական սուղ պայմանների պատճառով Թէհրանում Դպրոց և Պատրոնատակաւին միեւնոյն շինութեան մէջ են պարփակւած:

Ա. ՀԱՍՆԱԲԱԿ ԹԱՂԻ ԹԱՏԵՐԱՍԻՐԱՅ ԽՈՒՄՅ:

Տեղեկագրից իմանում ենք որ, Թէհրանի Պատրաստարաց ընկերութեան հասանարագի խումբն ունի այժմ 24 երկսեռ անդամներ: Վարչութիւնը 7 հոգուց է բաղկացած: Վարչութեան օժանդակ ընտրել է և մի մասնախումբ 3 հոգուց բաղկացած՝ սեպերտուար կազմելու համար: Այս տարեշրջանում կազմակերպել է 5 ներկայացում (մէկը կրկնողութիւն) իսկ վեցերորդը՝ ամենավերջինը՝ բոլորովին պատրաստ է եղել միայն վարչութիւնից անկախ պատճառներով յետաձգել է:

Ներկայացումները հանրամատչելի դարձնելու գիտաւորութեամբ տոմսակները արժէքները եղել են ըստ առաջնայն 15-2 դրան: Հակառակ ցանկութեան՝ վարչութեանը յաջողել է կրկնել միայն մի ներկայացում արժանացրած տոմսակներով, այսինքն 3 դրանից մինչև 5 շահու արժէքներով:

Նախկին տարիներից զանազան անձանց մօտ մնացած իրերը և գրքերը հնարաւոր եղածին չափ հատարել է, և առիտն մնացած բոլոր հաշիւները փակել:

Վարչութիւնն զբաղել է նաև Թէհրանի բեմին յարմար նոր զեկուղներ ունենալու խնդրով: Սակայն այդ նպատակն իրագործւած չէ լիովին՝ դրամական սուղ պայմանների պատճառով:

Մի տարւայ գործունէութեան վերաբերեալ հաշիւների համառօտութիւնից երևում է, որ մուտք եղել է —

դրան	6605.	—
եւր	4102.	—
մնացորդ	2503.	—

Երկսեռ գլխաւորների հազարարձութեանը վճարել է 1750 դրան

Մնում էր վարչութեան մօտ ապառիկներով միասին 753 ,,

Ինչպէս տեսնում ենք ելքը բաւական մեծ զուժար է ներկայացնում. դրա բացաղբութիւնն այն է որ, ամենախրջին ներկայացման ասթիւ (Թագի համար) շատ ծախսեր են կատարել:

Տեղեկագրից երևում է, որ երկու թաղերի խմբերի մէջ լաւ յարաբերութիւններ չկան. այնտեղ աււած է. —

„Ընկերութիւնն զբաղել է նաև կանոնադրութեան վերաբնութեան հարցով, որ մնացել է առիտն շնորհիւ Դարվազա-Ղարլինի բաժանմունքի:

Մեր մի քանի գրաւոր զիմումները մնացել են անպատասխան. իսկ ընթանա-

ցի բանակցութիւնների հետեանքը խոստումներից այն կողմ չեն անցել:՝  
Նոյնպիսի մի գանդատ կայ նաև Հոգարարձութեան գէմ. —

„Պարոցի սրահի և սենեակների պայմանաւորման համար վարչութիւնս 1914-ի Սեպտեմբերին գիմել է Հոգարարձութեանը և մի քանի պնդումներից յետոյ Հոգարարձութիւնը հագիւ պատասխանել է 1915-ի Փետրւարին: Այդ պատասխանից յետոյ մենք իսկոյն ուղարկել ենք մեր առաջարկած փոփոխութիւնները. սակայն մինչև այսօր Հոգարարձութեան կողմից մնացել է անպատասխան“:

Համայնական Վարչութիւնը Թատերասիրաց ընկերութեան Հասանարազի բաժանմունքի գործունէութեան վերաբերմամբ պարտք է համարում հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել հետեակ հանգամանքի վրայ:

Հաշիւների համաօտութիւնից երևում է, որ մուտքի համարնա 3/4-ը ծախսւած է: Մի ընկերութեան համար, որի նպատակը զպրոցներին օգնել է, աննկրելի է այդչափ շատյութիւն: Իբրև ծանօթութիւն պիտի ասենք, որ յիշեալ ընկերութիւնը մինչև երկու տարի առաջ Հոգարարձութեան հսկողութեան տակ էր և իրաւունք ունէր զուտ եկամտաւ միայն 10% -ը յօգուտ իւր պահել բնի բարեփոխումների և անհրաժեշտ մեծ ծախքերի համար:

Երբ կազմեցաւ նոր կանոնադրութիւնը, որով ընկերութիւնն իբրև անկախ ցանկանում էր գործել, Համ. Վարչութիւնը վաւերացրեց կանոնադրութիւնը վստահ լինելով, որ Թատերասիրաց ընկերութիւնը կաշխատէ գործել, ինչպէս առաջ, այսինքն զպրոցների շահը նկատի ունենալով:

Թէև յօգուտ ընկերութեան պահելիք սովոր 10-ից 25-ի էր բարձրացել, սակայն, ցաւելով, այժմ տեսնում ենք, որ Թատերասիրաց ընկերութիւնն իր եկամտաւ 3/4-ը ծախսել է: Տւել է 4 ներկայացում և մի կրկնողութիւն, և այդ բոլորի վրայ ծախսւած է 410 թումանի չափ մի գումար:

Ինչ վերաբերում է 6-րդ ծրագրելիք ներկայացման վերաբերեալ պարագաների համար եղած ծախսերին, զբանք ներկայացումների ընդհանուր ծախսերի մէջ չպիտի մտնէին, այլ յօգուտ ընկերութեան մնացած 25% -ի հաշիւն պիտի ծախսւած լինէին:

Այս յիշեալ իրողութեան հիման վրայ հարկ ենք համարում զգուշացնել, որ, եթէ սոյն ընկերութեանը ապագայում եւ շարունակէ նոյն ձևով գործել, Համ. Վարչութիւնն ստիպւած կըլինի զրկել նրան իր վստահութիւնից:

Բ. ԴԱՐՎԱԶԱ-ՂԱԶԻԻՆ ԹԱՂԻ ԹԱՏԵՐԱՍԻՐԱՅ ԽՈՒՄԲ.

Այս խմբի ծագումը կապւած է նոյն թաղի զպրոցական խնդիրների տաթիւ 1913-ին ծնունդ առած „անճատական“ շարժման հետ:

Անցեալ տարի այդ խումբը աւելի մի հաշիւ, սակայն բուական ուշացած. իսկ տեղեկազիր 1913/14 տարեշրջանի մասին խմբի վարչութիւնը հնարաւորութիւն չունեցաւ տալ: Այժմ 1914/15-ի տեղեկազրից և հաշիւներից երևում է, որ խումբն այս անցեալ տարեշրջանում աւել է միայն մի ներկայացում:

Զուտ շահը եղել է	գում	471.90
Ե. Գ. Հոգարարձութեանը յանձնել է	„	300.—
Նոյն խմբի նախկին պարտքի դիմաց վճարւած է	„	171.90
Վարչութիւնը ներկայացրել է նաև իր իրերի ցուցակը	լինվեաւորը:	
Խումբն այժմ թեւախում է իր գործունէութեան երրորդ տարեշրջանը:		

Պէտք է ասել, որ տեղեկագիրն անխնամ ու չտապով է կատարւած, և մի քանի կարևոր մանրամասներ պակասում են. օրինակ՝ չգիտենք թէ Գ. Ղ. Թատերասիրաց խումբն այժմ քանի՞ անգամ ունի. վարչութիւնը քանի՞ հոգուց է բաղկացած և այս անցեալ տարեշրջանում այդ խումբը Հասանարազի պիտուր խմբի հետ ինչպիսի յարաբերութեան մէջ էր:

7. ԳՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մանկավարժական և հոգարարձական գործունէութեանց ծառայուն և բազմա-  
բովանդակ լինելու պատճառով, մե՛ք այդ մարմինների տեղեկագիրք նայնու-  
թեամբ ղետեղում ենք այս հրատարակութեան մէջ:

Սակայն նախ ի դէպ ենք համարում մի քանի խօսք ևս ասել Թէհրանի  
Ազգային դպրոցների սկզբնաւորութեան շրջանի մասին:

Թէհրանում հայոց կրթական հաստատութիւնները՝ Գոլրոց — Թատրոն — Ընթեր-  
ցարան — Գրադարան՝ ունեն մօտ 1/2 դարի պատմութիւն, որը հասնում է 19-րդ  
դարի հօթանասնական թւականներին:

Թէհրանի հայութեան մէջ այդ սկզբնական կրթական հաստատութիւնները  
հիմնել են երեք հոգի տաճկահայեր. —

ԱԶԱ ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՅՈՎՍԷՓ ԳԱՍԳԱՐԵԱՆ և

ԿԱՐԱԳԵՏ ԲԱԶԻՐԿԵԱՆԵԱՆ,

որոնք նախկին „Ուսումնասիրաց Ընկերութեան“ հիմնադիրներն են եղել  
Թէհրանում 1870-ին:

Այս երեք անձնաւորութիւնները եղել են միաժամանակ Թէհրանի առաջին  
„հոգարարձական“ և „Մանկավարժական“ մարմինների ներկայացուցիչները:

Առաջաւորութիւնը և երախտագիտութիւնը պահանջում է ասել, որ այս երեք  
անձնաւորութեանց մէջ մանաւանդ առաջինը՝ Ազա Միքայէլ Մարգարեանը՝  
յիշատակութեան արժանի խոշոր դեր ունի կառուցած Թէհրանի հայ ժողովրդի  
յառաջադիմութեան գործում:

Իրրե անձուրոջ և զաղափարական մի մարզ, նա եղել է միաժամանակ հասա-  
րակական ընտանեկան և ուժեղ կամբոյլ օժտւած մի անձնաւորութիւն:

Իրրե հասարակական շահերի պաշտպան և իրրե ժողովրդական ձեռնարկչու-  
թեան նախանձախնդիր, նա յամառ պաշար է մղել այն հոգեւորականների դէմ,  
որոնք նայել են հայ ժողովրդին իրրե իրանց հօտի վրայ, որին որքան ուզեն  
կարող են „խուզել“: Այդպիսիներին Ազա Միքայէլը պատասխանում էր. — „Մենք

ալ ազ հօտին շուներն ենք, կիսածնենք, չենք թող տար“:

Մինչև իր կեանքի վերջը նա հաւատարիմ մնաց իր զաղափարին: Իր հան-  
դիսան ու սոսցւածքը զոհեց ի սէր Թէհրանի հայ ժողովրդի և վախճանեց  
Թէհրանում: Նրա շիրիմը գտնոււմ է քաղաքիս Ս. Գևորգ եկեղեցու նախագաւթում,  
մի մարմարեայ գերեզմանաքարով, որի վրայ կարդացում է. —

Յիշատակն մշակաց ազգիս օրնութեանը եղիցի

Միքայէլ Ա. Մարգարեան

Հիմնադիր Ուսումնասիրաց Ընկերութեան

Ծնաւ ի Կ. Պոլիս 1830

Վախճանեցաւ ի Թէհրան 1893

Յովսէփ Գասպարեանն սկսել է պաշտօնավարել 1870-ից, երբ Ուսումնասիրաց  
ընկերութիւնը բացել է „Հայկազեան վարժարանը“, և իրրե ուսուցիչ շարունա-  
կել է գործել մինչև իր մահը: Այս երկու շիրիմներն իրար կից են: Գասպարեանի  
գամբարանի վրայ գրւած է. —

Յիշատակն մշակաց ազգիս օրնութեանը եղիցի

Յովսէփ Գասպարեան

Ուսուցիչ Ո. Բ. Հայկազեան Վարժարանի

Ծնաւ ի Գամատկոս 1842

Վախճանեցաւ ի Թէհրան 1898

Երրորդը Պ. Կարապետ Բազիրկեանեան՝ վարել է Ուսումնասիրաց ընկերութեան  
նախագահի պաշտօնը: Նա երկար ժամանակ է, որ անձնական գործերով հեռացել  
է Թէհրանից:

Ազա Միքայէլի սկսած գործը կանգ չտուաւ: Հայկազեան դպրոցի ղեկավարու-  
թիւնն այնուհետև անցաւ ժողովրդական ընտրեալների ձեռքը և շնորհիւ մի շարք  
անձնէր և հետևողական անհատների, դպրոցը Թէհրանում ժամանակի պահանջ-  
ների համաձայն տարէջ-տարի աւելի ծաղկեց թէ՛ ծրագրով և թէ՛ բիւզձէով:

Գծրազգարար մեր ներկայ հրատարակութեան ծառայը թոյլ չէ տալիս տեղի  
կանգ առնել անցեալի պատմութեան վրայ և ցոյց տալ թէ՛ ինչքան խոշոր տար-  
բերութիւն կայ մեր այժմեան դպրոցի և նախնական շրջանի միջև:

Այս յառաջադիմութեան գործում շատ կամ քիչ չափով մասնակցել են նոյն

Ուսումնասիրաց Ընկերութեան անդամներից շատերը, որոնք այժմ գտնուում են Թէհրանում, Հայկազեան վարժարանի սուաջին սաները, և թէ նորանոր մարդիկ:

Համեստութեան զէմ համարելով մի առ մի յիշատակել այստեղ մեր զբաղ-  
բացական գործերը դեկալորոզ մի շարք պատկառելի անհատների անունները,  
բառականանում ենք միայն հրատարակու արտայայտելով Թէհրանի Հայութեան  
անունից մեր երախտագիտութիւնը, յատկապէս այն անհատներին, որոնք տասնեակ  
աւարինեւր ամենայն գոհոյութիւն յանձն անելով սուաջ են շարժել նոր սերնդի  
կրթութեան և ժողովրդային բուստորութեան անկւր:

Գլորացական մուշքերի-բիզմէի բնդարձակման ատթիւ պիտի յիշատակենք  
այստեղ մեր զպրոցական բարերարներից սմանց անունները, որոնց մանրամաս-  
նութիւնը կարելի է անանել գրքոյկիս վերջում զպրոցական հաշիւների մէջ: —

Յովաննէս Աւետեան (Էւր կենջ Հանգուցեալ

Տ. Քաղազու յիշատակին, Եկատերինոզարից):

Հանգուցեալ Ամիր-Քուման Մարտիրոս Խան Գուրիթխանեան:

Տ. Անահիտ Եփրեմ, ի յիշատակ իւր ամուսնու:

Աղա Սէթ Ներսէսեան:

Բակնդէր Խան Գուրիթխանեան:

Տ. Մարիամ Սէթխանեան:

Հսիսիմէ Խանում, և այլք:

Որոնց նախադրութեանց շնորհիւ Թէհրանի հաշոյ զբոցն այսօր մտնածը  
ապահոված է, քանի որ 12 հազուց բազիլայած մի ուսուցչական խումբ պահուած  
է տաշեկան սօսաւորապէս 6000 թուման մի գումարով:

Յանուն զգլորցակ են գործի հրատարակով յայտնում ենք շնորհակալութիւն  
մեր զպրոցների բոլոր բարերարներին:

**Ա. ՏԵՂԵԿԱՅԻՐ**

**ԹԻՆՐԱՆԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԵՐԿՄԵՆԻ ԳՊՐՈՅՆԵՐԻ**

1914/15 ՈՒՍ. Տ. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՃԵՒ:

(Տեսուչ զր. Վարդան Յովհաննիսեանի բացակայութեան պատճառով Մանկա-  
վարժական Խորհրդի յանձնարարութեամբ ուսուցիչ Գ. Ալեքսան Յովհաննիսեանն է  
ներկայացնում մեր զպրոցների կրթական վիճակի ակզեկագիրը: —

Սովորաբար տեսուչն է հետևում զպրոցական աշխատանքների և կեանքի բնդհա-  
նուր ընթացքին, ուրեմն և միայն նա հնարաւորութիւն ունէր ուշադրութեան  
առնելու այն ամէնը, ինչ որ կիրաւափէ սոսկ գասատի ուշադրութիւնից Տեսուչը  
հեռանալիս ոչ մի գրութիւն չէ թողել:

Գլորցը բացել է Սեպտ. 8-ին, և այդ օրանից իսկ սկսել են նախապարաս-  
տական աշխատանքները, այն է նորեկների բնդունելութիւնը, վերաբննելի աշա-  
կերանների հարցաքննութիւնը և յարակից աշխատանքները: Սակայն գրազումները  
կանոնաւորել ևն հսկանքներ 15-ից ոչ շատ: Վերջին երկույթի պատճառները մի  
քանի են և մեզից անկախ:

Տեսուչ և բարձր գատարանների մաթեմատիկայի գասատու հրաւիրել են  
հազիւ Սեպտեմբերի վերջին: Նախորդ տարւոյ ուսուցիչներից Գ. Գ. Ալեքեան  
Հողարարութեան հետ այս տարւոյ համար ևս պայմանաւորած էր. սակայն  
ցաւելով տէաք է յիշատակել, որ յիշեալ պարտեր. երբ զպրոցն արգէն բացած էր,  
հնազրով իր հրաժարականն էր տալիս: Նրան փոխարինող Գ. Ս. Կիրակոսեանը  
հազիւ կարողանում է Սեպտ. 19-ին Թէհրան գալ: Այս բոլորի վրայ աւելցնելով  
և այն հանգամանքը, որ տեսուչ զր. Վ. Յովհաննիսեանն ու Գ. Տ. Բարամեանը  
չստուկ պայմանաւորութեամբ որոշ ժամեր միայն յաճախել կարող էին մեր  
զպրոցը, հատկանալի կլինի թէ ինչու վերջնական գասադաւցակը հսկանքների  
կէսերին հազիւ կարելի եղաւ կազմել:

Ուսուցչական կազմն անցեալ տարւոյ համեմատութեամբ բաւական փոփոխութեան է ենթարկւած: Այս տարւոյ կազմի մէջ եղել են հետեւեալ 12 ուսուցիչ-վարժուհիները. —

Գերասիմեան Տ. Նւարդ	Յովհաննիսեան Գր. Վարդան
Գրիգորեան Պ. Ալէքսան	Պարսկերէնի ուսուցիչ—միւրզա
Խոսրովեան Օր. Հովհիմիմէ	Սարվարեան Տ. Մարգարիտ
Կիրակոսեան Պ. Ստեփան	Ստեփանեան Պ. Գէորդ
Յովհաննիսեան Պ. Ալէքսան	Սեիկեան Պ. Սեդրակ
Յովհաննիսեան Պ. Վարդան	Քարամեան Պ. Հայկ

որոնց վրայ բաժանուած են եղել հետեւեալ դաս—առարկաները շարաթական 25 դաս միջին թւով. —

Բարոյախօսութիւն	Քննապատմութիւն
Հայերէն	Պատմութիւն Հայոց
Պարսկերէն	Պատմութիւն Ընդհանուր
Փրանսերէն	Ձեռարկեստ
Ռուսերէն	Ձեռագործ
Թւարանութիւն	Նկարչութիւն
Հանրահաշիւ	Երաժշտութիւն
Երկրաչափութիւն	Եւրոպական պատմութիւն
Քննադիտութիւն	Քննադիտութիւն (քիմիա)
Աշխարհագրութիւն	Իրազննութիւն

Թէ՛հրանի Ազգային Երկսեռ դպրոցների ծրագիրը համապատասխանում է կովկասեան մեր միջնակարգ դպրոցների ծրագրին իննամեայ դասընթացով—3 բաժանմունք և 6 դասարան:

Ուսուցիչները դասերից բացի՝ գրեթէ բոլորն էլ՝ ստանձնել են զանազան պարտականութիւններ ևս՝ ի հարկէ ձրիարար: Այսպէս՝ Պ. Պ. Ա. Գրիգորեան, Ա. Յովհաննիսեան, Ս. Կիրակոսեան, Ս. Սեիկեան, Գ. Ստեփանեան և Օր. Խոսրովեան՝ ամբողջ տարին կատարել են հերթական վերակացութիւնը, որովհետև առանձին վերակացու չէ եղել: Պ. Ա. Յովհաննիսեան և վերջում նաև Պ. Վ. Յովհաննիսեան՝ կատարել են Մանկավարժական ժողովի քարտուղարութիւնը,

Պ. Ս. Կիրակոսեան՝ գրադարանապետութիւնը, Պ. Գ. Ստեփանեան՝ մթերապահութիւնը և տեսչի փոխարէն ղեկավարել է աշակերտական ինքնավարութիւնը, Պ. Վ. Յովհաննիսեան՝ աշակերտական թերթը:

Դաստիարակութիւն կատարել են հետեւեալ կարգով. —

Ա. բաժանմունք Օր. Հ. Խոսրովեան	Գ. դասարան Պ. Ս. Կիրակոսեան
Բ. ,, Տ. Ն. Գերասիմեան	Գ. ,, Պ. Ա. Յովհաննիսեան
Գ. ,, Պ. Ա. Գրիգորեան	Ձ. ,, Պ. Գ. Ստեփանեան
Ա. դասարան Պ. Ա. Գրիգորեան	Ա-Բ բաժ. Տ. Մ. Սարվարեան
Բ. ,, Պ. Ս. Սեիկեան	Գ. ,, Պ. Վ. Յովհաննիսեան

Հիւանդութեան և այլ պատճառներով ուսուցիչներն ունեն բաւական թւով չպարագած դասեր. բայց և աշխատել են, աւելորդ պարագմունքներով հնարաւորութեան չափով բացը ծածկել. —

Ուսուցիչների բացակայութիւնը (որի մէջ հաշւած են նաև ուշացումները) և աւելի պարագած ժամերն են. —

	Բաց թողած դասեր	Աւելորդ պարագած
Տ. Ն. Գերասիմեան	57	—
Պ. Ա. Գրիգորեան	1	8
Օր. Հ. Խոսրովեան	13	—
Պ. Ս. Կիրակոսեան	19	6
Միւրզա	8	—
Պ. Ա. Յովհաննիսեան	2	6
Գր. Վ. Յովհաննիսեան	23	7
Պ. Վ. Յովհաննիսեան	2	35
Պ. Գ. Ստեփանեան	8	1
Պ. Ս. Սեիկեան	28	45

Այս բացակայութեանց մէջ չեն հաշւած Տ. Ն. Գերասիմեանի հեռանալու պատճառով չպարագած դասերը:

Տարեկերթին մեր դպրոցների աշակերտութեան թիւն էր 213, որ բաժանուած է եղել դասարաններում այսպէս. —

**Ա. ՀԱՍԱՆԱԲԱԿ**

	Տղայ	Աղջիկ	Գումար
I րաժանմունք	18	22	40
II „	10	12	22
III „	18	21	39
I դասարան	13	22	35
II „	9	13	22
III „	5	10	15
IV „	3	8	11
VI „	2	7	9
<b>Բ. ԴԱՐՈՒՆԱԳՆԱԳՆԱԿ</b>			
I րաժանմունք	1	3	4
II „	11	1	12
III „	2	2	4
<b>Ընդամենը</b>	<b>92</b>	<b>121</b>	<b>213</b>

Հինգերորդ դասարանում աշակերտ չէ կցել:

1910/11 թվից սկսած աշակերտութեան թիւը մեր դպրոցներում գնալով նւազել է. բայց այս տարի անցեալ տարւոյ վրայ մէկով աւելացել է: Անցեալ տարի 212-ից 100-ը աղայ և 112-ը աղջիկ էր: Այս տարի 213-ից 92-ը աղայ և 121-ը աղջիկ: Նկատելի է, որ աղջիկեանց թիւը աւելացել է իսկ աղաներինը նրակատել է:

Այս տարի աշակերտների դասերից բացակայութեանց գումարն է 8520, որով ամէն մի աշակերտի վրայ ընկնում է 40 ժամ 45-ով աւելի անցեալ տարւոյ վրայ:

Բացակայութեանց այս թիւը շատ խոշոր է և մեծապէս ազդում է դպրոցի յառաջադիմութեան վրայ: Աշակերտների այս տարւոյ յառաջադիմութիւնը հետևեալ պատկերն է ներկայացնում.

121 աղջիկներից՝	92 աղաներից՝		
փոխադրւում են 68, հոգի 56 <sup>0</sup> / <sub>100</sub>	փոխադրւում են 51, հոգի 55 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>100</sub>		
մնում են 30 „ 25 <sup>0</sup> / <sub>100</sub>	մնում են 31 „ 33 <sup>1</sup> / <sub>2</sub> <sup>0</sup> / <sub>100</sub>		
վերաքննելի 23 „ 19 <sup>0</sup> / <sub>100</sub>	վերաքննելի 10 „ 11 <sup>0</sup> / <sub>100</sub>		

Այս տարի աղջիկները <sup>1</sup>/<sub>2</sub> ափսոս աւելի յառաջադիմութիւն են ցուց տել քան աղաները: Անցեալ տարի այդ առիտը 3 էր: Եւրեմն այս տարի աղաները աւելացրել են իրանց աշխատանքը <sup>2</sup>/<sub>2</sub> ափսոսով:

Համեմատելով նախորդ տարւոյ հետ մեր դպրոցի յառաջադիմութեան աստիճանն այս տարի իջել է: Այստեղ իրանց զերն անեն մի շարք հանգամանքներ: Կանոնաւոր դրազումները միշտ ուշ են սկսւում. դասադրքերը ժամանակին չեն հասնում, դասատուները՝ դրանց հետ և դասատուութեան եղանակը, ամէն տարի փոխւում են: Բացակայութեանց թիւը շատ խոշոր է:

Այս հանգամանքները, որոնք ամէն տարւոյ համար ընդհանուր են մեր դպրոցում, անշուշտ անդրադառնում են դպրոցի յառաջադիմութեան վրայ:

Գրանցիկի բացի կան զեռ աւելի հիմնաւոր պատճառներ ևս: Մանկավարժական ժողովը՝ ինչպէս միշտ՝ այնպէս և այս տարի թէև դրազել է այդ ցուց բուժելով խնդրով, սակայն որովհետև յիշեալ պատճառները մեր ժողովից անկախ են, ստախ և ձեռք առնւած միջոցները մեծ մասամբ նպատակին չեն հասել: Յամենայն դէպս այս խնդրի վրայ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել:

Առանձնապէս գնահատելի է Պ. Ա. Գրիգորեանի թափած աշխատանքը գործիքաւոր երաժշտութեան վրայ: Ընդամենը 3 տարի է, որ այդ առարկան մտել է մեր դպրոցը և զեռ ևս դաստցուցակի մէջ իւր յատուկ ժամերը չունի. բայց, այնուամենայնիւ, այս տարի հասար ցանկալի բարձրութեան, և այդ առարկան մեր դպրոցական դարձրելից մէկն էր, թէ շնորհիւ Պ. Ա. Գրիգորեանի ջանքերի և թէ այն հանգամանքի, որ խումբը ճօխացաւ նոր գործիքներով:

Յիշատակութեան արժանի է մի այլ հանգամանք ևս: Մանկավարժական ժողովն այս տարի իր որոշումների և գնահատումների մէջ կցել է աւելի խիստ: Գեռ ևս ուսումնական տարւոյ սկզբին բոլոր այն վերաքննելի աշակերտները, որոնք անպատրաստ գտնուցին, արձակուցին դպրոցից, որովհետև երբորդ տարին նոյն դասարանում պիտի մնային: Նոյն պատճառով ամբողջ տարւոյ ընթացքում դպրոցից արձակուել են 7 հոգի:

Գլխաւորում աւանդւած առարկաները կմնան որպէս լուկ գիտելիքներ՝ չոր ու ցամաք, և թէև դրանց հետ դուրքնութացաբար չզնայ ընթերցանութիւնը: Դժբախտաբար ընթերցանութեան գործի տեխնիկան հարկաւոր ձևով դրւած չէ, որպէս

զի հնար լինէր աշակերտութեան ընթերցասիրութեան ստոյգ պատկերը ներկայացնել: Այնուամենայնիւ, կարելի է համարձակ ասել, որ մեր աշակերտութիւնն ընդհանրապէս ընթերցասէր չէ:

Այդ պակասին դասատուն հանդիպում է ամէն քայլափոխում: Այդ երևոյթի պատճառը մեր միջավայրի մշակոյթի մակարդակի մէջ պիտի որոնել ընդհանրապէս: Սակայն պակաս դեր չէ խաղում անշուշտ և այն, որ մեր մանկական դրազարանը ցանկալի վիճակում չէ գտնուում: Բաւական է յիշատակել, որ դրազարանում պակասում են մեր հեղինակների երկերի մեծագոյն մասը. այնպէս որ յաճախ, որեւէ անհրաժեշտ գիրք ձեռք բերելու համար, մարդ ստիպւած է լինում մասնաւոր անհատների մօտ որոնել:

Այս բացի վրայ պէտք է մասնաւորապէս ուշադրութիւն դարձնել: Գրադարանը պէտք է կանոնաւորել, լրացնել և ճոխացնել: Սա կապւած է աւելի նիւթական զոհողութեան հետ: Յոյս ունենք, որ հոգաբարձութիւնը կհարողանայ այդ կողմից ցանկալի բարձրութեան հասցնել գրադարանը:

Աւելի նուրբ խնդիր է աշակերտների մէջ ընթերցանութեան սէր գարթեցնելը: Դա արդէն կախւած է մասամբ դպրոցական գործի ընդհանուր վիճակից և թէ ուսուցչական կողմի վերաբերմունքից:

Թէ գործնական և թէ կրթական տեսակէտից մի շարք անյարմարութիւններ է ներկայացնում դպրոցի Գարվազա-Ղազվինի ճիւղը: Ընդամէնը քսան՝ և երբեմն աւելի պակաս թւով՝ աշակերտների համար ստիպւած ենք լինում մի քանի ուսուցիչ պարապաղցնել. մեծ դժարութիւններով դասուցուցակ յարմարեցնել և դասերի խանդարումն առաջ բերել, որովհետև միաժամանակ երկու դպրոցում էլ դասեր ունեցող ուսուցիչները՝ հեռաւորութեան պատճառով՝ չեն կարողանում ժամանակին տեղ հասնել: Դրանց վրայ պէտք է աւելացնել նաև դրամական հարցը:

Այդ բոլոր անյարմարութիւնների գիմաց Գարվազա-Ղազվինի ճիւղը ոչ մի առաւելութիւն չէ ներկայացնում, բացի այն, որ մի քիչ մօտ է նոյն թաղի մանր երեխաների համար: Սակայն, կարծում ենք, որ կարելի է որոշ գիւրութիւններ ստեղծելով այդ երեխաներին փոխադրել հասանարդի դպրոցը: Յոյս ունենք, որ հոգաբարձութիւնը համաձայնութեան կգայ հասարակութեան հետ և ցանկալի լուծում կտայ այդ խնդրին:

Գպրոցական գործի յաջողութեան ամենագլխաւոր պայմաններից մէկն է ընտանիքի աջակցութիւնը: Սակայն, պէտք է խոստովանել, որ այդ աջակցութիւնը մենք գրեթէ չենք ստանում: Ծնողները գիտեն, որ իրենք իրաւունք ունեն իրանց ձայնը լսելի անելու որոշ խնդիրների առթիւ, և որ ամէն գպրոցական վարչութիւն էլ յարգում է այդ իրաւունքը: Բայց այդ իրաւունքից մեր աշակերտների յարկելի ծնողները շատ քիչ են օգտւում. այն էլ մեծ մասամբ ոչ ցանկալի ձևով:

Յաճախ ենք լսել արտունջներ, քննադատութիւններ: Երբեմն նկատել է միտում, որոնելու և գտնելու համար դպրոցում որևէ թերութիւն, և բերնէ-բերան անցկացնելով, ցոյց տալ, որ իրենք իրենց պարտքն են կատարում: Այդ նկատի ունենալով է, որ մենք յաճախ ստիպւած ենք եղել, հէնց յանուն գործի յաջողութեան՝ անուշադրութեան մասնել այդ ձայները: Բայց, այսու հանդերձ, խորին համոզմունքով շեշտում ենք, որ ընտանիքի և հասարակութեան գիտակից անհատների աջակցութիւնը դպրոցի համար անհրաժեշտ է: Յանկալի է սերտ կապ ստեղծել դպրոցի և ընտանիքի մէջ: Բայց որպէսզի այդ կապն իր իսկական նպատակին ծառայէ, հարկաւոր է փոխադարձ հասկացողութեան դուր և գործելակերպի մէջ ներդաշնակութիւն մտցնել: Իսկ դպրոցի և ընտանիքի մէջ այդ ցանկալի յարաբերութիւնն ստեղծել կարելի է ծնողական ժողովներով: Այդ ժողովներում դպրոցն ու ծնողներն իրար կհասկանան և կյարգեն: Այդ դէպքում ծնողներից և հասարակութիւնից եկած ձայներն էլ դպրոցի վարիչ մարմնի կողմից խորին ուշադրութեան կարժանանան:

Գաստաւութեան եղանակների մէջ որոշ միօրինակութիւն մտցնելու և աւելի կատարելութեան հասցնելու համար, Մանկ. խորհուրդն այս տարի ևս ցանկալի և անհրաժեշտ է համարել փորձնական դասերը: Բայց, պէտք է ասել, որ մի շարք տեխնիքական անյարմարութիւնների պատճառով, գլխաւորապէս ժամանակ չլինելու համար, 1-2 փորձից յետոյ ստիպւած եղանք դադարեցնել:

Ուսուցչական խումբը գրեթէ ամէն շաբաթ Մանկավարժական ժողովների նիստ է ունեցել: Զբոսայգի նիւթ են եղել մանկավարժական-կրթական և վարչական խնդիրներ: Առաւելապէս ուշադրութեան է արժանի դպրոցի կրթական մակարդակը բարձրացնելու հարցը:

Այս տարի Մանկավարժական խորհրդի նիստերում ներկայ գտնելու իրաւունք

ունէին հոգարարձութեան կողմից 1-2 հոգի: Ուրտն և ցանկալի լինի դպրոցի երկու մարմինների մէջ սերա կապը, այնուամենայնիւ պէտք է շեշտել, որ թիւրմացութիւններն անխուսափելի կլինեն, եթէ շարունակէ այս անորոշ և տարտամ զրութիւնը:

Գպրոցի համար անհրաժեշտ է մի ներքին կանոնադրութիւն, որով ճիշտ որոշւած լինեն երկու մարմինների իրաւասութեան սահմանները:

Գպրոցական կարգապահութեան հետ անմիջապէս կապուած է աշակերտական ինքնավարութիւնը: Կարգապահութիւնը միշտ գպրոցում պէտք է մի առանձին ուշադրութեան արժանանայ: Քաւական չէ, որ աշակերտները շատ բան գիտնան: Որոշ գէպքերում, զուցէ և աւելի անհրաժեշտ է, որ նրանք լինեն բարեկիրթ, յարգելի իմանան իրենց և ուրիշի անձը, յարգելի կարողանան կարգն ու կանոնը: Այդ նպատակին հասնելու համար թոյլատրելի են յատուկ այնպիսի միջոցներ, որոնք ազգում են միայն աշակերտների գիտակցականութեան վրայ:

Այդ տեսակէտից քաջակերելի է աշակերտական ինքնավարութեան սկզբունքը, որն արդէն դառնում է մեր գպրոցի աւանդական սովորութիւններից մէկը: Իւրաքանչիւր աշակերտը վարժուած է յարգելի կարգ ու կանոնը և ենթարկուել կարգադրութեանց որպէս այդպիսիների և ոչ թէ որպէս իշխանութիւն ունեցողներից եկող հրամանների: Պատահում են գէպքեր, երբ աշակերտը միամտութեամբ է վերաբերում գէպի իւր ընկեր-միներստրի կարգադրութիւնը. բայց դրանք մասնակի գէպքեր են, որ կարող են պատահել և այն գէպքում, երբ իրանց ընկերը չէ կարգադրութիւն անողը:

Ի հարկէ չենք ուզում տեսլ, որ այդպիսով կարգապահութիւնը և յարակից գործերն այսօր մեր գպրոցներում իդէալական աստիճանի վրայ են դանւում: Թերութիւններ, երբեմն մինչև իսկ աչք ծակող, կան. բայց աշայուրջ և շրջահայեաց վերաբերմունքը կարող կլինէ յոռի երեսյթները, եթէ ոչ իսպառ վերացնել, գոնէ նւաղեցնել: Աշակերտական ինքնավարութեան հետ կապուած խրախուսելի մի ձևանարին է նաև աշակերտական «Փարոս» թերթը, որի մէջ տեղ են բռնում մեր աշակերտների գրական փորձերը: Աշակերտական ինքնավարութեան արժէքն այդքան բարձր գնահատելով հանդերձ պէտք է շեշտել, որ նա այս տարի քիչ շափով արդարացրեց մեր սպասելիքները: Սակայն յայտ ունենք, որ յետագայում աշակերտութիւնն աւելի կսիրէ իրեն համար թանկ ինքնավարութիւնը:

Մասնաւորապէս աշակերտների բնաւորութիւնը կրթելու և նրանց մէջ հաստատակարան զգացումներ գարթեցնելու և դարգացնելու տեսակէտից մեծ կարևորութիւն ունեն ընդհանուր աշակերտական գրօսանքները. ուստի այդ տեսակ գրօսանքների նպատակարար և յաճախակի կազմակերպումը պէտք է համարել գաստիարակիչ միջոցներից մէկը: Սակայն այս տարի եղել են մէկ ընդհանուր և մի քանի հատ գաստարանական գրօսանքներ: Մեր աշակերտութեան համար գրօսանքներն առանձնապէս պէտք է համարել անհրաժեշտ երեսյթ, որովհետև նկատելի է խիստ գատապարտելի մի հակում: Փոխանակ դուրս դալու իրենց նեղ-անձնական շրջանակից և ապրելու ընդհանուրի հետ ընդհանուրի կեանքով՝ նրանք գրօսանքների ժամանակ էլ սիրում են առանձնանալ, առանձին սեզան կազմել, առանձին խաղեր կազմակերպել, կամ մեծ գժւարութիւններով կազմակերպած խաղերին երբեմն մասնակցել: Այս տգեղ հակման դէմ կուել են գրօսանքներին մասնակցող ուսուցիչները, բայց ձեռք առնելիք միջոցները պէտք է դարձնել տւելի սխաւամտիք:

Գպրոցական հանդէսներ այս տարի շատ քիչ ենք ունեցիլ՝ ընդամենը 3 հատ. մինչդեռ նրանց կրթիչ գերը շատ մեծ է: Ուստի ցանկալի է, որ գպրոցական հանդէսներ յաճախ կազմակերպեն. մասնաւոր պէտք է ուշք դարձնել, որ կազմակերպողն իրենք աշակերտները լինեն:

Գպրոցական գրազուամներն այս տարի եղել են կանոնաւոր և որեւէ արտակարգ հանգամանքի շնորհիւ չեն ընդհատուել: Արձակուրդ արել է միայն ընդունւած տօներին և երկու անգամ էլ պետական տօներին:

Այս տարի վերջին դասարանում և միւս գաստարաններում տւարուող առարկաներից եզան հարցաքննութիւններ: Մանկավարժական խորհուրդն ամէն կերպ աշխատել է, որ այդ հարցաքննութիւնները չունենան աշակերտին հողեպէս ու ֆիզիքապէս ճնշող որեւէ հանգամանք: Նպատակ է եղել մի տեսակ հաշիւ ներկայացնել և ապա մի անգամ ևս ամփոփել-ամբողջացնել դասաւանդածը:

Գպրոցն այս տարի հասարակութեանը ներկայացնում է ընթացատարների՝ թւով 9 հոգի՝ որոնք են. — Բարտեան Նազենիկ, Թաղէտեան Անն, Խաչատրեան Տիգրանուհի, Խոսրովեան Տիգրանուհի, Աղաբեան Փառանձեմ, Մականցեան Մարիամ, Յակոբեան Ալան, Սիմէոնեան Յակոբ և Քարամեան Մարիամ:

Քաղաքակրթական բարձր աստիճանի վրայ կանգնած մի ժողովրդի համար այսքան շրջանաւարտներ տալն այնքան էլ նշանակալից չէ. բայց մեզ համար մինչև անգամ մէկ հոգին էլ՝ երբ նա գալիս է ծառայելու մեր ազգային մշակոյթի բարձրացման գործին՝ արժէքաւոր է:

Ծանր գոհագոյթիւններով ազգային դպրոցներ ենք պահում և մեծ յոյսեր կապում այնտեղ սովորող մտաւոյ սերնդի հետ: Իսկ թէ որքան կարգարեան մեր յոյսերն, այդ ցոյց պիտի տան ապագայում իրանք-ընթացաւարտները:



*Բ. ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*ԹԷՀՐԱՆԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԵՐԿՍԵՌ ԳՊՐՈՅՆԵՐԻ*

*ՀՈՅԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ*

1914/15 ՏԱՐԵՂՔԱՆԻ.

1914/15 ուսումնական տարին ունեցել է հոգաբարձական երկու կազմ՝ մէկը ժամանակաւոր միւսը տեական:

Առաջին կազմի անդամներն էին՝ Գր. Յ. Ստեփանեան, Լեոն Քովանեան, Գեղամ Սարգսեան, Մեսրոպ Մինասեան, Յովհաննէս Բաղալ, Տ. Եւս Կարապետեան և Յովսէփ Բարայեան, որոնք ստանձնել էին վարչական գանազան պաշտօններ:

Այս կազմն, սկսած 1914-ի Յունիսից մինչև նոյն տարւոյ Հոկտեմբերի վերջն, ունեցել է 14 նիստ, որից բացակայել են. —

- Տ. Եւս Կարապետեան 9 անգամ
- Գ. Յովսէփ Բարայեան 8 ,,
- Գ. Յովհաննէս Բաղալ 8 ,, (Սեպտեմբերին հրաժարական էր աւել).
- Գ. Լեոն Քովանեան 4 ,, (Յ-ը քաղաքից բացակայ էր).
- Գ. Մեսրոպ Մինասեան 2 ,, (Հոկտեմբերին հրաժարական էր աւել).

Երկրորդ կազմի մէջ գանուգներն ունէին հետևեալ պաշտօնները. —

- Գր. Յ. Ստեփանեան — Նախագահ
- Գ. Զարարէ Յակոբեան — Քարտուղար
- Գ. Լեոն Քովանեան — Գանձապահ
- Գ. Ալէքսան Գալստեան — Ծախսարար-անտես
- Գ. Մելքոն Քարամեան — Գրողարան-Ընթերցարանի վերահսկիչ
- Գ Գեղամ Սարգսեան և Յովսէփ խան Դարախանեան

Երկրորդ կազմն սկսած 1914-ի Նոյեմբերից մինչև այս տարւոյ Մայիսի վերջն ունեցել է 23 նիստ, որից բացակայել են.—

Պ. Ալեքսան Գալստեան	8	բացակայ	1	ուշացում
Պ. Լեոն Քոպանեան	7	„	(5-ը հիւանդ)	
Յովսէփ խան Ղարախանեան	5	„	1	ուշացում
Պ. Զարարէ Յաղորեան	1	„	1	„
Գր. Յ. Ստեփանեան	1	„	—	
Պ. Գեղամ Սարգսեան	1	„	(հիւանդ)	

Այսպիսով երկու կազմերը միասին ունեցել են 37 նիստ ամբողջ ուսումնական տարւոյ ընթացքում:

Հոգաբարձութեան ամենակարևոր գործը և հոգսի ամենամեծ առարկան եղել է ամենից առաջ ուսուցչական կազմը: Պէտք է ասել, որ այդ կարևոր և պատասխանատու գործը կատարել է ժամանակաւոր կազմը:

Ինչպէս անցելու, նոյնպէս և այս տարի, տեսուչ և ուսուցիչներ հրաւիրելու խնդիրը մեր գլխացի ամենացատա կողմն է եղել: Անցեալներում յաճախ յիշել է այդ գործի զժւարութիւնները և զբանից առաջացած ոչ-ցանկալի հետեւանքները: Հոգաբարձութիւնը պէտք է աշխատէր նախ գլխացիների համար տեսուչ ձարել, որպէսզի վերջինս իր պատասխանատուութեամբ կողմէր ուսուցչական խումբը: Այս նպատակով Հոգաբարձութիւնը մի շարք զիմումներ է արել և թերթերում յայտարարութիւններ արել: Սկզբում յոյս կար, Թարբիզի գլխացի տեսուչ Պ. Պրոնեանին Թէհրան բերելու մտտին, բայց շուտով այդ յոյսը վերացաւ, որովհետեւ թարբիզցիները նրան պահեցին: Լրագրների մէջ աւած մեր յայտարարութեանց միայն մի արձագանք ստացուեց. սակայն առաջարկած նիւթական պայմանները մեզ համար ծանր լինելով շքնդունեցին: Այսպիսով տեսուչ ունենալու ջանքերն ապարդիւն անցան և Հոգաբարձութիւնը անսնելով, որ այդ խնդիրն իր ուզած ձևով չէ յաջողում, անմիջապէս սկսեց վարձել ուսուցիչներ մտածելով որ գոնէ ուսուցչի պակաս չունենայ ուսումնական տարին սկսելու: Բնական է, որ այդ իր գործը չլինելով, չունենալով բուսականաշափ կանգիզատներ և անձամբ շճանաշելով թեկնածուներին, Հոգաբարձութիւնն այս կամ այն յանձնարարութեամբ և կամ զիմումներն աչքի առաջ ունենալով պէտք է ուսուցիչ

վարձէր: Հետեանքն այն չէր լինելու ի հարկէ ինչ որ պէտք էր, և ուսուցչական խումբը, որքան էլ նրա անդամներն առանձին-առանձին գոհացուցիչ լինէին, իրրև մի համերաշխ ամբողջութիւն կազմել չէին կարող:

Ուսուցիչների մեծագոյն մասն արդէն վարձուած էր, բայց տեսուչ չէր ձարուած: Հոգաբարձութիւնը մտածեց աւագ ուսուցչով գոհանալ և այդ նպատակով մէկին հրաւիրել. այդ էլ չյաջողեց:

Գտներն արդէն սկսել էին և մի ամիս էլ անցել էր ուսումնական տարւանից երբ վերջապէս յաջողեց Թէհրանում ձարել տեսուչ մեր գլխացիների համար: Գարձիչ Վարդան Յովհաննիսեանն էր:

Տեսուչը թէև չունէր դուռ մանկավարժական կրթութիւն, և վարչական փորձառութիւն բայց նկատի ունենալով, որ նա ընդ ընդ ընդ ընդ կրթութիւն և բարի կամք — Հոգաբարձութիւնը պայմանաւորեց նրա հետ. մանաւանդ որ նա յանձն էր առնում գառուանդել մի շարք կարևոր և բաց մնացած դասեր, որոնց համար ուսուցիչ չէր ձարել: Նրա մի տարւոյ գործունէութիւնից յետոյ Հոգաբարձութիւնն այն եզրակացութեան եկաւ, որ իր ընարթութեան մէջ չէ սխալել և գլխացի դեկը նրան վստահել: Աչքաթագ շանելով նրա մի քանի պակասութիւնները, որոնք տարիների ընթացքում կվերանային շնորհիւ փորձառութեան, Հոգաբարձութիւնն միանգամայն գոհ է նրա ետանդուն, սիրով տարած գործից: Պէտք է ասել նաև, որ տեսուչն ստանում էր շատ համեստ վարձատրութիւն համեմատած նախանցեալ տարիների հետ և իւր պաշտօնն ստանձնեց միմիայն Հոգաբարձութեան և գլխացիներին օգնած լինելու նպատակով, որի համար և հրապարակով շնորհակալութիւն ենք յայտնում:

Այսպիսով ուսումնական տարւանից մի ամիս անց հազիւ հնարաւոր եղաւ կազմել լրիւ ուսուցչական խումբ:

Մինչև տեսուչ ունենալը Հոգաբարձութեան կողմից մէկն իրրև ներկայացուցիչ նախագահում էր Մանկավարժական ժողովներին, որով կապ էր պահում հոգաբարձական և մանկավարժական կողմերի մէջ:

Հոգաբարձութիւնն իրենից անկախ, մասնաւորապէս նիւթական սղութեան պատճառով կարողացել է միայն գլխացի միմիայն պահանջները գոհացնել:

Այս տարի մեր գլխացիներում չէ եղել վերակացու, որովհետեւ այդ պաշտօնի համար առանձնապէս մէկին պէտք էր վարձել: Այդ պաշտօնը կատարել են

ուսուցիչները, աշխատանքը բաժանելով իրենց մէջ:

2է եղել նաև մարմնամարզութեան ուսուցիչ: Հոգարարձու թիւեր ծրագրել էր ազատ խաղերի զարգացմանը նպաստել զպրոցներում, սակայն այդ ևս չյաջողեցաւ համապատասխան ղեկավարի բացակայութեան պատճառով:

Անցեալներում Մանկավարժական խորհրդի քարտուղարութիւնը կատարում էր ուսուցիչներին մէկը յատուկ վարձով: Այս տարի այդ պաշտօնը կատարել յօժարութեամբ յանձն առան ուսուցիչներին Գ. Գ. Ալեքսան և Վարդան Յովհաննիսեանները ձրիաբար, որի համար և շնորհակալութիւն ենք յայտնում իրենց:

Թուով էր, որ ուսումնական աարին անսայթաք մինչև վերջը կզնայ: Սակայն տարւայ վերջին ամիսներին ուսուցիչներին մէկը՝ պարսիկ միբղան՝ փոխուց, որովհետև զպրոցում պաշտօնավարելու յարմար չնկատուց: Ապա Տիկին Գերասիմեանն ընտանեկան պատճառներով հեռացաւ քաղաքից: Վերջումն էլ մի քանի օր զպրոցական տարեշրջանը փակելուց առաջ հեռացաւ տեսուչը, հայկական բանակին միանալու համար իբրև բժիշկ: Այս դէպքերը, որքան էլ արտաքուստ աննշան, այնուամենայնիւ ցանկալի չէին զպրոցական կեանքի համար:

Գալով ուսումնական մասին, պէտք է յիշել, որ Թէրանի զպրոցների ծրագրի փոփոխութիւնը և կեանքի պահանջներին յարմարեցնելը կրբոր նկատւած էր ղեռանցեալ տարւայ Ընդհանուր ժողովում: Սակայն այդ գործի համար ձեռնհաս անձերի պակասութեան պատճառով զպրոցների ծրագրը մնաց նոյնը:

Ծրագրային փոփոխութիւններն անհրաժեշտ են մեր զպրոցների համար՝ աւելի մեծ ղրական արդիւնք ստանալու և կեանքի պահանջներին համապատասխանող կերպարանք ապու համար մեր զպրոցում աւանդելիք զխաւթիւններին:

Մէկ անգամւայ անյաջողութեամբ պէտք չէ անշուշտ այս կարևոր խնդիրն աչքաթող անել: Մեր կարծիքով հոգարարձու թիւնն արմէն կերպ պէտք է ձգտէ իրազործել այդ ծրագիրը և զպրոցի մակերեսութը բարձրացնել աւելի յաջող արդիւնք ստանալու համար:

Ծրագրային փոփոխութիւնների մէջ յատուկ աւեղ էր բռնում նաև օտար լեզուներին զարկ տալու խնդիրը: Այս նպատակով հոգարարձու թիւնը մասնաւորապէս Ֆրանսերէն լեզուն զարկ տալու և թէ մեր զպրոցում գործնական զիակիրներ մտցնելու նպատակով, ուսուցիչ Գ. Գէորգ Ստեփանեանի հետ համաձայնութեան եկաւ, զպրոցական զատուանդութիւնից ղուրս երեկոյեան զտօրնթացներ բանա-

լու Ֆրանսերէն լեզուով, աւետարական զխաւթիւնների և հաշւապահութեան համար: Սակայն հասարակութեան և երիտասարդութեան կողմից հարկաւոր խրախուսանքը չգտնելով, այդ ձեռնարկն անյաջողութեան զատապարուեց:

Իւր գործունէութեան ընթացքում հոգարարձու թիւնն ուշադրութեան առարկան է եղել ոչ միայն այն խնդիրը թէ ինչ է աւանդում զպրոցում, այլ և թէ ինչպէս է աւանդում առարկան. ինչ է տալիս ուսուցիչը ծրագրին անցնելով և ինչպէս է իւրացնում աշակերտութիւնը ուսուցչից ստացածը:

Տարիների փորձը ցոյց է աւել, որ գտնելի են ուսուցիչներ, որոնք ծածկւած այդ բարձր անւան աակ շահագործել են ղէպի իրենց տածած վստահութիւնը և ոչինչ չեն աւել, կած աւել են շատ քիչ բան: Ազգիսով ուսուցչական կոչումը նման անձանց համար եղել է լսկ ապրուստ հայթհայթելու միջոց: Եթէ նկատի աւենանք թէ ինչպիսի պայմաններում է մեզ մօտ կատարում ուսուցիչների ընտրութիւնը, պէտք է ընդունել, որ նման թիւրիմացութիւններ կամ աւելի ճիշտ զժբախտութիւններ մեր զպրոցի համար հաւանական են միշտ:

Այս ամէնը նկատի աւենալով, այլ և այն սկզբունքը, որ ամէն գործի մէջ պէտք է լինի հաշւետւութիւն՝ պարտք և պահանջ, հոգարարձու թիւնն ղեռ անցեալ տարւանից աշխատեց մեր զպրոցներում կրկին մտցնել քննութիւնների սիստեմը, սկզբում լսկ աւարտական առարկաների համար միայն: Քննութիւնների վրայ նայելով իբրև հաշւետւութիւն թէ ուսուցչի և թէ աշակերտութեան կողմից, հոգարարձու թիւնս հեռու է աակաւին նրանց հեռանքին վճաական նշանակութիւն տալուց թէ ուսուցչի և թէ աշակերտութեան համար:

Քննութիւններ աւարտական առարկաների այս տարի կզան. և իբրև հեռանք մեղ համար կզու այն կրակացութիւնը, որ քննութիւններն անհրաժեշտ են:

Գասաւանդութիւնների յաջողութեան և օղտակարութեան մասին զաղափար կազմելու և աշակերտների սովորածները տարին մի քանի անգամ ամփոփելու համար, առաջարկեց եռամսեայ կրկնողութիւնների սիստեմը, բայց այդ առաջարկը չանցաւ Մանկավարժական ժողովի կողմից: Յիշեալ նպատակին հասնելու համար կարևոր նկատուց, որ հոգարարձուները մերթ ընդ մերթ զատերին յաճախեն: Հոգարարձուներից ոմանք այս տարի սրոչ շափով արել են այդ, սակայն զժբախտաբար պէտք է լսոստովանել, որ հոգարարձական կազմի անգամների

անհատական գործերն ու պարտականութիւնները չեն թող տեղ ցանկալի չափով յաճախել դատերին:

Նոգարարձութիւնն զպրոցի ներքին գործերին աւելի մօտից ծանօթանալու և ուսման գործը վարելու եղանակի մասին իր սրոշ տեսակէտերն իրագործելու խնդրում Մանկավարժական խորհրդի կողմից հարկաւոր չափով աջակցութիւն չէ գտել: Խորհուրդը մեզ երբեմն նոյն իսկ բոլորովին հակառակ արամադրութիւն է ցոյց տւել, օրինակ՝ քննութիւնների և եռամսեայ կրկնողութիւնների խընդրում: Նոգարարձութիւնը երբեմն տեղի է տւել, զպրոցական նորմալ կեանքի խանգարման առիթ չապառ համար:

Այս ամենի գլխաւոր պատճառը համարում ենք մի սրոշ սովորութեան կամ օրէնքների՝ բացակայութիւնը: Օրէնքներ, որոնք մի սահման սրոշէին հոգարարձական, անսշական և ուսուցչական պարտականութիւնների ու իրաւունքների միջև:

Երբեմն այս կամ այն խնդրի լուծումը կախած է եղել անձնական տրամադրութիւններից: Գիտակցելով վերոյիշեալ պատճառները, Նոգարարձութիւնը երբեմն խուսափել է իր իրաւունքներից օգտւելուց, յանուն զպրոցական կեանքի անդորրութեան: Այլ կարելի տեսել, որ միշտ հնարաւոր է խուսափել անխորժ ընդհարումներից, ուստի այդ բոլորի առաջն առնելու նպատակով, Նոգարարձութիւնը սրոշել էր մշակել զպրոցական մի ներքին կանոնադրութիւն, ընդհանուր գծերով սրոշելու համար զպրոցի հետ կապւած մարմինների և անհատների փոխյարաբերութիւնները, իրաւունքներն ու պարտականութիւնները: Առայժմ կազմւած է միայն տեսչի իրաւունքների և պարտականութիւնների վերաբերող կանոնադրութիւնը, որը լրանալիս կզրէ Ընդհանուր ժողովին ի հաւանութիւն:

Նոգարարձական ապագայ կազմի անելիքներից գլխաւորը պէտք է լինի յիշեալ կանոնադրութեան ամբողջական մշակումը, որը չափազանց կարևոր է:

Մի քանի խօսք ևս տանք զպրոցի առողջապահութեան, մաքրութեան և համազգեստի՝ խնդիրների մասին:

Գպրոցական առողջապահական ընդհանուր դրութեան մասին պէտք է տեսլ, որ քաղաքում „ժաղիկ“ հիւանդութիւնը աւարձւած լինելու պատճառով զիմել է Կառավարութեան սանիտարական խորհրդին, որն ուղարկելով իր բժիշկներին, աշակերտութեանը ծաղիկ են պատուաստել:

Նախորդ տարիներում Գր. Պետրոս Պետրոսեանը սիրայօժար տարւայ ընթացքում քննում էր աշակերտներին: Այս տարի այդ գործը կատարեց Տեսուչը — ինքը որպէս բժիշկ:

Գր. Յ. Ստեփանեանն էլ աշակերտները բերանների և ատամների մաքրութեան համար յաճախել է զպրոց և պէտք եղած խորհուրդները տւել է սաներին:

Գպրոցական մաքրութեան վրայ ուշադրութիւն դարձնելով ամառւայ ամիսներին նորուզել, ներկել են բոլոր սենեակները և նատարանները:

Մաքրութեան խնդրի և արտաքին բարեկարգութեան հետ կապւած է և համազգեստի խնդիրը, որը յաջողել է միայն մասամբ: Հասարակութեան ուշադրութիւնը գրաւած կլինի անշուշտ թէ որքան գեղեցիկ տպաւորութիւն է թողնում միօրինակ, պարզ և մաքուր համազգեստը: Բնական է, որ պէտք է աշխատել ընդհանրացնել և բոլոր աշակերտ-աշակերտուհիները համար պարտադիր դարձնել: Այդ խնդրում ծնողները պէտք է օգնեն Նոգարարձութեանը: Ծախքի տարրերութիւն և յաւելում չկայ, միայն բարև կամք է պէտք: Յուսով ենք, որ ծնողներն առաջիկայ տարում աւելի ուշադիր կլինեն այդ խնդրի նկատմամբ:

Համազգեստը պարտադիր դարձնելուն արդելք էր լինում սրոշ թւով սաների չքաւորութիւնը: Այգպիտիներին համազգեստ տալու նպատակով տեսուչը բանակցեց Արտաշէս խան Պատմադրեանի հետ, որը սիրայօժար յանձն առաւ մի առժամանակ շարաթական մի օր իր սինեմատօգրաֆի եկամտաւր դնել տեսչի տրամադրութեան տակ: Նաև մի խումբ նախկին ընթացաւարտներ յիշեալ նպատակի համար սինեմատօգրաֆային ներկայացման էին ձեռնարկել: Այս առիթու յայտնում ենք մեր շնորհակալիքը:

Նոգարարձութիւնը յայտ ունէր, որ համազգեստի համար կղած մի քանի անձանց խոտտումներն ի կատար ածւելով, կզիւրանար գործը: Սակայն այդ խոտտումները մնացին առկախ: Նոգարարձութիւնը իւր նեղ միջոցներից վճարեց համազգեստները վրայ կատարւած ծախքերի տարրերութիւնը մօտ 48 թուման:

Յուսով ենք, որ Թէհրանի ունեւոր գտան աւելի կմօտենայ աղքատ սաների համազգեստի հարցին և չի զրանալ թեթև և զոհարեութիւն անել յանուն զպրոցի բարեկեցութեան:

Առաջիկայ 1915/16 ուսումնական տարւայ վերաբերմամբ նկատի ունենալով՝

ա. կարող է պատահել, որ հարկաւոր թւով ուսուցիչներ դժւար ճարտեսներ կայ քաղաքական հանգամանքների պատճառով, և բ. դպրոցական մուտքերի մի մասը պակասեն՝ թոշակները կանոնաւոր չվճարելուց, Աւետանից ստանալիք նպատակը պարսից դրամի վերածելուց, կառավարական նպատակի չգանձելու և մասնաւոր մուտքերի հաւանական քշութեան պատճառով — Հոգաբարձութիւնս որոշել է, իբրև մի բացառիկ տարի՝ փակել Գարվաղա-Ղազվիների դպրոցը և Հասանաբազի դպրոցը հինգերորդը՝ քանի որ այս դասարանում աշակերտ չառ քիչ կայ:

Հոգաբարձութիւնը կխորհրդակցէ Գ.-Ղազվիների բնակիչ ծնողները հետ, այդ թաղի աշակերտներին Հասանաբազի դպրոցը յաճախելու յարմարութիւնների համար:

Տնտեսական-դրամական մասի վերաբերմամբ պէտք է ասել, որ Հոգաբարձութեանս վրայ դեռ ևս անցեալ տարւանից պարտականութիւն կար դրւած գանազան անձանց մօտ գանուած գումարները գանձել:

Մեզ յաջողեց միայն գանձել դրադարանների գումարը Գ. Յարութիւն Մարտիրոսեանից իւր տոկոսներով 1,553. 35

Եղբարք Աբրահամեաններից իրենց անցեալ պարտքի տոկոսները 1,700. —

Ինչ վերաբերում է Գ. Գ. Վահան Էմինեանի և Միսակ Անջելլօի պարտքին ու տոկոսներին, պէտք է ասել որ, առաջին վերաբերմամբ որոշ և դրական յաջողութիւն չունեցանք, հակառակ՝ մեր ջանքերի և երաշխաւոր Գ. Յ. Մարտիրոսեանի ձեռք առած միջոցների: Որոշ ուղղութեամբ բանակցութիւններ վարել ենք. սակայն տակաւին մեզ չէ յաջողել հարցը վերջացնել Գ. Էմինեանի յարուցած դժւարութեանց պատճառով:

Գ. Միսակ Անջելլօի պարտքի վերաբերմամբ խնդիրը պարզ չլինելով, մնում է տակաւին: Գ. Անջելլօն առարկում է, որ 300 թումանի պարտքը իրենը չէ այլ նախկին Կրթասիրաց ընկերութեանը. իսկ Կրթասիրաց անդամներն առարկում են, որ իրենց պարտքը ժամանակին գոցել է:

Մնում է խնդիրը պարզել: Իբրաւական տեսակէտով Հոգաբարձութիւնը Գ. Անջելլօի ստորագրութեամբ մուրհակ ունենալով, նրանից էլ պէտք է պահանջէ. և միմիայն թիւրիմացութեանց տեղի չտալու նպատակով սպասում է: Պէտք է Կրթասիրաց նախկին անդամները Գ. Միսակի հետ որքան կարելի է շուտով մի ժողով անեն և խնդիրը սլարդեն: Յուսով ենք, որ դպրոցի շահը նկատի ունենալով,

նրանք կաշխատեն այդ հարցը շուտով փակել:

Գորոցապատական չգանձուած գումարների շարքում պէտք է յիշել նաև Ադա Սէթ Ներսէսեանի նւիրած 10,000 թումանի մնացորդ դւան 32,556.95 գումարը: Այս գումարը իւր տոկոսներով պէտք է գանձել Նօսրաթ-էլ-Մամալէրից. և այդ բանը, նւիրողի կողմից, յանձնարարւած է անել Եղբարք Թումանեանների առևտրական տանը: Յուսով ենք, որ յիշեալ առևտրական տանը կաշխատէ ըստ կարելոյն շուտով գանձել այդ գումարը, որը բաւական կթեթեացնէր դժւարութեամբ ծայրը-ծայրին հասնող դպրոցական բիւջէն:

Մանկապարտէզի հարցը հետեւեալ վիճակումն է: Թէհրանի Հայ հասարակութեանը յայտնի է, որ Տիկին Անահիտ անցեալ տարի 4000 թուման խոստացել էր դպրոցին ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսնու-Եփրեմի՝ մանկապարտէզ շինելու համար:

Հոգաբարձութիւնս մի շարք ժողովների նիւթ է դարձրել յանուն Եփրեմի մանկապարտէզի շինութեան խնդիրը և վերջապէս եկել է հետեւեալ եզրակացութեան: Նկատի ունենալով, որ մի ընդհանուր դպրոցական շէնքի ծրագիր կայ, և յիշեալ մանկապարտէզն էլ պէտք է այդ ընդհանուր մեծ շինութեան մի մասը կազմէ, և, որ մանկապարտէզ պահելու համար առնուազն տարեկան 1500 թումանի ծախք է հարկաւոր, իսկ ներկայ նիւթական պայմանները չեն ներում նման ծախքերի տակ մտնել. ուստի մօտիկ ապագայում, մանկապարտէզ բանալու հնարաւորութիւն չկայ: Մի այլ նկատումն էլ այն է որ, եթէ ծախսը ծածկելու համար դրամ ճարի, դպրոցին կից նոր գնուած տունը շատ հեշտութեամբ կարելի է մանկապարտէզի վերածել, հետեւաբար, յիշեալ 4000 թումանն անտեղի է ներկայումս մի առանձին նոր շէնքի վրայ ծախսել: Բայց, որովհետեւ Տիկին Անահիտ համար ցանկալի էր մի յատուկ շէնք ունենալ իւր ամուսնու անւանը նւիրած, ուստի որոշեց, նոր գնուած տունը, որի արժէքը ճիշտ 4000 թուման է եղել, համարել Տ. Անահիտի դրամով առնուած, ՏիկինՉ համաձայնութեամբ:

Իբրև տեղեկութիւն պարտք ենք համարում յայտնել, որ յիշեալ տան կալւածագիրը նախ դրւած էր Հոգաբարձութեանս անդամ Գր. Յ. Ստեփանեանի անունով, յետոյ վերջինիս կողմից օրինական կարգով փոխանցեց դպրոցին:

Չինութիւնների մասին խօսելիս, ի դէպ, պէտք է յիշել նաև որ Գ. Յովհան-

նէս Բաղալը խոստացել էր մի ժողովարան շինել իւր ծախսով: Սակայն Հոգաբարձութիւնս քիչ առաջ յիշած գալրոցական ծրագրելիք շէնքի ամբողջութիւնը չխանգարելու նկատումներով դժուարացաւ մի առանձին տեղ ցոյց տալ նրան գալրոցի բակում. իսկ նոր դնած տան գրադարանի բակում եղած դեմինն էլ Պ. Բաղալին յարմար չլուաց և այսպիսով խնդիրը մնաց: Գուցէ ասպագայում Հոգաբարձութիւնը կարողանայ Պ. Բաղալի հետ համաձայնութեան գալ և օգուել նրա բարի ցանկութիւնից:

1914-ի աշնանը Կոզակները Բրիգադի հրամանատարի կողմից առաջարկ եղաւ գնելու գալրոցապատական այն տունը, որ հանգուցեալ Մարտիրոս խան Ամիր-Թումանը կառուցել է ի յիշատակ իւր գուտար Կատարինէ խանումի: Այս մասին Ընդհանուր ժողովից հարկաւոր թույլութիւն և կտակակտարանից Սկանդար խան Դաւիթխանեանի համաձայնութիւնն ստանալուց յետոյ արժէքի մասին բանակցութիւն սկսեց. սակայն խնդիրն հետեանք չստացաւ Հոգաբարձութիւնից անկախ պատճառներով:

Գալրոցական եկամուտների առթիւ, կարծում ենք, անսկզբ շինելը եթէ մի քանի խօսք էլ տալինք մեր գալրոցի մի այլ ցաւոտ կողմի մասին: Գա երեխաներին յաճախակի մէկ գալրոցից միւսը փոխադրելն է: Թէ որքան այս հանգամանքը վնասակար է սաների գաստիարակութեան և զարգացման համար, ասացուցելու կարիք չկայ: Եւ ցաւալին այն է, որ այդ երեւոյթը կատարուում է շատ անգամ գրամտկան հաշիւներից դրուած: Մեր հասարակութեան մէջ դեռ ևս շատ քչերն են ըմբռնել, թէ գաւակների ուսման համար լինելիք ծախսերից պէտք չէ խուսափել. ծախքեր, որոնք, պիտի գերադաս համարեն միւս բոլոր ծախքերից:

Չառ ծնողներ 1-2 տարւայ վճարը չտալու համար որդոցն ազգային գալրոցից հանում-տանում են օտար գալրոցներ: Եղել են դէպքեր, երբ ծնողներից ոմանք զանգատելով ազգատիկ վիճակից խնդրել են, որ իրանց գաւակները ձրի ընդունեն ազգային հաստատութեան մէջ. մինչդեռ նոյն ծնողներն իրանց միւս 1-2 երեխաներին օտար գալրոց են ուղարկում և այնտեղ տալիս են գալրոցական վըճարը: Եւ կամ մի երեխայ մի քանի տարի. ճրիտավարժ է մեղ մօտ. մի գեղեցիկ օր փոխադրում է նա օտար գալրոց և այնտեղ սկսում կանոնաւոր վճար տալ:

Ինչպէս հաշիւների մէջ կնկատէ ընթերցողը, գալրոցական 7000 թումանից

աւելի տարեկան ծախքից ծնողները վճարում են միայն 2000-ը. սակայն այս քանակն էլ լրիւ չէ գանձում և շարունակ ապառիկներ են մնում:

Թոշակների գանձումը հսկառակ Հոգաբարձութեանս ձեռք առած բոլոր միջոցների, սպասած յաջողութիւնը չէ ունեցել: Չէ կարելի ասել, որ չվճարողներն անկարող են վճարել, որովհետեւ Հոգաբարձութիւնը թոշակի և նրա վճարման համար ամէն տեսակ յարմարութիւններ տալիս է ծնողներին: Պէտք է եզրակացնել, որ պարտականութեան գիտակցութիւնը պակասում է ոմանց մէջ:

Հոգաբարձութեանը մտում է դաստական միջոցի դիմել, որը եթէ դարձեալ անհետեւանը մնայ, այն ժամանակ պէտք է հրապարակ հանել այլպիսիների անունները և թողնել ժողովրդի դատաստանին:

Նախատեսուած եկամուտներից չէ ստացւած և Պարօից Կառավարութեան 160 թումանի տարեկան նպաստը:

Թատերասիրաց Ընկերութեան երկու բաժանմունքները նախատեսուած 250-ից միայն 205 թուման են կարողացել տալ:

Բաւական մեծ գումար են կազմում պատահական եկամուտներն՝ այսպէս.—

Պ. Բաղդասար Աւագանից ստացւած է . . . . .	գուման	3000.
Պ. Ռուբէն Թումանեանից երաժշտական դորժիքների համար ,,		500.
Լուծւած,, նոր Թատերասիրաց ընկ. «-ից . . . . .		330.
Ս. Գէորգ եկեղեցուց . . . . .		300.
Ազբատ սաների համար նպաստներ ստացւել են. —		
Պ. Ալէքսան Աղայեանից . . . . .		100.
Պ. Ասատուր Արբաճանեանից . . . . .		100.
Պ. Արշակ Գրիգորեանից . . . . .		100.
Պ. Դաւիթ Գրիգորեանից . . . . .		100.
Պ. Կարապետ Արզարեանից . . . . .		100.
Պ. Համբարձում Հայրապետեանից . . . . .		100.
Պ. Ղազար Յարութիւնեանից . . . . .		100.
Դր. Յարութիւն Ստեփանեանից . . . . .		100.
Պ. Յովսէփ Միրզայեանից . . . . .		100.
Պ. Սերգէյ Տէր-Գէորգեանից . . . . .		100.

Պ. Վաղարշակ Ասլանեանից . . . . . դրամ 100.

Պ. Օննիկ Եղիազարեանից . . . . . ,, 100.

Հոգաբարձութիւնս իւր խորին շնորհակալութիւնն է յայանում բոլորին:

Ելքի բաժնում ամենից աչքի-զարնոց և արտակարգ գումարը նորոգութիւն-ներքի վրայ ծախսած 1088 թումանի գումարն է: Անցեալ տարւոյ ներկայացրած բիւզճեւում նոյն նպատակի համար միայն 400 էր նշանակւած. ուրեմն նախա-տեսածից 688 թումանով աւելի է եղել իսկական ծախքը: Պատճառն այն է, որ փոքր սահմաններում ծրագրւած նորոգութիւններն ընդարձակեցին և դեռ բո-լոր հարկաւոր նորոգութիւններն արւած չեն:

Քացառիկ և շնախատեսւած ծախսերի շարքում պէտք է հաշուել նաև անցեալ-ներում համայնական վարչութիւնից պարտք վերցրած 400-ից 220 թուման վե-րագործները: Այդ գումարն, ինչպէս յայտնի է, անցեալներում ծախուել է դրո-րոցների կարիքների համար:

Հոգաբարձութեանս բիւզճէի վրայ ծանրացած է նաև գրադարան-ընթերցա-րանի ծախսը: Տարիների փոքրերը ցոյց տւին, որ գանազան վարչութիւնների յանձնելով գրադարան-ընթերցարանն իրենց նպատակին չեն ծառայում: Այս երկրորդ տարին է, որ Հոգաբարձութիւնն այդ գործն էլ իր վրայ է տակը: Այդ հաստատութիւնների կարիքը Թէհրանի նման մի հայաշատ կեդրո-նի համար նոյնքան անհրաժեշտ է որքան և դպրոցը: Այլ մի գոհոգութեան առաջ կանգ չէ տանում Հոգաբարձութիւնը, հարկաւոր բարձրութեան հասցնելու համար գրադարան-ընթերցարանը: Յաւալի է միայն, որ հասարակութիւնը հար-կաւոր ուշադրութիւնը չէ դարձնում և շատ քչերն են յաճախում գրադարան-ըն-թերցարան: Եթէ այսպէս շարունակի Հոգաբարձութիւնը ցաւելով կարատաւորի փակել այդ հաստատութիւնները, որոնց պահպանութիւնը տարեկան մի հարիւր թումանի չափով դպրոցական բիւզճէի վրայ է ծանրանում, համարեա ապարդիւն:

Այդ հաստատութիւնների վերահսկողութիւնը երկու տարի շարունակ անում է Պ. Մելքոն Քարամեանը:

Ընդհանուր առմամբ, շնայած մօտ մի հազար թումանի արտաքոյ կարգի ծախսերին, Հոգաբարձութիւնս յոյս ունի տարին փակել առանց բացի: Այս հանգամանքն ի հարկէ բացառիկ է, որովհետև ծախսերի բաժնից ուժիկները և

ճանապարհածախսը նախատեսածից մօտ 900 թումանով պակաս են եղել քան անցեալներում: Գրա պատճառն էլ տեսչի վարձատրութեան, ճանապարհածախ-սերի և մի ուսուցչի՝ խնայողութիւնն է եղել:

Ազազայի համար ծրագիր և բիւզճէ կազմելու հոգաբարձութիւնը նկատի ունի անցեալ տարւոյ ներկայացրած բիւզճէն և մի բան էլ աւելի, որովհետև զիտակցելով մի հմուտ տեսչի կարիքը մեր դպրոցների համար, ոչ մի ծախքի առաջ կանգ չպէտք է առնել և յոյս ունենք, որ հասարակութիւնն էլ իւր ջերմ աջակցութիւնն աւելի լայն չափերով ցոյց կտայ՝ դպրոցը հարկաւոր բարձրու-թեան վրայ դնելու համար:

Մեր դպրոցները շատ կարիքներ ունեն, որոնց թւելը երկար կլինէր. բայց այդ բոլորի ճարը դրամն է: Եթէ մենք ուզում ենք լաւ դպրոց ունենալ, պէտք է և հարկաւոր չափով դրամ տանք: Ներկայ պատմական բոսթաներին մենք պէտք է լարենք մեր բոլոր նիւթական և բարոյական սյօթերը, որքան էլ գոհարբու-թիւն պահանջելու լինի մեզինից:

Մեր ապագան մեր մասաղ սերնդի զարգացման մէջն է: Ներկան պաշտպա-նելու ճիգերի ժամանակ շնորհանք նաև մեր ապագան, որը յուսով ենք աւելի բարձր և լուսաւոր պէտք է լինի քան ներկան է: Ուրեմն շինույնը մեր ջանքերը լուսագոյն ապագայ ունենալու համար:



Յ. ԳՈՐԾՈՒՆԵՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ ԴԱԴԱՐՆՅՐԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐ.

Ա. Դարվազա-Ղազվինի Դպրոցական Վարչութեան միամեայ գործունեութեան առթիւ տանք այդ „Վարչութեան“ ծագման պատմութիւնը:

Գրեցիներին գուցէ անյայտ բայց տեղացիներին յայտնի է, որ անցեալինքում Թէ՛հրանի հայերի մեծագոյն մասը գտնուում էր Դարվազա-Ղազվինի թաղում իր եկեղեցիով և դպրոցով միասին:

Տարիների ընթացքում, տեղափոխելով մեծ մասամբ, հայերը շինեցին հասանարագ թաղում մի նոր դպրոց, որի բաց գեանի մի մասն էլ նախատեսւած էր նոր եկեղեցու համար:

Հոսանքը մեծանալով հասանարագը դարձաւ ամենահայտատ թաղը Թէ՛հրանում: Միջանկեալ տեսնք, որ թէ՛և այդ հոսանքը շարունակւում է նաև մեր օրերում, այնուամենայնիւ տակաւին մնում են Դարվազա-Ղազվինում մի քանի տասնեակ ընտանիքներ շատ ցրիւ և իրարից բաւական հեռու:

Եւ որովհետև անտեսական պատճառով երկու թաղերում ևս նոյն ծրագրով և ծաւալով երկուսն էլ դպրոց պահել անկարելի էր, ուստի բնականօրէն հասանարագի դպրոցը դարձաւ „կեդրոնական“ այսինքն Յ բաժանմունքներով և Գ դասարաններով միասին: Իսկ Դ.-Ղազվինի դպրոցը յաճախող աշակերտութիւնը տարէց-տարի նւագեց. այնչափով որ, էթէ երեք տարի առաջ այդ քանակը հասնում էր 35-ի, այժմ 20 թիւն էլ հազիւ է ստացւում:

Բնական է, որ հոգարարձութիւնը պէտք է իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնէր կեդրոնական և միջնակարգ դարձող դպրոցի վրայ:

Գեւ ևս տարիներ առաջ հոգարարձութիւնը ծրագրել էր վաճառել Դ.-Ղազվինի դպրոցական շէնքը (բաղկացած 2 բակից և 10 սենեակից), և փոխարէնը նոյն թաղում վարձել մի փոքրիկ տուն նոյն տեղի աշակերտութեան համար: Հաշուելով մտտամբ այն անյարմար դրութեան հետ, որ առաջ էր գալիս դասարաշխման դժւարութիւնից և ուսուցիչների երթևեկելուց: (Գպրոցները  $\frac{3}{4}$  ժամայ ճանապարհով հեռու են իրարից):

Սակայն որովհետև համաձայն Հիմնական Կանոնադրի § 10-ի՝ „Ազգային շարժական և անշարժ գոյքեր գնել, ծախել կամ փոխանակել կարելի է միմիայն Ընդհանուր ժողովի թոյլատրութեամբ“, ուստի 1913-ին հրաւիրեց մի այդպիսի

ժողով բացատրութիւններ տալու և թոյլատրութիւն ստանալու կալւածքի վաճառման մասին:

Համայնական Վարչութեան այդ առթիւ աւած յայտարարութիւնը բաւական էր վրդովելու Դ.-Ղազվինում բնակեալ հայերից ամանց հանգիստը. և ինչ որ „թագային“ արժանապատուութեան և վիրատորանքի գոյն տալով դպրոցի պաշտպանութեան կամ վաճառման հարցին, ամէն միջոց գործ ղնելով խանգարեցին ի կատար ածել կալւածքի վաճառման համար Ընդհանուր ժողովի կայացրած վճիռը: Հակառակորդներն օգուեցին բոլոր միջոցներից անխտիր-սկսած Ս. Էջմիածնի Գիւանատան հովանաւորութիւնից մինչև Պարսից կրօնական օրէնքների-Չառիաթի տրամադրութիւնները:

Այդ առթիւ ընտրեց նաև երկու թաղերի ներկայացուցիչներից մի յանձնախումբ: Սա պիտի պարզէր թէ ինչպիսի եկամուտներ և գումարներ կան Ազգային դպրոցի անունով և թէ արդեօք չէր կարելի գտնել չորս-պատարանեան դպրոց պահել Դարվազա-Ղազվինում:

Այս սուսմնասիրութիւնից պարզեց միայն, որ ցանկութիւնը լաւ է, բայց դրամն է պակասում: Այլապէս էթէ զրամական ոյժերը երկու մասի բաժանեն, Թէ՛հրանի հայերն այլևս „միջնակարգ“ դպրոց պահելու հնար չպիտի ունենան:

Հաշուելով այն մտքի հետ, որ միջնակարգ դպրոցն անհրաժեշտ է, և որ այդպիսին պիտի լինի անպայման հասանարագի դպրոցը, Դարվազա-Ղազվինի „Վարչութիւնը“ միջոցներ ձեռք առաւ նոյն թաղի դպրոցը պահելու համար:

Չարժմանն ոյժ տեղին ազգային մարմինների հետ հին հաշիւներ ունեցող մարդիկ, այլ և այնպիսիները, որոնց հաճելի էր, կամայական և անպատասխանատու լինել հասարակական սրեւ ծառայութեան ղեկըրում:

Կարմեցաւ նոյն թաղի համար նաև առանձին „Թատերատիրաց խումբ“, նոյն դպրոցին դրամով նպաստելու համար:

Չարժման մէջ նախագահութիւնը պատկանում էր Նիկոլա Յովակիմեանին:

Մի տարի տեեց այդ գործունեութիւնը և Յովակիմեանի մահով դադարեց:

Հանգուցեալն իր հրաժեշտը տալիս հազիւ միայն կարողացաւ կտակել իր „ընկեր-հոգարարձուներին“ այն, որ էթէ նրանք ուզում են որեւէ ձևով յարգած լինել իր յիշատակը թո՛ղ հետեւն իր օրինակին-դուրս գան դպրոցական յարկի

տակից և զնան իրենց գործին: Կտակը կատարեցին:


Այս է բոլոր պատմութիւնը Դարվազա-Ղազվինի „Դպրոցական Վարչութեան“:

Գործունէութիւնը գազարեցնելուց յետոյ Համայնական Վարչութիւնը հետամուտ եղաւ ձեռք բերելու այդ „Վարչութեան“ գրասօր գործերը, հաշիւները, արձանագրութիւնները, մի խօսքով արխիւը: Սակայն ապարդիւն աշխատանք: Յայտնի չեղաւ թէ զրանք մում մօտ մնացին և սրտեղ են: Այնպէս որ իրաւամբ կարելի է ասել թէ Յովակիմեանի հետ „Դարվազա-Ղազվինի Դպրոցական Վարչութիւնն“ էլ կնքեց իր մահկանացուն առանց սրիէ յիշատակ թողնելու:



Բ. Պատանի Միութիւնը, որ տակաւին անցեալ տարի իր ուշացրած տեղեկագրի մէջ ակնարկել էր „Միութեան“ քայքայուած գրութեան մասին, այս տարեշրջանում չկարողացաւ վերակազմել: Ունեցած իրերը — գրքեր և զրամական հաշիւներ, Միութեան նախագահը յանձնել է Հ. Վարչութեան գիւանին:

„Միութիւնը“ թողել է գրամ կանխիկ և ապառիկ դրան 337.75. ընթերցանութեան անկագմ մանր գրքեր մօտ 20 հատ:



Գ. 1907 թիւին կազմուած „Նոր Թատերասիրաց Ընկերութիւնը“ այս տարեշրջանում ուղարկել էր Հ. Վարչութեանը մի արձանագրութիւն վեցամսեայ գործունէութեան և կազմալուծման մասին: Խումբն իր ունեցած 33 կանխիկ և 6 թուման ապառիկ գումարները դրել էր Ազգային Երկսեռ Դպրոցների Հոգաբարձութեան արամագրութեան տակ:



9. Ա Պ Ա Ռ Ի Կ Ն Ե Ր Ի Հ Ա Ր Յ Ը.

Նկատելի է որ ամէն տարի վարչութիւններն ու մարմիններն իրանց տարեվերջի հաշեփակի մէջ ապառիկներ են ցոյց տալիս: Այս մանր ապառիկների հարցի վերաբերմամբ Հ. Վարչութեան կարծիքը հետեւեալն է: Քանի որ.—

Ա. Այդ ապառիկները հաշեփակից յետոյ մնում են համարեա ընդմիշտ ապառիկ և տարիների ընթացքում կորչում են անհետ:

Բ. Թէև այդ ապառիկները շնչին-փոքրիկ գումարներ են և սակայն, այս այն մարդկանց անպատիժ մնալու պատճառով, մնում են անզանձելի:

Գ. Յաճախ զանազան ղէպքերում մարդիկ տոմսակներ են վերցնում ապառիկ և կամ ստորագրում են որիէ հանդանակութեան և յետոյ վճարել չեն ուզում:

Ուստի զրամական հաշիւների մէջ եղած այս կարգի ազեղ սովորութիւնների ղէմն առած լինելու համար Հ. Վարչութիւնը որոշել է առաջարկել Թէհրանի հայոց առաջիկայ Ընդհանուր Ժողովին, եթէ հաւանութիւն կարւէ, ապագայում հրապարակով անուն-անուն կարգալ բոլոր մարմինների հաշիւներում եղած ապառիկների մանրամասնութիւնը, և կրկնել ամէն տարի, մինչև որ մաքրուած կլինեն ապառիկ հաշիւները: (Քացառիկ ղէպքերը յարգելի են):



**Թ. ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ՆԻՒՐԱՏԻՈՒԹՅՈՒՆ.**

Հանգանակութիւնները Թէհրանի Հայ հասարակութեան համար սուփորական և պարբերական են եղել համարեա ամէն տարի. իսկ ներկայ տարեշրջանում հանգանակութիւնները կարիքն աւելի ևս հրամայական և պահանջկոտ է եղել:

Սակայն մեր հասարակութեան մէջ մի սրտշ դասակարգ միայն յօժարակամ մասնակցում է նւիրարերութիւններին և ի պատիւ, պէտք է ասել, որ ոչ մի դէպքում չէ խնայում իր լուման: Այն ինչ ճնշող մեծամասնութիւնը, որոնց մէջ շատ ու շատ ապահոված մարդիկ, համարեա միշտ անհազորդ են. մնում նիւթական և բարոյական գործակցութիւնից ազդային և հասարակական ասպարէզում:

Քանի որ խօսքը յատկապէս մեր օրերի մասին է, ասենք, որ միջազգային պատերազմի հէնց սկզբնական շրջանից ի վեր բազմազան միջոցներով և տարբեր նպատակներով կատարել են դրամական և հազուադէպի տասնապատիկ հանգանակութիւններ դանազան վարչութիւնների և անձանց ձեռնարկութեամբ յօդուած՝ Կարմիր-Խաչի, Աւարպատականի հայութեան, Կովկասեան հայ փախտական-զաղթականների, հայ կամաւորների, քաղաքիս հայ ազգատ ընտանիքների, պաշարեղէնի և այլն:

Միմիայն հանգանակուած գրամների ընդհանուր քանակը այս տարեշրջանում երեք հազար թումանից աւելի է. չհաշուած „Թէհրանի Եղբայրական Օգնութեան Կեդրոնական Մարմնի“ գործունէութիւնը, որի մասին յետոյ կխօսենք:



**1. ԱՐՉԱԼՈՅՍ ՍԵՒԻԿԵԱՆԻ ՅԻՉԱՏԱԿԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.**

Վաղամեռիկ ուսուցիչ Արչալոյս Սեիկեանի յիշատակը յաւերժացնելու համար նրա եղբրական վախճանից յետոյ (1913 Դեկտ.), համակրողների շրջանում ձեռնարկեց մի հանգանակութեան, և Ազգային զրադարանի մի բաժինը պիտի նըւիրէր „Արչալոյս“ անունը:

Այդ նպատակով հաւաքուած գումարը եղաւ միայն 66 թուման, որը տակաւին մնում է Հոգարարձութեան մօտ յարմար տաթիւ գործադրելու համար:

Սեիկեան ծնողները հանգուցեալի անեցած բոլոր գրքերը նոյնպէս յատկացրին „Արչալոյսի“ անուն զրադարանին:

Այնուհետև հանգուցեալի մայրը—Տ. Զուշանիկ Սեիկեանը՝ մի գրութեամբ աջակցութիւն էր խնդրել դրամական նպաստ տալու իր երկու փոքր սրբուց ուսման համար: Համայնական վարչութիւնը համակրանքով վերաբերեց այդ դիմումին և մի կոշով դիմեց Թէհրանի հայ հասարակութեանը օժանդակելու համար Տիկին Սեիկեանին: Այս հանգանակութեան գործը յանձն առաւ Պ. Հայկ Դուկասեանը, որը կարողացել է հանգանակել և փոխադրել Տ. Զուշանիկին-Տիկին ընդամէնը 682 դրան:

Պ. Դուկասեանն այդ հանգանակութեան մասին իր տւած զեկուցման մէջ գանգատուում է, որ Թէհրանի Հայ հասարակութիւնը „գործնականապէս չաջակցեց հանգանակութեանը և չյարգեց հանգուցեալի յիշատակը“:

Եթէ մասամբ իրաւացի է Պ. Դուկասեանի գանգատը, ապա ուրեմն իրաւացի պէտք է համարել և այն փաստը, որ Հ. Աարչութեան այդ կոշը, որը մի տեսրակի հետ յանձնուած էր Պ. Դուկասեանին, հասարակութեան շատ ու շատ անգամներին անձանթ է եղել. և այդ է պատճառը, որ հազիւ միայն մի 20 հոգի են մասնակցել հանգանակութեանը. այն ինչ նւիրատուութեան պատրաստակամ մարդկանց մի սուտար մաս անտեղեակ է մնացել Պ. Դուկասեանի յանձնառութիւնից:



2. Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն.

Համայնական Վարչութիւնն այս տարւոյ ընթացքում ունեցել է հետեւեալ նւիրատուութիւնը:


Պ. Զարարիտ Սարգսեանը մի նամակով իր հանդուցեալ Ղուկաս որդու Գրամմօֆօն ընկերութիւնից ստանալիք բաժին-գումարը յանձնել էր Հ. Վարչութեան կարգադրութեանը, որիէ բարեգործական նպատակի յատկացնելու համար ի յիշատակ հանգոցեալի անւան:

Հ. Վարչութեան կողմից ընտրւած յանձնախումբը, Գրամմօֆօն ընկերութեան միւս անդամ Պ. Համբարձում Հայրապետեանի հետ, եկել են մի համաձայնութեան, և որոշումն ու վճիռը երկուսեք ստորագրւած են:

Ըստ այդ համաձայնութեան հանդուցեալ Ղուկասի բաժինը ամբողջութեամբ ծախւած է Պ. Համբարձում Հայրապետեանին 1500 թումանով՝ գանձելի 3 նւագով՝ մի տարւոյ ընթացքում:

Պէտք է ասել նաև, որ յիշեալ գումարի դէմ տակաւին կան հանդուցեալի մի քանի անձնական պարտքերը: Այնպէս որ գուտ գումարը տակաւին վերջնականապէս յայտնի չէ:

Այնու ամենայնիւ Հ. Վարչութիւնն յայտնում է իր շնորհակալիքը Պ. Զարարիտ Սարգսեանին այս նւիրաբերութեան առթիւ:



Ժ. Հ Ա Մ Ի Յ Ն Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ի Թ Ե Ա Ն Յ Ե Ր Ա Բ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը  
Պ Ա Ր Մ Ի Կ Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Յ Տ.

1. Թ Ա Գ Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ս Օ Լ Թ Ա Ն Ա Տ Մ Է Ի Չ Ա Տ Ի.

Սօլթան Ահմէդ Չահի թագադրութեան առթիւ Պարսկաստանի մայրաքաղաքն ամաղջապէս տօնական պատրաստութիւնների մէջ էր: Համայնական Վարչութիւնն, իբրև Թէհրանի հայութեան ներկայացուցչական մարմին, պէտք է որիէ կերպով մասնակցելը երկրի Պետի թագադրութեան հանդէսներին: Այդ առթիւ կազմւած յանձնաժողովի վրայ պարտականութիւն էր գրւած, պատրաստել հայերէն և պարսկերէն լեզուներով մի շնորհատուր կան ուղերձ-ալբոմ: Չահին մատուցանելու համար:

Յանձնաժողովն իր ծախքերը պէտք է հողար հանգանակութեամբ: Ներկայացրած հաշիւներից պարզեց, որ ծախսել է ընդամէնը դւ. 1042.75: Համարեա հէնց այդքան էլ հանգանակել էր:

Պէտք է ակնարկել այտակ այն միջնադէպի մասին, որ թագադրութեան հանդէսի ժամանակ մեր ներկայացուցիչներն իրենցից անկախ պատճառով թիւրիմացութեամբ չէին կարողացել ներկայացնել ուղերձ-ալբոմը: Այդ միջնադէպը դրդեց բացատրութիւն ուղելու մինիստրական յանձնախմբից այն մասին, որ մի հպատակ համայնքի ներկայացուցիչները հարկատու չափով յարգանքի չեն արժանացել: Այդ առթիւ կամրագրւած բողոք-գրութեան էական կէտերն են. —

Ա ,,Ինչո՞ւ Հայոց ներկայացուցիչները չեն ընդունել:

Բ ,,Ինչո՞ւ չեն ընդունել Հայոց ուղերձն ու ալբոմը:

Գ ,,Ինչո՞ւ ,,Մէջիտը Զուրայը Մէյլի“ ում և պալատում Հայոց ներկայացուցիչները չեն հրաւիրւած եղել: Հայ հասարակութեան ներկայացուցիչներն այն մարդիկն են, որոնց բնարում է Թէհրանի Հայոց Համայնական Վարչութիւնը:

Դ ,,Ինչո՞ւ չեն հրաւիրւել այնպիսի մարդիկ: սրանք Պարսկաստանի Սահմանադրութեան համար քաջարար կոխներ են մղել: Ի վերջոյ աուած է, եթէ այդ գրութեանը մինչև մի շարտթ պատասխան չարւէ, այդ պիտի նշանակէ, որ Պարսիկ Կառավարութեան կողմից այդպիսի վարմունքը զիտատրեալ է եղել“:

Մեր այդ գրութեանն ի պատասխան բացատրութիւն արւեց, որ դէպքը անգի

է ունեցել թիւրիմացութեամբ և ոչ թէ հայ համայնքին վերաւորանք հասցնելու որեւէ միտումով: Եւ իբրև աղացոյց այդ խօսքերի, հրաւիրում էին Տ. Վարչութեանն, ուղարկել հայոց ներկայացուցիչներին թաղապետութեան օրանից մէկ ամիս յետոյ, Սալթանաթարաղ ամառանոցում, Ռամադան ծովի ամսից անմիջապէս յետոյ, Չափվալ ամսի 1-ի տօնին, ներկայանալ Չահին և մատուցանել ուզերձը: Ընդունելութիւնն այս անգամ Չահի մօտ եղել էր շատ սիրալիր: Բարձրագոյն Կառավարութեան՝ գէպի հայ տարրը տածած՝ յարդանքի և արժանապատուութեան հաւաստիացումներով համեմատ: Յատկապէս միջնադէպին առիթ տուց նախաբարները Չահի առաջ խօսել էին հայերի մասին մեծ գովեստով:

2. ՄԵՋԼԻՍԸ ԵՒ ՊԵՐՍՊԵՃԱՅԵՐԸ:

III ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւններին հայերի մասնակցութիւնն ուշացաւ այն պատճառով որ սկզբում նազմիէն (ստաիկանութիւնը) յայտարարել էր թէ ոչ-մուսուլման տարրերը չպէտք է ծառայեն իւր պաշտօնավայրերում: Այս յայտարարութիւնը վերաւորանք համարելով պարսկահապատակ հայութեան հասցէին, Տ. Վարչութիւնը մի կողմից քաղաքացիական իրաւահաստատութեան պահանջներ անելով Կառավարութեան մօտ, միւս կողմից ստիպւած զգաց զիմել պարսկահապատակ հայ շրջաններին ձեռնպահ մնալու ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւններին հարցում, մինչև որ Կառավարութիւնը յետ կվերցնէ իւր յայտարարութիւնը, որ յատկապէս հայերի գէմ էր ուղղւած:

Երկար բանակցութիւններից յետոյ, երբ արած հարցապնդումներին գոհացում արեց, Տ. Վարչութիւնը միջնադէպը հարթում համարելով, սկսեց զրազել ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւնների հարցով և մի նոր հրաւեր ուղարկեց շրջանների հայ համայնքներին մասնակցելու ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւններին աւելով հայ պատգամաւոր:

Ուրտիսութեամբ պէտք է յիշատակել, որ շրջաններն արձագանք աւելով Տ. Վարչութեանն, զրազեցան ընտրութիւններով:

Քեւտութեանց վրայ հսկող Կառավարութեան կողմից ընտրւած՝ հայ յանձնախմբի-անձուման նօզարի ունեցած փաստաթղթերի հիման վրայ, կարելի է ասել, որ հարաւային Պարսկաստանի հայերը մասնակցել են III ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւններին և աւել են քւէներ հետեւալ չափերով. —

Թէհրան . . . . .	230
Վանակ, Խորդին, Գարուս . . . . .	33
Ղարալան . . . . .	411
Մաղանդարան . . . . .	18
Համազան . . . . .	110
Սարգլար . . . . .	5
Արաղ-Սալթանարաղ . . . . .	733
Բարվաւի . . . . .	1674
Նոր-Ջուղա . . . . .	21

3235

որից 3214 ձայնով ընտրւած է հայոց Պատգամաւոր Պ. Յովսէփ Միրզայեան: Այսպէս ուրեմն հարաւային Պարսկաստանի հայութիւնը մասնակցում է III ՄԵՋԼԻՍԻ ընտրութիւններին աւելով միայն 3235 ձայն:

Ատրպատականի պատգամաւորի ընտրութեան մասին ոչինչ չգիտենք:

Իբրև ծանօթութիւն հարկ ենք համարում ակնարկել, որ Նոր-Ջուղայի քմահաճ ընտրութեան ձեն ահազին գժւարութիւն պատճառեց գործին: Այնտեղ կատարել է ,,երկաստիճան“ ընտրութիւն: Այն ինչ յայտնի է, որ ընտրութիւնները կատարւում էին արդէն յայտարարւած սրու օրէնքների հիման վրայ. յամենայն գէպս ուղղակի և ոչ երկաստիճան ընտրութեամբ: Այդ է պատճառը, որ Նոր-Ջուղան միայն ,,21“ քւէ է աւել:

Այսպէս թէ այնպէս յանձնախմբի կարծիքով, հետեւանքների ամբողջ պատասխանատուութիւնն այս անգամ մեր հայկական ընտրութիւնների վերաբերմամբ ընկնում է Նոր-Ջուղայի վրայ:

3. ,,ՀԱՅՈՅ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ՝ ՊԵՃՊԱՆՈՒԹԻՒՆԸ:

Այս տարեշրջանում Համայնական Վարչութեան և Պետական ատեանների միջև կատարւած զրազութեանց մէջ այս-այն ընտանեկան-ժառանգական-ամուսնական խնդիրների առիթով պարզեց հեղհեղէ, որ ներկայ պարսիկ կառավարական ատեաններն այլ ևս արամազիր չեն նախկին բարեհաճ վերաբերմունքը ցոյց աւել հայերին արած առանձնաշնորհումների վործադրութեանց

մէջ: Նոյնիսկ այնպիսի խնդիրներ, որոնք սկզբունքով պէտք է ենթարկուին հայ հոգևոր իշխանութեան իրաւասութեանը, — մի հանգամանք, որ հաստատուած էր պետական ֆարմաններով և կառավարչական պատասխանատու անձանց անուկց ստաբիլացում և կնքուած գրութիւններով. — այժմ խախտումն էր նկատուած այդ սկզբունքի և հայոց իրաւունքների սահմանափակման սկիզբն էր գրուած: Երբեմն նոյնիսկ միանգամայն անգլխակ ձեանալով առանձնաշնորհումների փաստին, հրաւիրում էին Համայնական Վարչութեանը պետական դատարաններում վճարելու այս կամ այն հարցը պարտական Չառխաթի բնդհանուր օրէնքների թեւադրութեամբ: Համայնական Վարչութիւնն իր հերթին մերժում էր կառավարութեանը հաճելի ձևով մօտենալ խնդիրներին և միշտ պնդում էր ձեռք բերած իրաւունքների գործադրութեան վրայ: Կարեւոր ենք համարում այստեղ յիշել բառացի այն հատուածներն այդ փաստաթղթերի, որտեղ շեշտուած են մեր իրաւունքների մասին. —

Ա. Հայոց ազգի ժառանգական խնդիրներն իրենց կրօնի օրինաց համաձայն պիտի վճարին:

Բ. Եթէ երկու կողմի բողոքարկուները հայ լինեն և օրինական (Չառ'ի) վճ ունենան, Ազգիկի (Արդարադատութեան) կողմից միջամտութիւն և բնդ-դիմութիւն չպէտք է լինի. որպէսզի վէճերը և պահանջները քննուին և լուծուին քրիստոնէական օրէնքների համաձայն:

Գ. Մէջիւրը հաղորդել է ներքին Գործոց նախարարութեանը՝ պատիրելու կառավարական բոլոր շրջաններին, հայոց ժառանգական խնդիրները, եթէ է ի գէտ ժառանգները բոլորն էլ հայ լինին, քննուին, լուծուին և վճարուին քրիստոնէական կրօնի կանոնների համաձայն:

Այս իրաւունքների վերստին որոշման և հաստատման խնդիրը սակայն մնում է ասկաւին առկա չ. Վարչութիւնից անկախ պատճառներով, որովհետեւ յայտնի է թէ մեր երկրի քաղաքականութիւնն ինչ որակ ունէր և ունի այժմ. մասնաւոր ինչպիսի արամադրութիւն և վերաբերութիւն կար գէտի հայ ատարը: Այսպիսի պայմաններում շատ պարզ է ցանկալի արդիւնքին հասնել ոչ մի կերպ հնարաւոր չէր: Ուստի յետաձգուած է սղատելով աւելի յարմար հանգամանքներում վերաբարձարձելու հայոց իրաւունքների հարցը:

Պէտք է ասել, որ բնդհանրապէս Կառավարութեան հետ ունեցած մեր խնդիր-

ները մնում էին ձգձգուած, անկերպարան և անվճար: Կառավարութեան տեսակէտերն անորոշ և երկրան. երբեմն ուշադիր մեր դիմումներին և երբեմն ոչ:

Տէնց այդ իսկ պատճառով մի քանի այլ խնդիրներ, յարուցուած այս ատրեշրջանում, երկար քաշքշելուց և ձգձգելուց յետոյ, կամ հողի կարելի է եղել մի կերպակացութեան յանդիւ և կամ խնդիրները մնացել են առկաի գրութեան մէջ:

4. ՀԱՅ ՕՂԵՎԱՃԱՌՆԵՐԻ ՀԱՐՅԸ.

Մեր իրականութեան մէջ համարեա ամէն ատրի էլ մէջտեղ է եկել հայ օղեվաճառների հարցը զանազան գունատրութեամբ: Բայց աւելի յաճախ իբրև հասոյթի մի աղբիւս՝ այդ հարցը շահագործել է պետական գանձարանի օղակին: Այս վերջին տեսակէտով է այս անգամ հրապարակ գալիս օղեվաճառութեան հարցը:

Յայտնի է, որ մեր երկիրը տակաւին հաստատուն որոշում կամ օրէնք ողելից ըմպելիքների վերաբերեալ չունի: Հետևաբար ամէն անգամ հարկահանութեան մի նոր սխաւեմը գործադրելով՝ իբրև փորձ՝ պատճառ է լինում, որ գործեալ բացէ այդ խնդիրը:

Անցեալներում միայն օղու համար էր հարկ վճարում. իսկ զինու փոխարէն խաղողի վրայ էր հարկ գրում: Այժմ խնդիր է յարուցել հարկ վերցնել նաև զինուց: Չատ պարզ է, որ նոր հարկի գործադրութիւնը պէտք է սկզբում բողոքներին, գժգոհութեանց և բնդհարումների առթիւ տար:

Այս անգամ յարուցուած հարցը գալիս է զբոսից-գաւառներից նոր-Չուրա-Սալահանից և Սուլթանարազ-Արազից:

Տ. Վարչութեան հարցապնդումներին ի պատասխան երկրի կեդրոնում-այստեղ բացատրութիւն են ապիս մեր ներկայացուցիչներից մէկին, մասնաւոր խօսակցութեան մէջ, թէ զինու համար հարկատրութեան օրէնքը նոր է, և իբրև փորձ գործադրութեան է գրում նախ գաւառներում. այն նկատումով, որ եթէ յաջողութիւն ունեցաւ ապա պիտի գործադրեն նոյն օրէնքը նաև այլ կեդրոններում:

Տ. Վարչութեան տեսակէտը՝ սղելից ըմպելիքներից հարկ վերցնելու մասին պարզ է, որ և բացատրուած է գաւառներին սղղուած գրութեանց մէջ: Նկատի

ունենալով, որ ողելից ըմպելիքների գործածութիւնն սկզբունքով հասարակական առողջութեան համար մի շատ վնասակար սովորութիւն է, ուստի Հ. Վարչութիւնը խորհուրդ էր տալիս՝ տայ այդ հարկերը, քանի որ այդ հարկերը օգեկանաւոր են իրանց գրականից չէին տալիս, այլ վճարում էր ի հաշիւ ողելից ըմպելիք գործածողների:

Հ. Վարչութիւնը հրաւիրելով տայ նոյն հարկերը, նկատի ունէր և մի այլ յարգելի հանգամանք: Այդ այն է որ այլօճօլային նոր կանոնադրութեան ամենավերջին՝ 11րդ յօդուածում, խոստում է լինում՝ „ակցիզային մուտքի 50% յատկացնել մեր երկրում հիւանդանոցների և կրթական հաստատութիւնների համար“:

Ահա այդ յօդուածն էլ աչքի առաջ ունենալով Հ. Վարչութիւնը խորհուրդ էր տալիս վճարել հարկը և ապա ըստ ժամանակին պահանջել §11-րդի գործադրութիւնը:

ԺԱ. ՄԻՋԱԶԵԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԵԵՅՈՒԹԻՒՆԸ  
ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ.

1914-ի ձմեռը ծագած ուսու-տաճիական կռիւների պատճառով աղէտներին ենթարկեց Ատրպատականի հայ ժողովուրդը: Զատերն ստիպւած հեռացան Թաւրիզից իսկ բաւականաչափ հայեր ապաստան գտան Ամերիկական հիւպատոսարանում: Պաշարի պակասութեան պատճառով Թաւրիզի Առաջնորդարանը Ալեքսան խան Թունեանի միջոցով Թէհրանի հայերի գրամական օգնութիւնն էր խնդրել:

Միևիթարական է յիշատակել այստեղ, որ սոյն տարւոյ Փետրւար ամսին փոխադրեց Ատրպատական 400 թումանի մի գումար: Առաջնորդարանն այդ առթիւ շնորհակալութիւն էր յայտնում բոլոր նւիրատուներին:

Հ. Վարչութիւնն էլ ունէր արամադրելի մի գումար Թէհրանի հայ ժողովրդի աղքատիկ գասակարգի „պաշարի“ համար:

Պարսիկ ասրբի ղէպի հայութիւնը տաժած աննպաստ արամադրութեանց պատճառով կազմեցաւ այստեղ մի յանձնախումբ, որ պիտի բանակցէր կառավարական բարձր ատեանների ներկայացուցիչների հետ, ցրելու համար ընդհանրապէս պարսիկ բոլոր շրջանների, ատեանների և մանաւանդ լրագրութեան յարուցած հարձանքը հայերի դէմ:

Մինիստրների հետ ունեցած անսակցութեանց միջոցին փոխադարձ բացատրութիւնների մէջ մեր պատգամատորներն ակնարկել են հայերի ղէպի Պարսկաստանն ունեցած հուսատարմութեան, արած ծառայութիւնների, և յատկապէս մօտիկ անցեալում այս երկրի Սահմանադրութեան համար տւած զոհերի մասին. և որ ոչ մի պատճառ չկայ որպէս զի հայերը թշնամական զիրք բռնած լինեն ղէպի պարսիկներն ու Պարսկաստանը:

Մինիստրներն էլ իրանց հերթին հանգստացնում են մեր պատգամատորներին փատահութիւն յայտնելով հայ ասրբին. յայտարարում են, որ Պարսիկ կառավարութեան պարտականութիւնն է հայերի կեանքը, գոյքը և պատիւը պաշտպանել ու ապահովել:

Պատգամատորները մինիստրների ուշադրութեանն են յանձնում նաև պարսիկ

լրագրութեան բռնած գիրքը գէպի հայերը:

Մեր պատգամատրոնքի պահանջներն ամփոփւած են հետեւոյ բռնաձեւերով:

1 Կառավարութիւնը պէտք է հարկ եղած միջոցները ձեռք առնել և զրոյարտիչ լուրերը հերքել:

2 Աղղերի համերաշխութիւնը խախտողները պէտք է ենթարկեն պատժի:

3 . . . . .

4 Երբ Կառավարութիւնը որեւէ աղբիւրից հայերի մասին հակասական լուրեր է ստանում, պէտք է անմիջապէս հայերին գիմէ բացատրութեան համար:

Մինիստրները խոտտանում են.—

1 Հարկ եղած միջոցները ձեռք առնել և զրոյարտիչ լուրերը հերքել:

2 Նազմիէին (Ոստիկանութեանը) պատիրել, որ այդպիսի լուրեր տարածողներին հատուկէ:

3 Հարկաւոր գէպում հրաւիրել հայոց ներկայացուցիչներին բացատրելու համար:

4 Տարածւած սուտ լուրերը Կառավարութեան կողմից թերթերում հերքել:

Պատգամատրութիւնը լուծւած չէ և տակաւին շարունակում է իր պաշտօնն ու գործունէութիւնը:

Պատգամատրութեան անդամներն են՝ Ալեքսան խան Թունեան, Մաթէոս խան Մելիքեան և Պ. Յովսէփ Միրզայեան:

Մի այլ առթիւ պատերազմական մինիստրի հրաւերով Տ. Վարչութեան անդամներից Արսէն խան Մարգարեան ներկայացել և բացատրութեան մէջ մանելով հերքել էր Թուրքից ստացւած Ատրպատականի հայերին զրոյարտող լուրերը:

Ընդհանրապէս պէտք է ասել, որ մեր պատգամատրութեանց տեսակցութիւնները բուսական աղղեցին պարսիկ հաստրակաց տրամադրութեան վրայ և հետզհետէ նախիկին լարւածութիւնն անցաւ: Մինիստրներն էլ իրանց խոտտաններէ 4-րդ կարեւոր կէտը իրագործեցին հերքումներ ազդարելով կիսապաշտօնական թերթերում: Միտժամանակ շատ յօդւածներ լոյս տեսան պարսիկ թերթերում հայերի արած պատճական ծառայութիւնների և արժանատի գործերի մասին զրուարտող սգով զրւած: Այդ յօդւածների ապագրութեան, և առհասարակ պարսիկ մամուլում հայանպատ թղթակցութեանց լոյս տեսնելու մէջ, կարեւոր մասնակցութիւն է ունեցել Մաթէոս խան Մելիքեանն, իր անձնական պատասխանատրութեամբ:

Ռուս-տաճկական պատերազմի հետեանքով հայ ժողովուրդը ենթարկեց բազմատեսակ աղէտների: Տան աշխատատուր ձեռքը պակասեց, շատ վայրերում հայ գիւղացին իր աշխատանքները դադարացրեց: Գաղթական-փախստականները և բազմաթիւ անպաշտպան որբերը լցեցան Կովկասեան մեծ ու փոքր կեղըրոնների հրապարակներն ու փողոցները:

Կարիքն ու թշուառութիւնը մեծ ծաւալ ստացաւ. օգնութեան պահանջն ազգակող ամենուրեք: Օգնութիւն ռայց կազմակերպւած, երկարատե օգնութիւն էր պէտք, հայութեան ցրւած մասերն առայժմ պատասարելու-պահպանելու համար, և ապա, երբ պատերազմը դադար կառնէր, հայ գեղջուկին հնարաւորութիւն արւէր, որ նա վերադառնար իր փարախը, շարունակէր վառ պահել իր օճախը և ծագկեցնէր վաթանը խաղաղ շինարարական աշխատանքով:

Այդպէս էր թեկադրում հայութեան ազգային շահը: Այդ նպատակով անա կազմակերպւում է Ս. Էջմիածնում Ամենայն հայոց Կաթողիկոսի հովանաւորութեամբ մի յանձնախումբ՝ „Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողով Եղբայրական Օգնութեան“: Յանձնաժողովը բաղկացած էր՝ Կովկասեան բոլոր հայաշատ կեղըրոններում այդ նպատակով կազմակերպւած՝ հայ մարմինների և վարչութիւնների ներկայացուցիչներից:

Թէհրանի հայոց համայնական Վարչութիւնն արձագանք տալով Ամենայն հայոց հայրապետի կոչին, հրաւիրեց տեղիս բոլոր վարչութիւններին և մարմիններին մի ներկայացուցչական յանձնաժողով կազմելու, ձեակերպելու և ուղղութիւն տալու համար մեր մասնակցութեան գործին այդ համազգային ձեռնարկութեան մէջ:

Յանձնաժողովն արդէն կազմակերպւած է և կոչւում է „Թէհրանի Եղբայրական Օգնութեան Կեղըրոնական Մարմին“: Սա անցել է գործի այս տարւայ Յունիս ամսից: Եղբայրական Օգնութիւնը ծրագրել է իր գործունէութիւնը մէկ տարւայ համար: Տուրքեր պէտք է հաւաքել ամսէ-ամիս: Մարմինը յոյս ունի, որ կարող է սուրքեր հաւաքել ամսական 500-ից մինչև 1000 թուման:



**ԺԲ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.**

Կենսական փորձերը ցոյց են տալիս, որ Համայնական Վարչութիւնը կոչւած է մի շատ կարեւոր դեր ունենալու, ոչ միայն լոկ տեղական՝ Թէհրանի Հայ ժողովրդի՝ շահերի տեսակէտից, այլ և ընդհանուր Պարսկահայութեան համար: Հ. Վարչութիւնը կոչւած է վառ պահելու և դարգացնելու համար պարսկահայերի ներքին ինքնավարութեան գաղափարը: Ապագայում այս Համայնական Վարչութիւնը պէտք է դառնայ համայն պարսկահայութեան ներկայացուցչական մարմինը, որի մէջ պիտի մտնեն պարսկահայ բոլոր կեդրոնների ներկայացուցիչ անդամները:

Ժամանակ է, որ Հ. Վարչութեան որեէ անդամն աւելի լուրջ վերաբերէ իր ստանձնած պաշտօնին. ժողովներից բացակայութեան դէպքերը հազարէկ երևոյթներ լինեն միայն:

Ժամանակ է, որ Թէհրանի Հայ հասարակութեան բոլոր խաւերն աւելի մօտենան իրանց ներկայացուցչական մարմնին և ամէն կերպ աջակցեն այդ մարմնի ուժեղանալուն:

